

ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՅԵՐԵՐՈՂ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



ԴԵՏԱՐԱՆ Թ 1 9 3 7

ՀՈՒՍՈՑ Թ
1-50

1005-10

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀեՍՀ Լուսավորության ժողովրդական կոմիտեի կողմից

491.99-8

Ս-50

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Կազմեցին՝

ՍԻՄԱԿ

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ Մ.

ՆԴԻՆՅԱՆ Գ.

Յերկրորդ զեռամշակված հրատարակություն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

31 JUL 2013



615
37

1. Յ Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր

Ծեր Սուլէյմանից ձեզ հազար վողջույն,
Ծաղկում ե կյանքը մեր, յերեխանե՛ր,
Ձեզ համար յերկրում նոր այգ ե բացվում,
Նոր խինդ ե բերում ձեզ, յերեխաներ:

Վանեցեք ձեզնից անպետք ծուլություն,
Յերգով դիմեցեք դուք որը արթուն.
Թող յեղնիկի պես արեւը խնդուն
Դիմաւորի ձեզ, ջա՛ն յերեխաներ:

Բաց ե գրքի պես՝ կյանքում ամեն ինչ.
Սովորեցեք դուք լող, վազք ու թռիչք.
Աստղերի ցոլքն ու ծովը հմայիչ,
Միշտ գրավել են ձեզ, յերեխանե՛ր:

Լայն ե յերկիրը մեր ու ընդարձակ,
Անհուն խինդ ունի, գիրք մեծաքանակ:
Կուգե՞ք ձեռք բերել. — Պետք ե շարունակ
Սովորեք անդուլ, իմ յերեխաներ:

Մեր հայրենիքում — դաբուն ե խնդուն,
Ձեզ սնուցանող յերկիրը սիրուն,
Թող փրթթի, դառնա ուժեղ, զվարթուն,
Ֆոլա ալմասի պես, յերեխաներ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Այգ — առավոտ, լուսաբաց:

Հմայիչ — գրավիչ, շատ գեղեցիկ:

Սնուցանող — կերակրող, մեծացնող:

Սարի լանջին, ժայռի տակ
Ջուր եր բխում սառնորակ
Ու ցրվելով խոտերում
Ի դուր ճահիճ եր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ
Շինեց հովիվն ու անուշ
Խաղ ասելով նա տարավ
Ջրեց հոտը իր ծարավ:

Պախրեն անցավ են սարից՝
Շողից հանած չոր լեզուն.
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,
Ապա նայեց նա հեռուն:

Անցվորն յեկավ տոթակեզ,
Սառն աղբյուրին վոր հասավ,
Գլխարկն առավ ու չոքեց՝
Խմեց, սիրտը հովացավ:

Ու տվավ իր որհնանքը
Անցավոր մաքուն են բարի.
«Բո չինողի որ-կյանքը
Ջրի նման յերկարի...»:

ԲԱՍԻՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գուշ — փոս՝ աղբյուրի առջև:
2. Տոթակեզ — տոթից, չողից այրված:
3. Պախրա — յեղջերու:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վքեր ոգավեցին այս աղբյուրից:
2. Ե՛լ ո՞վքեր կարող եյին ոգավել այս աղբյուրից:

Արտագրեցեք աղբյուրից ոգավելու առանձին դեպքերը՝ վո-
տանավորի բառերով (հոտը ջրելը, յեղջերույի ջուր խմելը և
այլն):

Մի ամառ, յերբ դեռ փոքր եյի, հյուր եյի զնա-
ցել քեռուս այգին:

Յես առաջին անգամն եյի լինում խաղողի այ-
գում. ամեն ինչ այդտեղ նոր եր ինձ համար ու հե-
տաքրքրական, — թե՛ խաղողի թփերը, թե՛ դեղձի ու
փշատի ծառերը, թե՛ հնձանը և թե՛ խաղող քաղելը:
Ամբողջ օրը, ամեն ինչ մոռացած, թափառում եյի
այգում, իսկ յերեկոյան հոգնած ու անուշ քնում
հնձանում:

— Այդ անպիտան վոգնին խաղող ե տաբել, — ա-
սաց քեռիս կնոջը՝ յերբ բոլորս միասին թեյ եյինք
խմում:

Վոգնին — խաղող... Յես վոգնի տեսել եյի,
բայց յերբեք չեյի լսել, վոր վոգնին խաղող պոկի:
Այդ խեղճ, անճարակ կենդանին, վոր շարունակ իր
փշե մուշտակում փաթաթված ընկած ե լինում մութ
ու ծածուկ տեղեր և հազիվ ե ման գալիս — ի՛նչպես
կարող ե նա խաղող քաղել:

— Գեռի՛, վոգնին ձեռք ունի՞, վոր խաղող պո-
կի՞, — հարցրի յես:

— Բանն ել հենց այն ե, վոր չունի ու պոկում ե.
մի որ նայիր, կտեսնես:

Յես սկսեցի փնտռել, հետևել, թե վո՛րտեղ են
ապրում վոգնիները, ինչպե՛ս են դուրս գալիս ու խա-
ղող տանում:

Ու մի յերկու օր զգուշութամբ թմբից-թումբ
անցնելով՝ նայում եյի թփերի արանքը, թփերի տակ,
ու վոգնի եյի փնտռում:

Առաջին օրը վոչինչ չտեսա, բայց հետևյալ օրը,
յերբ մի թփի մոտ նստած խաղող եյի ուտում, հան-
կարձ տարորինակ խչխչոց լսեցի. ինձ թվաց, թե ո՞ճ ե
տողում, ու մնացի անշարժ, աչքերս խշշոցի կողմը:

Ու ի՞նչ տեսա...

Վոզնի՛. բայց վոչ թե մենակ, այլ ճուտերով: Խոզի նման՝ յերեք փոքրիկ, փոքրիկ ձագերը յետևը գցած, ինչ-վոր բարակ ձայն հանելով, գալիս եր գլուխը փշե կծիկից հանած. նույնը արել էյին և ձագերը:

Գալիս եր նա թիերի առաջ կանգ առնելով ու վերև նայելով: Այդ ժամանակ կանգ էյին առնում և ձագերը ու տարորինակ ծվծվոցով նայում իրենց մոլոր:

Մայր վոզնին թիերին նայելով՝ շարունակում եր քայլել դեպի իմ կողմը:

Յես մտա թիերի արանքը, թագ կացա, վոր նա ինձ չտեսնի: Լսել էյի, վոր վոզնին մարդ տեսնելիս՝ կծիկ է դառնում ու անշարժանում:

Նա մի փոքր ել առաջ յեկավ ու կանգ առավ մի մեծ թիի թակ, վորի վողկույզները կախվել, հասել էյին գետնին:

Մայր վոզնին մոտեցավ այդ վողկույզներից մեկին ու տարորինակ մի ձայն հանեց:

Ճուտերը մոտեցան նրան:

Այդ ժամանակ մայրը մի փոքր բարձրացավ ու առաջին թաթերով սկսեց խաղողի հատիկները պոկել վողկույզներից ու թափել գետին:

Նա աշխատում եր յերկու թաթով. ամեն անգամ թաթը վողկույզին տալիս՝ հատիկներն ընկնում էյին գետին:

Յերբ մայրն զբաղված եր դրանով՝ ձագերը փորձում էյին բարձրանալ թիի վրա:

Շատ ծիծաղելի էյին այդ փշոտ փոքրիկներն իրենց անճարակ փորձերով. հազիվ բարձրանում էյին մի թիզ, յերկու թիզ, նորից ընկնում էյին գետնին: Ընկնելով՝ փորձում էյին դաբձյալ և նորից էյին ընկնում:

Իսկ մայր վոզնին յեռանդով շարունակում եր հա-

տիկները վողկույզներից թափել գետնին:

Յերբ բավական թափել եր, նա խոճկորի նման մի ձայն հանեց:

Ձագերը փշոտ գնդակների նման գլորվեցին դեպի մայրը:

Այդ ժամանակ մայր վոզնին թավալվեց գետնի վրա, այնտեղ, ուր խաղողի հատիկներն էյին թափված:

Թավալվեց ու վեր կացավ:

Հատիկները մեկ-մեկ ցցվել էյին նրա փշերին:

Վեր կենալով՝ նա առաջվա պես խոկացրեց:

Մնացած հատիկների վրա թավալվեցին ձագերը: Հատիկները ցցվեցին նրանց փշերի վրա, ու նրանք դեմնից կարծես մեծացան:

Յերբ յերեք ձագն ել հերթով թավալվեցին ու վեր կացան՝ նորից լավեց մայր վոզնու տարորինակ ձայնը:

Ու այդ ձայնը մի յերկու անգամ կրկնելով՝ նա յետ դարձավ յեկած ճանապարհով, ճուտերն ել նրա հետևից: Բոլորն ել խաղողով բեռնավորված էյին:

Այնքան հետաքրքրական ու տարորինակ եր այդ ամենը, վոր յես զարմացած նրանց էյի նայում:

Իսկ յերբ նրանք բավական հեռացան՝ վազեցի նրանց յետևից — մեկն ու մեկին բռնելու, կամ սպանելու, — նրանք արդեն թագնվել էյին:

3

Յերեկոյան, յերբ տեսածիս մասին պատմեցի քեռուս, նա չզարմացավ.

— Իհարկե, ասով, վոզնին այդպես ե...

Իսկ յերբ հայտնեցի, թե ուզում էյի նրանց սպանել, նա գլուխն որորեց.

— Այդպիսի բան չանե՛ս... Յեթե վոզնին չլինի, այգին ոճեւով կլցվի:

— Իսկ վոզնին ոճին ի՞նչ է անում վոր...

— Ի՞նչ է անո՞ւմ: Ոճերին վոջնչացնում է: Նա

ոձի պոչը բռնում ե ու գունդ ու կծիկ դալիս: Ոձը
թափահաբում ե իրեն, վոր պոչն աղաւի: Ձի աղաւ-
վում: Տեսնում ե չի աղատվում, սկսում ե խփել բը-
նողին: Այնքան ե խփում՝ արյունլի ա յե լինում՝ վոզ-
նու փչերից ու սատկում: Հապա՛... Վոգնին այդու
պահապան ե. դրա համար նրան չպետք ե սղանել:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հնձան — այն չենքը, վորտեղ խաղողից գինի յեն պատրաս-
տում:
2. Անհարակ — անողնական, խեղճ:
3. Մուշտակ — մորթե վերարկու, քուրք:
4. Վոզկույզ — խաղողի ճուլ:
5. Խոնկար — խողի ճուլ:

4. Զ Ա՛Ն, Ա՛Յ Լ ՈՒ Ս Ի Ն

Լուսինն յելավ են սարից,
Սարի բարձր կատարից,
Շեկլիկ-մեկլիկ յերեսով —
Փռվեց գետնին լույսի ծով.
— Զա՛ն, ա՛յ լուսին,
Զան քո լուսին,
Զա՛ն քո կլոր
Շեկ յերեսին:

Խավարն իսկույն չքացավ,
Ու ել գետնին չկացավ,
Լուսնի լուսից հալածված՝
Խոր ձորերի մեջ մնաց.
— Զա՛ն, ա՛յ լուսին,
Շեկլիկ լուսին,
Զա՛ն քո արծաթ
Կամար ուսին...

Բայց ամպերը մոլեգին
Նախանձեցին լուսնակին,
Յեւան յերկինք կապուտակ,
Լուսնին առան իրենց տակ.
— Զա՛ն, ա՛յ լուսին,
Խավարած լուսին,
Զա՛ն, կսպասենք
Մենք քո լուսին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մոլեգին — կատաղի:
2. Կամար — կիսաշրջան (աղեղ):

5. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցիչը շարադրություն տվեց գրելու և ասաց.
— Ամեն մեկդ ձեր կյանքից մի դեպք գրեցեք:
Յետևի նստարանին մի գանգրահեր յերեսա յեր
նստած — Գասպարյան ազգանունով: Գասպարյանը
չգիտեր, թե ինչ գրի: Նա կամաց հարցրեց իր հարե-
վան Աշխենին.
— Դու ի՞նչ պետք ե գրես, Աշխեն:
— Պետք ե գրեմ, թե ինչպես վախեցա, — պա-
տասխանեց Աշխենը:
Գասպարյանը հարցրեց իր մյուս կողմի հարևան
Հաբությունյան Լևոնին.
— Լևոն, դու ի՞նչ պետք ե գրես:
— Յե՞ս, յես ել պետք ե գրեմ՝ թե ինչպես վա-
խեցա, — պատասխանեց Լևոնը:
Բոլորն ել գրիչները վերցրին և սկսեցին գրել
իրենց կյանքից՝ ով ինչ ուզում եր:
Գասպարյանը չգիտեր ինչ գրի. մեկ սրան նայեց,
մեկ նրան և մի կտոր սրանից արտագրեց մի կտոր
նրանից: Ահա յուրաքանչյուրի գրած շարադրությու-
նը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱԽԵՅԱ

մի անգամ, ամառը, հարեան գյուղից մեզ մոտ ելին յեկել քեռիս ու իր կիւնը:

Յերեկոյան լեռ գնացի նրանց ուղեկցելու: Վերադառնալիս շտապում եյի, վորովհետև յերկուշաբթի լիք: Չեռքիս մի յերկար ձող կար:

Գյուղում արդեն բոլոր ճրագները հանգրեւ եյին: Յերբ մտեցա մեր տանը, տեսա, վոր դուռը փակ է: Սկսեցի դուռը ծեծել: Յերկու ձեռքով եյի խփում ձողը կռանս տակն եր. հանկարծ լսեցի, վոր յետև մեկը պտտվում է, իսկ խոտն ել շարժվում, խըշխըշում է: Մաստիկ վախեցա: Ինչքան ուժ ունեյի գոռացի ե դուռը թակեցի:

Մերոնք տնից դուրս թափվեցին: Պարզվեց, վոր խոտը խշխշացնողը իմ կռնատակի ձողըն է յեղել:

Աւելան Պետրոսյան

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գանգրահեր — խուճուճ մաղերով:
2. Ուղեկցել — հետը դնալ:

ԻՆՉՊԵՍ ՎԱԽԵՅԱ

Մենք փոքրիկ վառիկներ ունեյինք, նրանց հատիկներէյինք ուտեցնում:

Ուրախանում եյինք, վոր մեծանում են:

Մի առավոտ նոր եբ սկսել լուսանալ:

Հանկարծ լուսամուտի տակ մեկը սոսկալի կերպով խռապրի: Չարթնեցի, վախեցա, զարթեցրի յեղբորս: Յերկար ժամանակ չեյինք համարձակվում լուսամուտից ցած նստել. հետո նայեցինք, Բանից դուրս յեկա՛յ, վոր դա մեր փոքրիկ աքաղաղն եր յերգում: Դեռ «ծուղրուղու» կանչել չգիտեր ե միայն «ծկը՛րրը» եր անում:

Լ. Հարությունյան

ԻՆՉՊԵՍ ՎԱԽԵՅԱ ՅԵՍ

Մի անգամ ամառը հարեան գյուղից մեզ մոտ ելին յեկել քեռիս ու իր կիւնը: Նրանց հատիկներէյինք ուտեցնում. ուրախանում եյինք, վոր մեծանում են: Գիշերը լեռ ու յեղբայրս քնած եյինք հատակին:

Չեռքիս մի յերկար ձող կար: Չարթնեցի վախեցա, զարթեցրի յեղբորս: Դեռ «ծուղրուղու» կանչել չգիտեր ե միայն «ծկը՛րրը» եր անում:

Լ. Գապարյան



6. Տ Ե Ր-Ա Վ Ա Ն Ե Ս Ի Դ Պ Ր Ո Յ Ը

Տեր-Ավանեսը գյուղացի յեր, յեկել եր մեք քաղաքը, գրել կարդալ սովորել ե յեկեղեցում տիրացու դարձել: Իսկ թե հետո ինչպես եր քահանա դարձել, վոչ վոք չգիտեր: Գլխավորն այն եր, վոր ինքը հարկ չազ կարդալ գիտեր, ուսումնարան եր բաց արել ե դաս եր տալիս մեզ, ամեն մեկիցս վերցնելով ամիսը մի ուրբի:

Յե՛վ ի՞նչ դաս. «այբ, ժե, ճե, ոա, բեն, ինի» ե այլն:

Գեր դեմքով, սև, թանձր ե յերկար միրուքով մի մարդ եր տեր-Ավանեսը: Նրա ունքերը միշտ կիտված եյին, յերեսը թթված:

Յերկու բանում նա չատ յեռանդուն եր՝ ուտելում ե ծեծելում:

Ամենից ավելի սիրում եր խնձորի տոլմա ե

փախլալա: Ընկույզի հալվա ել եր սիրում, բայց ա-
վելի պակաս, քան ճուտով փլալը:

Մեր ծնողներն այդ բանը գիտեյին, ու կարող
եր, տերհորը բաժին եր ուղարկում:

Նա ծեծում եր մանավանդ այն աշակերտներին,
վոգոնց ծնողները չեյին կարողանում խնձորի տուրմա
կամ ընկույզի հալվա ուղարկել իրեն:

Ամենից շատ ծեծվում եր Շամշյանց Ավետը: Այն
եւ ասեմ, վոր դա մի վերին աստիճանի անհանգիստ
տղա յեր. շարունակ թռչկոտում եր, պարում, յեր-
գում: Յերբեմն դասամիջոցներին կանգնում եր ձեռ-
ների վրա, գլուխը դուրս եր բերում վոտների արան-
քով և ասում.

— Փի՛շ-փիշ, փի՛շ-փիշ:

Նա սիրում եր սրան-նրան խուտուտ տալ կամ
կմշտել: Հակառակի պես միշտ իմ կողքին եր նստում
և դասի ժամանակ շարունակ կմշտում եր ինձ:

Մի որ Ավետն ինձ այնպես պինդ կմշտեց, վոր
յես գոռացի.

— Վա՛յ, վա՛յ:

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Տեր-Ավանեսը,
յերկաք ճիպոտը բարձրացնելով:

— Ճանճը կծեց ախանջս, — պատասխանեցի յես:

— Ճանճի կծելուց կարելի՞ յե արջի պես գոռալ, —
կատաղեց տեր-Ավանեսը:

Բարեբախտաբար այդ որը մենք խնձորի տուրմա
ունեյինք և տեր-հայրն արդեն յուր բաժինն ստացեյ
եր. նա ինձ չծեծեց:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ուսյալ — սովորած:

2. Փախլալա — խնորհողների տեսակ:

Վաղ ժամանակ մի հայ շենում
Մի հարգեուր հարսն է լինում:
Նրա բերնից կեսուր-կեսուր
Չեյին լսել մի շունչ, մի բառ,
Չեյին տեսել շուրթը մի որ...
Եսպես խոնարհ ու հարգեուր:
Մի որ մենակ ողում նստած,
Իր ճոխ մաղերն արձակ թափած,
Ազատ, անփուլթ, սանրում, հյուսում,
Հետն ել ձենով յերգ եր ասում:

«Աշխարքը բանտ,

Մեջը անբախտ

Յես մի գերի անխնդում.

Սիրուն շոբեր,

Ջահիլ որեր

Ի՛նչ եմ անում ես բանտում:

Երնե՛կ ծախն,

Ճյուղքի միջին

Ծվլում ե, թրթռում,

Թռչում՝ սիրած

Ընկերն առած,

Ազա՛տ, կանա՛չ արտերում:

Ա՛խ սև ըլի,

Չքվի, փլի

Ծնված որը աղջկա,

Ցավ ու խնդում

Փակված սրտում,

Ծիծաղ չկա, ախ, չկա...»

Մին ել հանկարծ բացվեց դուռը,


Ու ներս մտավ ծեր կեսուրը:

— Հո՛, պո՛, պո՛, պո՛, կանչեց խեղճը,

Գետին պատռի՛, մտնեմ մեջը...

— Հոպոպ դառնաս,

Անամոթ հարս:
Մի տե՛ս, մի տե՛ս,
Գլուխը բաց,
Ազատ նստած՝
Վոնց ե կանչում,
Ձի ամաչում...
Լեզուդ լալկի,
Մաղդ թաղքի,
Գլխիդ կպչի
Սանրը միջի:
Ասավ-չասավ,
Մին ել տեսավ՝
Սանրը գլխին
Հարսն առաջին
Հոպոպ դառավ,
Յերդկից թռավ,
Ու վերացավ,
Վե՛ր, հեռացավ:
Են եր ու են.
Խեղճն են որեն
Հանդերն ընկած՝
Հոպոպ մնաց.
Միչտ ել են հին
Սանրը գլխին,
Չալի՛կ մալի՛կ,
Լեզուն լալիկ,
Անխոս ու լուռ,
Մոլո՛ր, տխուր:



Բայց յերբ հանկարծ
Միտն ե գալիս,
Վոր գլխաբաց
Յերդ ասելիս՝
Իր կեսուրը
Բացեց դուռը,

Վեր ե թռչում
Սրտատուփ
Ու դեռ ճչում.
— Հո՛ւ-պո՛ւպ... Հո՛ւ-պո՛ւպ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հարգեվոր — խոնարհ, պատիվ իմացող:
2. Անփույթ — անհոգ:
3. Կեսուր — հարսի ամուսնու մայրը:
4. Լալկի — համրանալ, մնջվել:
5. Թաղքի — իրար կպչել, թաղիք դառնալ:
6. Կեսառ — հարսի ամուսնու հայրը:

ՀԱՐՅԵՐ


1. Ո՞ւմ հետ ե համեմատում հարսն իրեն և ի՞նչ ե ասում:
2. Ի՞նչ ե ասում հարսը յերիտասարդ կնոջ վիճակի մասին:
3. Կեսուրն ի՞նչպես եր վերաբերվում հարսին:
4. Հ. Թումանյանի վո՞ր հեքիաթներն եք կարդացել:

1. Բացատրեցեք հետևյալ դարձվածքները:
ա) Ձեյին լսել մի շունչ, մի բառ:
բ) Ձեյին տեսել շուրթը մի որ:
գ) Յես մի դերի անխնդում:
Դտեք նման դարձվածքներ:
2. Նկարագրեցեք կեսուրի բնավորությունը:

Տ. Ջ Ր Ա Ն Յ Ք Ի Բ Ա Յ Ո Ւ Մ Ը

1

Այսօր հաղթության տոն ե:
Վոսկեձորի բոլոր գյուղերից, քաղաքից ավտոմո-
բիլներով, կառքերով, ձիերով, եչերով, վոաքով դա-
լիս են ու գալիս:
Բոլորն շտապում են դեպի ձորը:



Ամեն մեկն աշխատում է մոտ կանգնել դրոշակներով զարդարված պատվանդանին, վորի վրա ծաղիկների մեջ դրված է Լենինի կիսանդրին:

Ողբ թնդում է հարյուրավոր մարդկանց գոռում-գոչումով: Տարիներով չոր ու ցամաք ձորն այսօր պետք է հեղեղվի և ներքևի հսկայական, ճաքճքած հողը պիտի ծծի կենսատու հեղուկը:

Հանկարծ հեռվում լսվեց մի խուլ աղմուկ: Ձորի գլխին յերևացին մի քանի հոգի: Նրանք ձորն ելին իջնում, և նրանց առաջանալու հետ միասին ուժեղանում էին ուրախության աղաղակները: Ահա և բանվորները միացան իջնող խմբին ու խուռն բազմությունը ձեռների վրա բերեց ճարտարապետին ու վարպետին: Ներքևում իրար անցան, ծովի պես որորվեց ժողովուրդը և գրոհ տվեց դեպի ձորքը:

Թնդացին շրջակա լեռները:

Վարպետն ուղեց խոսել, բայց հուզմունքից վռչինչ չկարողացավ ասել և գրկելով ինժեներին՝ հուզված ձայնով ասաց:

— Ընկերներ, առանց խորհրդային իշխանության անկարող կլինեյինք այսքան դժվարություններ հաղթահարել: Առաջ հողն ու ջուրը մերը չէր, այլ աղաներինը: Կեցցե՛ք խորհրդային իշխանությունը, վոր հողն ու ջուրն աշխատավորին տվեց:

Վարպետի ձայնը խլացավ ծափերի, ուրախ բացականչությունների ու յերաժշտության հնչյունների տակ:

Խոսեցին մի շարք բանվորներ ու քաղաքից յեկած հյուրերը:

2

Ժամը 4-ն անց 15 րոպե՝ ողի մեջ սլացավ հրթիռը և պայթեց:

Յերաժշտությունը դադարեց:

— Բանա՛լ շլուզները, — ելեկտրոկայանի հեռախոսի միջից լսվեց ճարտարապետի հուզված, բայց ինքնավստահ ձայնը:

— Բանա՛լ շլուզները...

— Բանա՛լ շլուզները... բանա՛լ... ձայն տվին իրար շլուզների մոտ կանգնած բանվորները:

Հարյուրավոր մարդիկ շունչները պահած, լուռ, սրտատրոփ սպասում են: Բոլորի հայացքները հառած են ձորին, լարված ուշադրությամբ, գլուխները վեր, ամեն ինչ մոռացած՝ սպասում են: Ամեն մեկն աշխատում է շուտ տեսնել...

Մեկը բարձրաձայն ճչաց:

— Գե՛տը: Ձո՛ւրը:

Յեվ իսկույն, ձորի գլխից, պղտոր, փրփրադեղ առաջին ալիքն իրեն ցած նետեց և փշուր-փշուր յեղավ:

Առաջին ալիքին հետեւեց յերկրորդը, յերրորդը, և լայնաբերան ջրվեժն անընդհատ հոսանքով զարկեց ձորի կարծր հատակին, առաջ անցավ փրփրադեզ ու կատաղի, և ջրի փոշու մեջ փայլեց ծխածանը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Պատվանդան — շինած բարձրութիւն:
2. Կիսանդրի — կես արձան:
3. Կենսատու — կյանք տվող:
4. Գրոհ տալ — հարձակվել:
5. Շլյուզ — ջրի առջևը փակող, վեր բարձրացող և լճնող դռներ:

9. Ա Ռ Յ Ո Ւ Ծ Ն Ո Ւ Մ Ա Ր Դ Ը

Մի հզոր առյուծ նստել էր ճանապարհին: Ամեն տեսակ զազաններ գալիս էին և դողալով անցնում այդ ճանապարհով:

Առյուծը հարցրեց նրանց.

— Ինչո՞ւ յեք փախչում, այդ ո՞ւմ ահից եք զարհուրած փախչում:

Նրանք պատասխանեցին.

— Դու ել փախիր, վորովհետեւ ահա գալիս է մարդը:

Առյուծն ասաց.

— Ո՞վ է մարդը, ի՞նչ է նա, վորն է նրա ուժը և ի՞նչ կերպարանք ունի նա, վոր փախչում եք նրանից:

Նրանք պատասխանեցին.

— Կգա, քեզ կտեսնի և «վա՛յ» քո ուրին:

Ահա հանդից գալիս է մի հողազործ մարդ:

Առյուծն ասաց նրան.

— Մի՞թե դու յես այն մարդը, վոր փախցնում ես զազաններին:

Նա ասաց.

— Այո՛, յես եմ:

Առյուծն ասաց.

— Արի կովենք:

Մարդն ասաց.

— Լա՛վ, կովենք, բայց քո զենքերը քեզ վրա յեն, իսկ իմը՝ տանն են. արի նախ քեզ կապեմ, վորպէսզի չփախչես, մինչև յես դնամ, զենքերս վերցնեմ՝ գամ ու, ապա կովենք:

Առյուծն ասաց.

— Հիմա կապիր ինձ, շուտ դնա և յես դարձիր:

Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապեց կաղնի ծառին. մի մեծ փայտ կտրեց ծառից և սկսեց խփել առյուծին:

Առյուծը բացականչեց.

— Յեթե դու մարդն ես, ամբիւր ամուր ու անխնա խփիր իմ կողերին, վորովհետեւ իմ խելքին այդ է արժանի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հզոր — շատ ուժեղ:
2. Զարհուրել — սաստիկ վախենալ:

10. Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ

Վորսից վերադառնալիս՝ անց էլի կենում մի պալատեզի միջով: Շուռնա վազում էր իմ առջևից:

Նա հանկարծ իր քայլերը փոքրացրեց և սկսեց կամաց ու զգուշ առաջ դնալ. կարծես վորսի հոտ էր առել:

Յես նայեցի ու փոքր ինչ հեռու, ճամփի վրա տեսա մի փոքրիկ ճնճղուկ, վորի կտուցի շուրջը դեղին էր, իսկ գլուխն աղվամազով ծածկված: Նա ընկել էր բնից ու անշարժ պառկել էր, միայնակ ու անողնական, հազիվ դուրս յեկած փոքրիկ թևերը փռած:

Յերբ չունա ծանրաքայլ մոտենում եր նրան, հան-
կարծ մոտակա ծառի վրայից մի մեծ, սև կրծքով
ճնճղուկ, քարի պես ցած նետովեց, ընկավ ուղղակի
չան առաջը և հուսահատ ու ծղրտոցով մի յերկու
անգամ թռավ դեպի շան դունչը:

Նա հարձակվում եր, վոր փրկի, պահպանի ձա-
գին... Բայց նրա փոքրիկ մարմինը դողում եր սար-
սափից: Նրա ծղրտոցը կատաղի յեր: Նա ուժից ընկ-
նում եր. նա իրեն զոհում եր:

Ի՞նչ ահագին հրեշ պիտի յերևար նրա աչքին շու-
նը... Բայց և այնպես նա նստած մնալ չկարողացավ
բարձր ու անվտանգ ճյուղին...

Շունս կանգ առավ. յետ քաշվեց...

Յես շտապեցի շվարած շանս յետ կանչել և հեռա-
ցա՝ զգալով մեջս մի պատկառանք դեպի այդ փոքրիկ
թռչունը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Աղվամազ — փոքրիկ, քնքույշ փետուրներ:
2. Նետով — ուժով ընկնել:
3. Հրեշ — անճոռնի, այլանդակ, սարսափելի մե բան:
4. Շվարել — չլլվել, մոլորվել:
5. Պատկառամբ — հարգանք:

11. Մ Ո Ծ Ա Կ Ի Մ Ա Հ Ը

Ամալից խփեց հուր կայծակ,
Կաղնուց ընկավ մի մոծակ,
Մոծակն ընկավ կաղնու մոտ՝
Թե ու թիկունք արյունոտ:

Ճանճերն յեկան պըզգալով,
Տըզտըզալով, բըզգալով,

Յեղբոր վրա շատ լացին,
Աղի արցունք մաղեցին:

«Աղի՛ղ ախպեր, քա՛ջ մոծակ,
Ել չե՛ս թռչի թևարձակ.
Ա՛խ, խավարի մեր լույսը,
Կոտրվել ե քո ուսը:
Դու տանջվում ես չարաչար,
Ափսո՛ս, չունենք վոչ մի ճար»:

Մոծակն իրեն հավաքեց,
Նվազ ձայնով կտակեց.

— Իմ քուրիկներ աննման,
Փորեք դուք ինձ գերեզման,
Թաղեք կանաչ պուրակում,
Վորտեղ դուք եք նվազում:
Ամե՛ն, ամեն իրիկուն
Յերբ դուք գնաք դեպի տուն,
Իմ հորքուրներ, մորքուրներ,
Ըզրոսասեր քուրիկներ,
Անցեք, դարձեք իմ մոտով,
Ինձ հիշեցեք կարոտով:

Ճանճերը շատ լաց յեղան.
— Մեռա՛վ, — ասին, — քաջ տղան,
Վոչ թե չնչին մի ձագ եր,
Այլ մի կտրիճ մոծակ եր:

Ձմեռը մոտեցել էր. մենք դեռ վառելիք չունե-
լինք: Մայրս շարունակ ասում էր.

— Ա՛յ Սերոբ, ձմեռը յեկավ, ճար արա.



Աշունքվա մի ցուրտ որ, դեռ լույսը չբացված,
վեր կացա, կացինը գոտիս խրեցի, գնացի անտառ:

Գնացի մտա ծմակն ու հասա մի չորացած ծառի,
վոր վաղուց աչքադբել էյի: Առաջ դեռ մի քանի չոր
փետ, ցախ հավաքեցի, հետո ել կացինն առա ու
սկսեցի այդ չորացած ծառը կտրել՝ թրխկ-հա-թրխկ,
թրխկ-հա-թրխկ...

Կտրում եմ այսպես՝ քափ ու քրտինք մտած:
Հանկարծ այդ թունդ ժամանակ մեկը սուս ու փուս
փաթաթվում է մեջքիս ու յետ քաշում ինձ: Ինձ հետ
միասին փայտ կտրելու էյին գալու մեր մի
քանի կոլտնտեսականները: Կարծեցի ինձ փաթաթ-
վողն ընկերս է — կատակ է անում: Բայց ես
վոնց յեկավ, վոր ձայնը չլսեցի: Մեկ ել մտածում եմ՝
ինչո՞ւ յե այսպես մեջքս բռնել ու ձայն չի հանում:

Ձարմանալի յեր... Բայց մեկ ել աչքս ցած գցեմ —
ի՛նչ տեսնեմ... մեջքովս պատ տվածը մարդու ձեռ-
ներ չեն...

Արջի թաթեր...

Այս անգամ ջանս դող ընկավ: Վո՛նց թե. իմ
մահն ել արջով պիտի լինե՞ր, — մտածում եմ, ու
ահից չեմ իմանում՝ ինչ անեմ. չարժվեմ — ավելի
վատ, չչարժվեմ — մինչև յե՞րբ: Արջի շունչն արդեն
ուսս տաքացնում էր: Լսել եյի, վոր արջը կենդանի
մաբդ չի ուտում. — թաղում — հոտեցնում և հետո յե
ուտում. ուրեմն, ասում եմ, դեռ հույս կա: Մեկ ել
մտածում եմ — իսկույն չի ուտի, բայց յեթե հակա-
ռակեմ, կարող ե կծոտել, կարող ե ջարդել... Ու
փայտացել եմ կացինը ձեռիս...

Մեկ ել վոր յետ չնայեցի — տեսնեմ սա բերանը
բաց ինձ է նայում. ահագին բերանը վոր տեսա, ավե-
լի վախեցա: Ի՞նչ անեմ, մտածում եմ — սուս մեռած
ձևանամ... Մեկ ել, վոնց վոր մեկն ասի, — ել ի՞նչ
ես սպասում, հնար ունես՝ տես: Միտքս հանկարծ մի
բան ընկավ. կացնի կոթը կամաց տարա դեպի ուսս
և ուժով խրեցի բերանը... առաջ դեռ կամաց, վախե-
նալով, ինքս ել չիմացա վոնց, հետո մի անգամից
հուպ տվի — արջը ղլղլացրեց ու մեջքս թողեց...
Յես ինձ գցեցի ցած. մեկ ել վոր յետ նայեցի, տեսնեմ
դա յետի թաթերի վրա կանգնել է՝ դունչը վեր տըն-
կած, կացինը բերանում... զազազած նայում է ինձ.
ուզում է վրա պրծնի, բայց չի կարողանում կռանա,
կացնի ահագին կոթը խրվել էր կոկորդը, վիզը չէր
կարում կռացնի. մենակ այն եր անում, վոր գլուխը
տարուբերում էր, վոր կացինը բերանից դուրս հա-
ներ, բայց կացինը դուրս չէր գալիս...

Մի քանի րոպե նա ինձ եր նայում, յես՝ նրան:

Հետո փորձեց գոռալ ու դեպի ինձ գալ. յես վախից ծառի յետևն անցա: Բայց այդ ել գուր եր. արջը մի յերկու վոտ փոխեց յետևի վոտներով ու ելի կանգնեց, գլուխը թափահարեց: Ինչպես յերևում է՝ կացինը շատ եր նեղում... այդ վոր տեսա, սրտապնդեցի: Մի փայտ վերցրի ու առ հա քեզ — տվի դրա գլուխին... Բայց նա, կացինը բերանին, դուռնչը վեր տընկած, յեկավ դեպի ինձ: Հետո՝ նորից զլլացրեց ու կանգնեց, գլուխը թափահարեց:

Յես կրկին վերցրի փայտը, վոր խփեմ. նա իրեն գցեց ցած, գլորվեց: Գլորվեց մի քիչ տեղ ու նորից կանգնեց, թաթով կացինը բռնեց: Շարժում է մին գես, մին դեն: Չեղավ. դուրս չեկավ. շատ եր պինդ ու խոր:

Յես հեռու, ծառի յետևը կանգնած՝ նայում եմ ու ինքս ինձ ծիծաղում:

— Ա՛յ քեզ, — ասում եմ, — ուղում եյիր ինձ ու տե՞ր. հիմի կե՛ր...

Մեկ ել մտածեցի, թե լա՛վ, յես ազատվեցի, հապա կացի՞նս. ինչո՞վ պիտի փայտ կտրեմ:

Առանց յերկար մտածելու՝ վազեցի տուն, տանից հրացանս տարա ու արջին տեղն ու տեղը...

Մորթին բերի տուն:

Իսկ կացինը... հանեցի մեծ չարչարանքով:

13. Վ Ա Ն Կ Ա

1

(Անցյալից)

Վանկա Ժուկովը, իննը տարեկան մի տղա, վորին յերեք ամիս առաջ տվել էյին իբրև աշկերտ կոչկալար Ալլախինի մոտ, նոր տարվա նախընթաց գիշերը չեր պառկում քնելու: Սպասեց, մինչև տանտերերն ու աշկերտները հյուր գնացին, նա վերցրեց տանտիրոջ

պահարանից թանաքի սրվակը, ժանգոտած գրչածայրով գրչակոթը և դնելով իր առջև թղթի մի ձմլված թերթ, սկսեց գրել:

Թուղթը դրած եր սեղանին, իսկ Վանկան ծունկ եր չոքել նստարանի առջև:

«Սիրելի պապիկ, Կոնստանտին Մակարիչ, — գրում եր նա. — Ահա գրում եմ քեզ նամակ: Շնորհավոր ծնունդ, ցանկանում եմ քեզ ամեն ինչ: Յես վոչ հայր ունեմ և վոչ մայր, միայն դու յես մնացել»:

Վանկան աչքերը դարձրեց մութ լուսամուտին, վորի մեջ յերևում եր մոմի արտացոլումը և պարզ պատկերացրեց իր պապ Կոնստանտին Մակարիչին, վոր ծառայում եր աղայի մոտ՝ իբրև գիշերային պահակ: Յերեկը նա քնում եր ծառաների խոհանոցում, իսկ գիշերը, լայնարձակ քուրքի մեջ փաթաթված ման եր գալիս ագարակի շուրջը և թրխկթրխկացնում թակիչը: Նրա յետևից, գլուխը կախ գցած, քայլում է պառավ Կաշտանկան:

Հիմա, յերևի, պապը կանգնած է դարպասի մոտ, աչքերը կկոցած նայում է գյուղական յեկեղեցու վառ կարմիր լուսամուտներին և գվարձախոսում է ծառայող տղամարդկանց և կանանց հետ: Նրա թակիչը կապված է գոտուց: Նա ձեռքերը խփում է իրար և կուչ է գալիս ցրտից: Գիշերը մութ է, բայց յերևում են ամբողջ գյուղն իր սպիտակ տներով, յեղյա՝ մով արծաթագոծված ծառերը, ձյունի հյուսերը:

Վանկան հոգոց հանեց, թաթախեց գրիչը թանաքի մեջ և շարունակեց գրել:

«Իսկ յերեկ ինձ մի լավ դնքսեցին: Վարպետը մագերիցս բռնած քաշ տվեց ինձ բակն ու լավ ուտացրեց դայիչով՝ նրա համար, վոր յես նրանց յերեսին որորում էյի ու ել չիմացա, թե վոնց քնել էյի: Իսկ ես չաբթին աղջիկ-պարոնն ինձ ձուկը տվեց, վոր մաքրեմ, յես պոչից սկսեցի մաքրել, նա ել վերցրեց ձուկն ու ես ձկանը խփեց իմ դնչին: Աշկերտները ձեռ

են առնում ինձ, ուղարկում են գինեատուն, վոր արաղ առնեմ և ստիպում են գողանալ տիրոջս վարունգները, տերս ել ծեծում ե սրտի ուղածին պես: Իսկ ուտելու բան ել չկա: Առավոտը տալիս են մի քիչ հաց, ճաշին քաշովից-բանից և յերեկոյան ել՝ ելի հաց, իսկ թե՛ կամ թե՛ կերակուր, իրենք տանտերերն են խժռում: Ինձ ել ստիպում են, վոր հաշտում քնեմ, հենց վոր նրանց յերեսեն ել լաց լինի, ել իսկի չեմ քնում, յես եմ որորոցն որորում: Սիրելի պապիկ, տար ինձ եստեղից գյուղ, ել իսկի ճար ու հնար չունեմ... Կարոտով բարևս քեզ, վոտքիդ հողն ընեմ և մինչև մահս կաղոթեմ, տար ինձ եստեղից, թե չե կմեռնեմ...»:

Վանկան ծոմոեց բերանը, տրորեց աչքերն իր սև բուռնցքներով ու հեծկլտաց:

«Յես քեզ համար թուլթուն կտրորեմ,— շարունակեց նա,— իսկ թե վոր մի բան յեղավ, դնքսիր ինձ, վոնց վոր կուզես: Պապիկ ջան, ել ճար-հնար չկա, մահ ե իսկական: Ուզեցի վոտով փախչեմ գյուղը, համա կոշիկ չկա, ցրտից եմ վախենում: Իսկ վոր մեծացա, ես բանի համար քեզ կկերակրեմ ու չեմ թողնի վոր մեկը քեզ դիպչի...»

«Պապի ջան, յերբ աղաների տանը տոնածառ լինի նվերներով, վերցրու ինձ համար մի վոսկեջրած ընկույզ ու իմ կանաչ սնդուկի մեջ դիր: Ուզիր որիորդ Ոլգայից, ասա՝ Վանկայի համար ե»:

2

Վանկան ծոմոեց բերանը, տրորեց աչքերն իր սամուտին: Նա հիշեց, վոր աղաների համար միշտ պապն եր գնում անտառ տոնածառ բերելու և իր հետ տանում եր իր թոռին: Ի՞նչ ուրախ ժամանակ եր: Պապն ել եր ճքճքում, սառնամանիքն ել եր ճքճքում, և, նրանց աչք տալով, Վանկան ել եր ճքճքում: Պա-

տահում եր, վոր նախ քան տոնածառը կտրելը, պապը ծխում եր ծխամորճը, յերկար քաշում եր քթախոտը, ու ծիծաղում մրսած Վանկուշայի վրա...

Կտրած տոնածառը պապը քաշ եր տալիս աղայի տունը, իսկ ինտեղ սկսում եյին զարդարել ծառը... Ամենից շատ չարճարվում եր որիորդ Ոլգան, Վանկայի սիրելին: Յերբ դեռ կենդանի յեր Վանկայի մայրը՝ Պելագեյան և ծառայում եր աղաների մոտ իբրև աղախին, Ոլգան կերակրում եր նրան շաքարեղենով և պարապ ժամանակը սովորեցրեց նրան կարգալ, գրել, հաշվել մինչև հարյուրը և նույնիսկ կարգին պարել: Յերբ Պելագեյան մեռավ, վորբ Վանկային տարան ծառաների խոհանոցը՝ պապի մոտ, իսկ խոհանոցից քաղաք, կոշկակար Ալյախինի մոտ:

«Աբի եստեղ, պապի ջան,— շարունակեց Վանկան,— աղաչում եմ, տար ինձ եստեղից: Խղճա դու ինձ, թշվառ վորբիս, թե չե ինձ բոլորը ծեծում են, իսկ յես սոված եմ, ենպես ել ուտել եմ ուզում, ենպես ել ճանճրալի յե եստեղ, ել ասելու չի, միշտ լաց եմ լինում: Են որն ել վարպետը կաղապարով գլխիս խփեց ենպես, վոր վեր ընկա ու հազիվ խելքս գլուխս յեկավ: Իմ կյանքը հո կյանք չի, շնից ել վատ եմ... Մեկ ել վոր բարևում եմ Ալյոնային, քոռ Յեգորկային և կառապանին, համ ել իմ գարմոնը մարդու չտաս: Մնամ քո թոռ՝ Իվան Ժուկով. պապի ջան, արի»:

Վանկան չորս տակ ծալեց գրված թուղթը և դրեց ծխարի մեջ, վոր յերեկ եր առել մի կոպեկով... Մի փոքր մտածելով, նա թաթախեց գրիչն ու գրեց հասցեն՝

ԴԵՊԻ ԳՅՈՒՂ. ՊԱՊԻՍ

Հետո քորեց իրեն, միտք արեց ու ավելացրեց՝ «Կոնստանտին Մակարիչին»: Գոհ լինելով, վոր իրեն չխանգարեցին գրել, նա դրեց գրակը և առանց մուշ-

տակի, ուղղակի չապկանց դուրս վազեց փողոց...

Մսի խանութի վաճառողները, վորոնց նա հարցրեք էր նախընթաց օրը, ասել էին նրան, վոր նամականե-
րը գցում են փոստի արկղները, իսկ արկղներից ցր-
վում են ամբողջ աշխարհը փոստային կառքերով, վո-
րոնք քշում են հարբած կառսպանները և վորոնք
ունեն զրնւսն զանգակներ: Վանկան վազեվազ
մոտեցավ աւաճին փոստարկղին և գցեց թանկագին
նամակը ճեղքից ներս...

Քաղցր հոսքերով տարված, նա մի ժամ հետո
պինդ քնած էր... Նա յերազում տեսավ վառարան:
Վառարանի վրա նստած է պապը, բոբիկ վոտքերը
կախած ներքև և կարդում է Վանկայի նամակը...
Վառարանի մոտ ման է գալիս չունն ու խաղացնում
պոչը...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հյուս — ձյունի մեծ գունդ:
2. Ղայիշ — գոտի (կաշվե):
3. Ծխամոքն — ծխելու փող, աման (մուշտուկ, չիբուխ):
4. Գարմոն — յերաժշտ. գործիք՝ ստեղներով (կլավիր):

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ էր Վանկան, վորտեղ էր ապրում նա և վորտեղ՝
նրա պապը:
2. Ինչպե՞ս էին վարվում Վանկայի հետ քաղաքում, ո՞ւմ
էր կարոտել նա:
3. Նամակն ուղարկելուց հետո Վանկան ինչո՞ւ հանդիստ
քնեց:
4. Ի՞նչ կգրեր Վանկան իր պապին, յեթե նա այժմ սովո-
րելիս լիներ մեր քաղաքներից մեկի դպրոցում:

1. Պատմեցեք «Վանկայի կյանքը քաղաքում»:
2. Գրեցեք, թե ինչ պատասխան կգրեր պապը Վանկային,
յեթե նրա նամակն ստանար:

14. Յ Ե Ր Կ ՈՒ Ը Ն Կ Ե Ր

Յերկու ընկերներ իրիկնապահին
Հրացան առած՝ անտառ գնացին,

Վոր մեկ բան վորսան,

Շուտով յետ դառնան:

Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ
Ու կատաղությամբ նրանց վրա վազեց.
Մեկն շտապելով ծառը բարձրացավ,
Մյուսն անճարացած՝ գետնի վրա պառկեց,

Շունչն իրեն քաշեց

Ու անշարժ մնաց,

Վոր արջը կարծե,

Թե նա մեռած է:

Արջը մոռալով՝ մոտեցավ նրան,
Ականջը կամաց դրավ բերնի վրան.

Ականջ դրեց,

Հոտ քաշեց,

Վերջապես նրան մեռած կարծելով,

Հեռացավ գնաց՝ դունչը լիզելով:

Փախած ընկերը ծառիցն իջավ ցած,

Ընկերին հարցրեց, թե արջն ի՞նչ ասաց:

— Արջն ինձ պատվիրեց, վոր յետ մյուս
անգամ

Քեզ պես մարդու հետ վորսի չգնամ,

Վոր մեզ մի վտանգ—բան պատահելիս՝

Մենակ չթողնես ու ինքդ փախչես:

Տասը տարեկան Գրետան այսօր մենակ է տանը: Մայրը տեղ է գնացել: Հայրն էլ յերկու շաբաթ է, վոր տուն չի գալիս: Բայց դա Գրետային չի զարմացնում: Նա գիտե, վոր վոստիկանությունը փնտռում է իր հորը. ուրեմն լավ է, վոր հայրը տանը չէ:

Գրետայի հայրը կոմունիստ է: Դրա համար էլ նրան փնտռում են: Այն էլ ուղքեր. ապուշ վոստիկանները, վորոնք նույնիսկ չգիտեն թե ի՞նչ է կոմունիստը:

Իսկ Գրետան գիտե: Լավ գիտե: Յեքը յերեկոյան իջնում է հոր ծնկներից, կարծես յերազի մեջ լինի, այնքան լավ-լավ բաներ է պատմում նրան հայրը կոմունիզմի մասին:

Ա՛խ, ի՞նչ լավ են ապրելու բոլոր մարդիկ կոմունիզմի ժամանակ:

Կոմունիստներն ուզում են, վոր բոլոր մարդիկ աշխատեն ու բոլորն էլ լավ ապրեն:

Գրետայի մաքերը դեպի դպրոց են թռչում: Այնտեղ էլ տղետներ են: Իր դպրոցական ընկերներն էլ չեն իմանում, թե ինչ է կոմունիզմը: Առայժմ Գրետան միակ կոմունիստն է իրենց դասարանում:

Գրետայի ականջին ինչ վոր փոտնաձայներ հասան: Մոր վոտքերի ձայնը չեր: Գրետան լավ է ճանաչում իր մոր վոտքերի ձայնը: Սանդուղքով մի քանի հոգի յեն բարձրանում ծանր քայլերով: Ո՞վ կարող է լինել:

Դուռը բացվում է. ոտար մարդիկ են ներս մտնում: Գրետան նրանց չի ճանաչում: Նա, վոր ամենից առաջ մտավ, մի բարձրահասակ ու յերկար բեխերով մարդ է: Քաղցրութամբ ժպտաց Գրետային ու հարցրեց.

— Փոքրի՛կ, դու մենա՞կ ես:

Գրետան գլխով արեց:

— Իսկ մայրդ ո՞ւր է:

— Շուկա յե գնացել:

— Իսկ հայրդ:

Գրետայի սիրտը կասկած ընկավ. Գրետան հիմար չէ, վոր հայրիկի տեղն ասի:

Հայրիկս մեկնել է այստեղից, — հնարեց նա, փոքր ինչ մտածելուց հետո:

— Վո՞րտեղ է մեկնել:

Գրետան ասաց, վոր չգիտե: Բարձրահասակ մարդը պահանջեց, վոր ասի հոր տեղը:

— Վո՛չ, վո՛չ: Յես չգիտեմ:

Բարձրահասակ մարդը փոխվեց. աչքերը չարու-թյամբ լցվեցին. բարկությունից սկսեց բեխերը վռլորել:

— Յես քեզ բա՛նտ կտանեմ, — ահավոր շեշտով ասաց նա:


Գրետայի սիրտը թրպրտաց: Բայց վոչինչ չասաց:

— Յես չգիտե՛մ, չգիտե՛մ:

Գրետայի ձեռքը բռնեցին: Դուրս տարան: Դռանն ավտոմոբիլ կա: Նրան ավտոմոբիլ նստեցրին: Գրետան չգիտեր, թե ինչ են անելու իրեն, վախենում էր, բայց վոր ավտոմոբիլով պետք է տանեյին, այդ լավ էր:

Կես ժամից հետո Գրետային բերին մի մեծ սենյակ: Լույսն այնքան առատ էր, վոր նա մի քանի րոպե աչքերը կկոցած էր պահում: Գրետային ծիծաղելի թվաց, վոր դրսից սարսափելի ու տղեղ տան մեջ այսպիսի մեծ և լուսավոր սենյակներ կան:

Գրետային գրասեղանի մոտ տալան: Գրասեղանի վրա թղթերի կույտեր կային: Իսկ սեղանի մյուս կողմը, վոստիկանի վոսկեկար համադրգեստ հագած մի մարդ էր նստած:



Գրետան սենյակն եր դիտում, յերբ այդ մարդը Գրետային մի ինչ վոր հարց տվեց, Գրետան ուժ գործ դեհեց, վորպեսզի նրա կողմը դառնա և պատաս-
խանի տրված հարցին: Իսկ յերբ յերեսը նրա կողմը դարձրեց, մտածեց. «Ինչ կուզես կանեմ, բայց հորս մասին՝ վոչ մի խոսք»:

— Քանի՞ տարեկան ես:

— Անունդ ի՞նչ է:

— Դպրոց հաճախո՞ւմ ես:

— Ուրախությա՞մբ ես հաճախում, թե վոչ:

Վոստիկանն այս բոլոր հարցերն իրար յետևից տվեց: Գրետան պատասխանեց:

— Իսկ ուտել ուզո՞ւմ ես, քաղցա՞ծ ես, — ավե-
լացրեց նա:

Այո, Գրետան շա՛տ եր քաղցած, բայց վոչինչ չպատասխանեց:

Վոսիկեկար համազգեստ հագած մարդը զանգա-
հարեց. ներս մտավ մի վոստիկան և ինչ վոր հրաման

ստանալով, կրկին դուրս գնաց: Յերկու-յերեք րոպե-
յից հետո վոստիկանը հաց ու յերշիկ բերեց: Գրետան սկսեց հաճույքով ուտել:

Մի կողմից ուտում, մյուս կողմից զրուցում եր վոստիկանապետի հետ: Յեվ ինչո՞ւ չզրուցել: Չե՞ վոր վոստիկանապետը Գրետայի հետ սիրալիր եր վար-
վում:

Գրետան կերավ, կշտացավ ու գլուխը թիկնաթո-
ռի թիկունքին հենեց: Սիրալիր զրուցակիցը նրան ելի
մի բաժակ սուրճ առաջարկեց:

Գրետան չմերժեց նրա առաջարկը:

Բայց բաժակը մեկնելիս վոստիկանապետը հան-
կարծ արագ ու մեղմ ձայնով հարցրեց.

— Հայրդ վո՞րտեղ է:

Գրետան պապանձվեց:

— Վո՞րտեղ է հայրդ:

Նորից լռություն:

— Քե՛զ եմ ասում, ե՛յ, հայրդ վո՞րտեղ է:

Գրետան շնչասպառ է լինում. դողում է, բայց
չի վախենում: Ինչքան ուզում է, թող ճշա, Գրետան
նրան վոչի՛նչ չի ասի:

— Կասե՞ս վերջապես, թե վոչ:

Գրետան մի քայլ առաջ գնաց:

«Պատանի կոմունիստը չի՛ կարող իր հորը մատ-
նել», — մտածեց Գրետան:

Անցավ մի րոպե, յերկու րոպե...

Հասակավոր մարդն ու մանուկը կանգնած էյին
իրար դեմ, և ահագին սենյակում լռություն եր:
Միայն լսվում եր պատի ժամացույցի ձայնը:

— Թա՛կ — Թա՛կ — Թա՛կ...

3

Մեկը ներս մտավ:

— Ձեզ կանչում են:

Լռությունը խզվեց: Վոստիկանապետը թունդ
հայհոյեց ու ծանր քայլերով դուրս գնաց:

Գրետան ընկղմվեց թիկնաթուռի մեջ: Նա դողում
էր հուզմունքից, չգիտես թե ինչու՝ լացը գալիս էր:
Բայց վո՛չ. նա այնքան վախկոտ չէ, վոր լաց լինի:

Անցավ հինգ րոպե: Վոչ վոք ներս չմտավ: Գրե-
տան մենակ էր. վախեցավ: Վեր թռավ, վոտքի կանգ-
նեց, մոտեցավ դռանն ու թխկթխկացրեց:

Ա՛յ քեզ զարմանք: Դուռը բացվեց: Մի համար-
ձակ միտք անցավ նրա գլխով: Դռնից դուրս նայեց:
Մի ակնթարթ՝ և նա վախ սլացավ սանդուղքով: Նա
դրսի դռան մոտ է: Դռան յետեւը զինվորներ են:

Գրետան բացեց դուռը, դուրս գնաց: Զինվորներն ու-
շադրություն չդարձրին նրա վրա: Աղջկա սիրտը քիչ
էր մնում պայթի: Բայց նա վազում էր, վազում, վա-
զում...

— Մայրի՛կ...

Գրետան մոր գիրկն ընկավ: Շփոթվելով, խոս-
քերն իրար խառնելով, արցունքների միջից նա պատ-
մեց իր գլխի անցածը:

Կես ժամից հետո նա անկողնումն էր: Քիչ էր
մնում, վոր քնի, բայց հանկարծ նստեց անկողնում ու
քնաթաթախ ձայնով ասաց.

— Մայրիկ, կոմունիստը յերբեք չի կարող մատ-
նիչ լինել, չե՞:

Ու առանց պատասխանի սպասելու և բռնորովին
համոզված, վոր ուրիշ կերպ չի՝ կալող լինել, փակեց
աչքերն ու խորունկ քուն մտավ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Համագգեստ — տարադ—Փորմա:

2. Ընկղմվել — խրվել, սուզվել:

3. Պապանձվել — լռել, բռնորովին չխոսել:

4. Ակնթարթ — աչքը փակելու տեղումն, չառ կարճ
ժամանակ:

16. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Ինչքան լավ է, ջա՛ն,
Յերբ առավոտյան,
Մենք դուրս ենք գալիս
Ու բարե տալիս
Արևին շողուն,
Դաշտերին նախշուն...

Ինչ լավ է, ուրախ,
Յերբ ազատ, անվախ
Մենք չափ ենք ընկնում
Կանաչ մարդերում,
Հեկում անհամբեր,
Վորսում թիթեռներ,
Ու բռնում իւար,
Խաղում անդադար,
Հետո շարքերով
Կայտառ յերգելով
Մենք դառնում ենք տուն...
Ի՛նչ անուշ է, ջա՛ն,
Կյանքը մայիսյան
Իր վառ արևով
Իր լավ որերով:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Շողուն — շողողացող:
2. Հեկալ — արագ-արագ շնչել:
3. Կայտառ — ուրախ, գլխարթ:

Ծիրան անուշով մի յեզն ունեյինք: Մի ձմեռ եղ յեղը կորավ: Ախպերս ինձ դրկեց ման գալու: Յես 16-17 տարեկան տղա յեմ: Գնացի գեղի չորս կողմը ման յեկա, ման, չգտա: Գոմահանդ տւնենք, ենքան ել գեղիցը հեռու չի: Ասի՝ յեղը սովոր ե, կարելի յե եղ կողմն ե գնացել: Գնացի եղ գոմահանդը: Գնացի, ես գոմը նայեցի, են գոմը նայեցի, վերջը տեսնեմ, վոր յեղը մի գոմում ե: Յեղը դուրս արի: Դուրս գամ՝ տեսնեմ՝ արդեն մութն ընկնելու վրա յե: Սիրտս մի ահ ընկավ: Տեսնում եմ, վոր լուսով չեմ կարող գեղը հասնել: Մտածում եմ, — գնամ-չգնամ:

Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ամայի ձյունապատ դաշտ, շեն չկա, ձեն չկա. ձեռքս ել մի ճիպոտ ու մի դանակ:

Ի՞նչ պետք ե անեմ: Յեզն առաջս արի, քչեցի: Մի քիչ տեղ անց եյի կացել. հանկարծ իրիկվան դառը քամու հետ մի տխուր ձայն ընկավ ականջովս: Կանգնեցի, ականջ դրի...

Տեսնեմ գելի վոռնոց ե. ո՛ւ, ո՛ւ...

Ես վոռնոցին միացավ մի ամբողջ խումբ: Սարսափով լցվեց դաշտը: Մտիկ տամ՝ վոր աջ կողմս, հեռվում, մթան մեջ վառված ճրագների մի բազմություն ե շարժվում... Ել ի՞նչ. ձեռաց հասկացա, վոր գելերի աչքերն են՝ սոված թուրուկ ե...

Յեղը յետ տվի դեպի գոմերն ու քո՛ւմ եմ, վոնց եմ քում. վազում եմ, վո՛նց եմ վազում... Յետ նա-յեմ, վոր արդեն գալիս են: Յեղը թողի, փախա, ընկա գոմը: Ընկա գոմը, բարձրացա... սների գերանների միջև դատարկ տեղեր են լինում, վոր կոչվում են կոնդ:

Եղ կոնդերից մեկին վեր յելա: Դեռ չեյի տեղավորվել, մին ել տեսնեմ յեզանս գոռոցը բարձրացավ: Չարմանք բան ե, թե ենքան տարածությունը մի յերկու բալեյում վոնց կտրեցին ու հասան:

Յեզանս գոռոցը բարձրացավ ու խսկույն ել կտրեց, խռնոցն ընկավ: Խռնոցն ել կտրվեց, միայն գելերի ժընգժընգոցն եմ լսում, ու լսում եմ՝ վոնց են լափում...

— Վա՛յ, Ծիրան ջան... դուրս թռավ սքտիցս:

Բայց ի՛նչ Ծիրանի ժամանակն ե: Յես իմ գլուխն եմ լաց ըլում: Մտածում եմ թե՛ ես լավ եր, յեզնովը կըլեն, մինչև կլուսանա, կամ կիշտանան ու կգնան, կամ, ասում եմ, ինձ չեն գտնի... Դու մի ասի՛՛ սոված գելի բուրուկ, յես հիտուն ասեմ, դու հարյուր իմացի. ձեռաց հախուել են ու մին ել տեսնեմ՝ մութը գոմը լցվեցին են վառած ճրագները, ուխները բաց արած...

Գտան...

Յեկել են լցվել, ներքևից ազահ-ազահ ինձ են մտիկ անում:

Յես ել չորացել եմ, մնացել վերեւ՝ գերանին կպած: Մտիկ արին, մտիկ, ու թողին դուրս գնացին:


Շունչս յետ յեկավ: Մին ել ի՞նչ եմ լսում:

Իմ ուղղությամբ վերևից կառուր քանդում են, չանդերովը հողը յետ են տալիս: Արդեն լսում եմ՝ չանդերը կոնդերին են կպչում...

Սառը քրտինքը վրա տվեց... Շտապեցի՝ տեղս փոխեցի, անցկացա մյուս կոնդի վրա, կուչ յեկա:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ:

Ելի յեկան ներքև: Մտիկ արին, վոր մյուս կոնդի վրա յեմ, ելի դուրս գնացին: Հիմա ես կոնդի վերևից սկսեցին քանդել կառուրը:



Դաբձյալ տեղս փոխեցի: Եսպեսով՝ նրանք քանդելով, յետ տեղս փոխելով, հասանք վերջին կոնդին: Ել ո՞ւր գնամ:

Յեկան մտիկ արին կատաղած ու յետ գնացին: Քանդում են, վո՛նց են քանդում...

Մի սուր դանակ ունեյի գրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռիս բռնեցի:

Իսկ հենց ահանջիս վերևը քանդում են: Քանդելով, հասան կոճերին: Մինը կոճերի արանքով թաթը մեկնեց, վոր կոճը յետ քաշի, թաթը բռնեցի ու են սուր դանակովը, ղը՛րթ, կտրեցի... թաթը փախցրեց, վոռնալով, կոնձկոնձալով յետ գնաց ու կտրի վրա իրարով անցան: Իմացել եյի, վոր գեղերի մինը յեթե վիրավորվեց, մյուսները վրա յեն թափվում, նրան ուտում: Ասի՝ ուրեմն սրան ուտում են: Հիմի սպա-

սում եմ, վոր սրան ուտեն պրծնեն, յետ կգան: Ելի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ:

3

Ահանջս ձենի յե: Գիշերվա մի ժամին՝ վոնց վոր յերազում՝ մի բարակ ձեն եմ լսում:

— Ավո հե՛յ...

Ինձ են կանչում...

Մի՞թե ինձ են կանչում... Մի՞թե ախպերս ե... Մի՞թե մերոնք են... Գոմից ձեն եմ տալիս, գոռում եմ:— Աղանիկ հե՛յ... Եստե՛ղ եմ... Գոմումն եմ, գեղերն ինձ ուտում են... Ոգնեցեք, հե՛յ...

Ելի նրանք ձեն են տալիս, իմ ձենը չեն լսում, թեև յետ շարունակ կանչում եմ:

Մին ել տեսնեմ հրացանները տրաքեցին, յետևից լսեցի հեռացող գեղերի կաղկանձն ու մարդկանց հա-րահրոցը: Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի տղերանց ամեն մեկի ձենը:

— Ավո հե՛յ...

— Եստե՛ղ եմ... Եստե՛ղ եմ... Կենդանի յեմ...

Ներս թափվեցին գոմը: Ուրախացած ու զարմա-ցած, կանչում են ամենքը: Յած յեկա վերջին կոնդի վրից: Ախպորս գիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ:

Դուրս յեկանք դուռը, ուր թափված եյին մեր Ծիրան յեզան վոսկորները:

Դեռ լույսը չեր բացվել:

Հեռվից լսվում եր գեղերի վոռնոցը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գոմահանդ — ձմեռը կամ զարնանն անասունները պա-հելու տեղ:

2. Ամայի — անմարդաբնակ:

3. Բոլուկ — դայլի խումբ, վոհմակ:

4. Կոնդ — գերան:

5. Հախոել — միանգամից արագ ուտել:

Մի դարևոր կաղնու տակ
 Խողը ագահ ու անհագ
 Այնքան կաղին զխովեց,
 Վոր ցած ընկավ ու փռվեց:
 Զարթնեց քնից ու տակից
 Ծառը փորեց արմատից:
 — Ի՞նչ ես անում, ա՛յ անգետ,
 Կչորանա արևից,—
 Ագռավն ասավ վերևից:
 — Զորանում ե՛՛ չորանա,
 Ինձ ի՞նչ ոգուտ՝ զորանա,
 Միայն կաղին ունենամ,
 Ուտեմ, պառկեմ, դիրանամ:
 — Այ ապերախտ կենդանի,
 Ով քեզ նման վիզ ունի,
 Իր կույր աչքով չի տեսնի,
 Վոր կաղինը հյութալի
 Լոկ այս ծառն է ձեզ տալի,—
 Ագռավն ասավ խոզուկին,
 Այն կախ գլուխ կուղիկին:

ՔԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Անհագ — անկշտում, չկշտացող:
2. Զխովեյ — անկարգ կերպով ուտել:
3. Անգետ — չհասկացող, չգիտեցող:
4. Զորանալ — մեծանալ, աճել:
5. Գիրանալ — չաղանալ:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ խողը փռվեց ծառի տակ:
2. Խողն ինչո՞ւ չեր մտածում, թե ծառը կչորանա:
3. Ինչո՞ւ ագռավը խողին ապերախտ կենդանի յե համարում:
4. Ինչո՞ւ այս գլուխը առակ է կոչվում:

—

1. Նման մի դեպք պատմեցե՞ք մարդկանց կյանքից:
2. Այս առակն արտասանեցե՞ք դերերով:

1

Մի անգամ, աշնանը յես մի ուրախ ճանապարհորդու թյուն կատարեցի դեպի Յերևան: Լենինական քաղաքից մի պառավ՝ զամբյուղը ձեռքին յեկավ, մտավ մեր վագոնը:

— Կարելի՞ յե:

— Համեցե՞ք, մայրիկ, համեցե՞ք...

Յեվ մենք չորս հոգով մի կողմ քաշվեցինք ու պառավին տեղ տվինք:

Պառավը նստեց, զամբյուղը դրեց վոտքերի տակ ու փեշերով ծածկեց:

Այսպես գնում ենք մի փոքր տեղ, մեկ ել տեսնեմ պառավի զամբյուղի մեջ ինչ վոր բան է չարժվում: «Յերևի հավ ե», մտածում եմ. բայց պառավն այդ չարժումից անհանգստացավ, վոտը խփեց զամբյուղին և փեշերն ավելի վրա բերեց: Մի քիչ ել գնացինք՝ զամբյուղից ճանկրտոց լսվեց: Այս անգամ պառավը փեշերը յետ տարավ ու կոացավ զամբյուղի վրա և կամաց, շատ կամաց, հաղիվ լսելի ձայնով սաստեց.

— Մո՛ւս, Զեկո, սո՛ւս, անպիտան:

Մեր վագոնի ճանապարհորդները զարմացած իրար նայեցին, իսկ յես մտածեցի, վոր զամբյուղի միջինը հավ չի, այլ յերևի կատու յե:

2

Գնացինք մի փոքր ել—կոնդուկտորը յեկավ տոմսերն ստուգելու.

— Զեր տոմսը, ձեր տոմսը,— կրկնում եր բարձրաձայն:

Յեվ այդ Ժամանակ ահա պառավի փեշերի տակից հանկարծ.

— Հա՛Ֆ, հա՛Ֆ, հա՛Ֆ...

Վազոնը լցվեց շան հաջոցով: Ճամբորդները յեկան, հավաքվեցին հաջոցի վրա. իսկ պառավն, իրեն հորցրած, վոտով խփում եր զամբյուղին և շարունակ չչնջում:

— Ձեկո՛, Ձեկո՛, անպիտան...

Շունը բոլորովին չի լսում, հաջում ե, կլանչում, զամբյուղը ճանկոտում:

Բարկացած կոնդուկտորը կռացավ և վախենալով զամբյուղը բաց արավ. նապաստակի արագուժյամբ դուրս նետվեց մի պստիկ, կատվից ել փոքր ճեմակ չնիկ՝ վզին ժապավենից մի բանտիկ: Դուրս նետվելով, նա իր խոշոր աչքերով նայեց անծանոթ դեմքերին և, պառավին նկատելով, թռավ նրա գոգը:

— Սա ի՞նչ բան ե, ասում ե կոնդուկտորը, — ձեզ ո՞վ իրավունք տվեց շունը վազոն բերել:

— Ի՞նչ կա վոր, — ասում ե պառավը շանը գրկելով, — զամբյուղի մեջ ձեզ հո վնաս չի տալիս:

— Շունը վազոն մտցնելու իրավունք չկա, — զայրանում ե կոնդուկտորը. — յեկող կայարանում կամ կիջնեք, կամ շունը կթողնեք:

— Վա՛յ, յես իմ Ձեկոյին չեմ թողնի: Գրկիս կպահեմ:

— Ձի կարելի, — խոսքը կտրեց կոնդուկտորը և անցավ մյուս ճամբորդների տոմսերն ստուգելու:

3

Հասանք կայարան. պառավը չփոթված սկսեց շունը փաթաթել փալաններով, յերևի այնպես պահելու, վոր չհեռացնեն:

Բայց կոնդուկտորը շուտով վերադարձավ:

— Դե՛, մայրիկ, կամ իջեք, կամ շունը թողեք այս կայարանում:

Պառավը չի համաձայնում:

— Ձեմ կարող, — աւում ե, — շունը թողնել, սա տղայինս ե. գրել ե, վոր տանեմ Յերևան, կմեռնեմ՝ չեմ թողնի:

— Դե՛ իջեք...

— Վո՛չ կիջնեմ, վո՛չ կթողնեմ...

Յերկար սա իրենն եր ասում, նա իրենը, մեկ ել կոնդուկտորը թե՛

— Յես իրավունք չունեմ վազոնում շուն թողնելու: Այս ասելով՝ նա շունը խլեց պառավի ձեռքից և տարավ դռնից դուրս գցեց:

Պառավը ճղճղաց ու վազեց կոնդուկտորի յետեվից. գնացքը շարժվեց:

Պառավը մնաց չվարած.

— Վա՛յ, հիմա ի՞նչ պատասխան տամ տղիս:

Ու մինչև մյուս կայարանը նա ձեռքերը խփում եր ծնկներին ու մտածում.

— Վա՛յ Ձեկո ջան, քեզ պահեցի, վոր ճամբին կորցնեմ, վա՛յ, Ձեկո ջան:

Այսպես հասանք մյուս կայարանը. հազիվ գնացքը կանգնել եր, մեկ ել պառավի չնիկը լեզուն հանած վազեվազ ընկավ վազոնը և թռավ պառավի գոգը: Ճամբորդները զարմանքից վեր թռան:

— Ա՛, յեկավ, յեկավ. շունն յեկավ, — ձայն տվին իրար ու հավաքվեցին շան գլխին:

Աղմուկի վրա կոնդուկտորը նորից յերևաց:

— Այդ վոգտեղի՞ց յեկավ, — զարմացավ նա:

Մեկը թե՛

— Ձե՞ք տեսնում, վոնց ե հեռում. գնացքի յետեվից վազել ե, ելի՛:

Բոլորը զարմացան, թե ինչպես ե մի կայարանից մյուսը վազել այս պստիկ շունը, ինչպես շունչը չի կտրել... Պառավն ուրախությունից շանը սեղմում եր կրծքին:

— Ձեկո ջան, Ձեկո...

Իսկ Ձեկոն յետին վոտներով կանգնել եր պառա-

վի գոգին, առաջին վրտները դրել էր նրա կրծքին և ուզում էր յերեսը լիզել, բայց յերեսին չհասնելով՝ լիզում եւ նրա ձեռքերը:

Բոլորս ծիծաղում ենք, ուրախանում, իսկ կոնդուկտորը նորից կալով պառավին, թե՛ կամ պիտի իջնես, կամ շունդ թողնես կայարանում...

Պառավը նորից պինդ գրկեց շանը, վոր կոնդուկտորը չտանի, խնդրեց, վոր թողնի: Բայց կոնդուկտորը չուզեց լսել և շունը քաշեց իր կողմը:

— Յես իրավունք չունեմ վագոնում շուն թողնել. ինձ պաշտոնից դուրս կանեն:

Ու նորից շանը տարավ, դեք պլատֆորմի վրա և վագոնի դուռը փակեց:

Այս անգամ պառավը լաց յեղավ, իսկ յես գլուխս վագոնի լուսամուտից հանած նայում եմ, տեսնեմ շունն ինչ է անելու:

4

Յերբ գնացքը չարժվեց՝ Ջեկոն սկզբում նայեց չարժվող վագոններին, ապա սկսեց վազել գնացքի կողքով: Գնացքն արագացրեց ընթացքը, Ջեկոն նույնպես, նա վազում էր այնպես, ինչպես նապաստակն է վազում՝ ցատկելով, թռչելով... Վազեց, վազեց — մեկ էլ ըհը՝ — թռավ վերջին վագոնի սանդուխքի վրա ու նստեց լեզուն հանած:

Ուրախությունից ուզեցի մյուս ճամբորդներին պատմել Ջեկոյի ճարպիկությունը և ցույց տալ նրա տեղը, բայց մտածելով, վոր կոնդուկտորի ականջը կընկնի — չի թողնի: Լավ եւ, վոր ուրիշ ճամբորդներ նկատել և շնիկը մնաց այդպես մինչև մյուս կայարանը:

Ու յերբ հասանք մյուս կայարանը, Ջեկոն նորից յեկավ պառավի գոգն ընկավ:

Նորից ծիծաղ, ուրախություն: Պառավը համբու-

րում էր Ջեկոյին ու ծիծաղում մյուսների հետ:

Յեկավ կոնդուկտորն էլ, ուզեց բարկանալ, բայց իմանալով թե շունն ինչպես է յեկել, ինքն էլ սկսեց ծիծաղել:

— Դե վոր այդպես է, նորից զամբյուղը դիր, մայրիկ: Միևնույն է, դա արդեն սովորել է առանց տոմսի ճամբորդել...

Ջեկոն, կարծես կոնդուկտորի խոսքերը հասկանալով, ինքը թռավ մտավ զամբյուղը:

Ջեկոն հիմա հանգիստ էր. վոչ ճանկոռում էր զամբյուղը, վոչ էլ հաջում:

Այդպես էլ հասանք Յերևան:

Պատժորմ — Կայարանի առաջին հրապարակը, վորտեղից ճանապարհորդները գնացք են նստում:

20. Տ Ղ Ա Ն Յ Ե Վ Ո Դ Ա Ձ Ո Ի Ն

— Սիրելի ընկեր, հերոս ողաչու, Ժամ է ինձ արդեն կարին մտնելու. Տեսնո՞ւմ ես, հիմա յես մեծ տղա յեմ, Քեզ հետ միասին ազատ կթռչեմ: Մայրիկս այսոր ինձ հաստատ ասավ, Վոր ութը տաբիս արդեն լրացավ. Յես ձանձրացել եմ տանը, շատ վաղուց, Մանկական պարտեզ անվերջ գնալուց, Յերկինքը դեռևս ինձ անձանոթ է, ինչ կարգ կա այնտեղ, ինձ համար մութ է: Առ ինձ, ողաչու, յես ցանկանում եմ, Մարդամեջ ընկնեմ ու աշխարհ տեսնեմ. Վո՞նց է լուսինը յերկնքում լողում, իսկ առավոտյան մարում, վերջանում,

Գետերը գնում են դեպի ծովեր,
 Հոսում անդադար ամառ ու ձմեռ:
 Կուզեմ ծովերով արևելք թռչել,
 Մեծ-մեծ նավերի վրայով անցնել,
 Ավելի հեռու, բարձր սավառնել:
 Յեվ Կրեմլի վրա թռչնի պես ճախրել.
 Կանչել յերկրի և մարդկանց վերելից,
 Կապույտ յերկնքի ջինջ հեռուններից.
 «Բարի որ քեզ, մեր ընկեր Ստալին,
 Ընդունիր վողջույն մեր սավառնակից»:
 — Յեվ ահա այսպես, յերկրից շատ-շատ վեր
 Թռչենք ու թռչենք մենք միշտ անվեհեր.
 Առ ինձ, խնդրում եմ, թռչենք դեպի վեր,
 Դու չես ամսոսա, ողաչու ընկեր:

ԲԱՅԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Կարին — սավառնակի վրա ողաչույի նստելու տեղը:
2. Անվեհեր — անվախ:

21. ՀԵՐՈՍՆԵՐԻ ՎԱՐԴԸ

1

Ձինա և Կատյուշա Բրուսկովաները կանգ առան
 հենց նոր կախած հայտարարության մոտ, վորը խը-
 նամքով նկարագարված էր:

«Յերեխաներ, ոգոստոսի 10-ին գնում ենք դիմա-
 վորելու Խորհրդային Միության հերոսներ—Չկալո-
 վին, Բայդուկովին և Բելյակովին: Հավաքը յերկաթ-
 գծի շրջանի պուրակում, ճաշից հետո, ժամը 4-ին,
 պիտներական համազգեստով»:

— Այսո՛ր... հուզված չչնջաց Կատյուշան և արագ
 սլացավ տուն:

— Ո՛ւր ես վազում, — աղաղակեց նրա հետևից
 Ձինան: Չե՞ վոր հիմա դեռ ժամը յերկուսն է միայն:

Բայց Կատյուշան, առանց յետ նայելու, վազում
 էր:

Ձինան մեծն է, նա 13 տարեկան է, իսկ Կատյու-
 շան՝ ընդամենը 9 տարեկան է: Բայց այդ նա յե,
 փոքրիկ Կատյուշան, վոր իր խնայած փողով գնել է
 հենց այն վարդը, վոր ստացան հերոս ողաչունները
 դեռ չբացված, իրենց՝ Մոսկվա վերադառնալու ուր:

Վարդը գնել էյին այն ուրը, յերբ ռադիոն ամբողջ
 աշխարհին հայտարարեց «ԱՆՏ-25» ինքնաթիռի Ուդդ
 կղզուց թռչելու լուրը: Կոկոնը դեռ նոր էր բացվել,
 նա դեռ ամբողջովին չէր փռել իր թերթիկները, բայց
 չե՞ վոր Չկալովի ու նրա ընկերների համար մինչև
 Մոսկվա թռչելը դատարկ բան է: Ուղիղ հենց այդ
 ժամանակ վարդը կբացվի: Բայց Չկալովն այդ մա-
 սին վոչինչ չգիտեր և նա չէր շտապում: Նա դեռ Խա-
 բարովսկումն էր, յերբ նրա համար նախորոշած վարդն
 արդեն սկսեց թառամել: Ամեն որ հեռգհետե թափ-
 վում էյին նրա թերթիկները և որ որի վրա ավելի ու
 ավելի յեր մռայլվում Կատյուշայի դեմքը: Վարդը
 խաբեց: Իհարկե, այդտեղ մեղավոր էր և Չկալովը,
 վոր ուշացավ:

Բայց ահա շարժվեց և սկսեց լցվել մի ուրիշ կո-
 կոն: Վո՛չ-փառապանձ հերոսների անվան հետ կապ-
 ված վարդը չէր մեռնում: Այս նոր կոկոնը լիքն էր
 ուժով ու թարմությամբ, նա կարմրում էր, շտապում
 էր զարգանալ ու մի չքեղ ծաղիկ դառնալ: Բայց հի-
 մա յել նոր վտանգ առաջացավ—հանկարծ կոկոնը
 չբացվի մինչև այդ ժամանակ: Ու Կատյուշան կրկնա-
 պատկեց իր ուշադրությունը ծաղիկի նկատմամբ.—նա
 անդադար փոխում էր ջուրը և սենյակում արև էր
 փնտռում, շարունակ փոխելով վարդի տեղը:

Կոկոնը դանդաղ էր բացվում:

Ձինան ծիծաղում էր.

— Քո վարդը չի հասցնի, չի բացվի: Արի մի ու-
 րիշ վարդ գնենք:

Բայց կատյուղան ուրիշը չեր ուղղում: Այդ, անպայման, այդ վարդը պետք է տալ հերոսներին:

Բարեբախտաբար ողաչուններն առանց շտապելու եյին թուշում, նրանք կանգ եյին առնում մեծ քաղաքներում, հանգստանում եյին:

Ու հանկարծ այսպիսի անսպասելի մի բան. այսօր հասնում են Մոսկվա:

2

... Յերկաթգծի շրջանի պուրակում շատ յերեխաներ եյին հավաքվել: Պուրակի ակտիվիստներ Կոլյա Բլինովը և Շուրա Շիրոկովը կարնավալի շոբեր եյին հագել—մեկն արջի, մյուսը՝ այծի: Յերեխաների ուրախ խումբը շրջապատել էր նրանց: Գնում եյին փողոցներով և ազադակում եյին:

— Գնանք, դիմավորելու հերոսներին:

Յերբ ռադիոյով հաղորդեցին, թե ողաչունները բարեհաջող կերպով իջել են Շչելկովսկի ողանավակայանում, պուրակը լիքն էր յերեխաներով: Բոլորի ձեռքին էլ ծաղիկ կա, բայց մի՞թե կարելի չե համեմատել դրանք կատյուղա Բրուսկովայի վարդի հետ: Նա իր ամբողջ հոգին դրել է դրա մեջ:

Յերգելով զնացին դեպի հարևան փողոցը, վորտեղից հերոսները պետք է անցնեյին ավտոմոբիլով:

Կատյուղան տանում եր իր վարդը...

... Դուք ստացաք այդ վարդը, ընկեր Չկալով, և ձեզ համար դժվար չե գտնել այդ նշանավոր վարդը ձեզ մատուցած ծաղիկների կույտի մեջ: Նա հենց նոր—նոր է սկսել բացվել, նրա ցողունին կարմիր ժապավեն է փաթաթած, իսկ դրա տակը՝ նամակ կա:

«Թանգազին ընկեր Չկալով: Դուք ավելի շուտ թուք, յեկաք, քան թե յես կարծում եյի: Նա—իմ

վարդը—ժամանակ չունեցավ բացվելու: Բայց վաղը կբացվի: Զրոյ լիքը ամանի մեջ դեք:

Ուռու՜, կեցցե՛ն փառապանծ ողաչու հերոսները:

Կատյա Բրուսկովա»:

Դա ճիշտ է, ելի մի քանի ժամ—ու նա կտարածի իր շքեղ թերթիկները,— հերոսների այդ հրաշալի վարդը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Պուրակ—փողրիկ, բարեկարգ այգի, պարտեզ (զբոսավայր):

Փառապանծ — արժանավոր, զովելի:

Կարնավալ — հատուկ զգեստներով (հերոսների, կենդանիների և այլն) կազմակերպված յերթ, տոն կամ հանդես:

Ողանավակայան — ողանավերի կայան:

22. ՉԱՐԻ ՎԵՐՋԸ

Լինում է մի սար,

Են սարում մի ծառ,

Են ծառում փչակ,

Փչակում մի բուն,

Բնում յերեք ձագ,

Ու վրեն կկուն:

— Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկուներ,

Յե՛րբ պիտի դուք առնեք թևեր,

Թռչեք, գնաք,

Ուրախանաք...

Յերգում եր մարիկ կկուն:

Մին ել ըհը՛, Աղվեսն յեկավ.

— Ես սարը իմն է,

Ես ծառը իմն է,

Ծառում փչակ կա,

Փչակում մի բուն,

Ես ո՞վ ե յեկեկ
 Տիրացել թաքուն:
 Ա՛խ դու Կկու, հիմար Կկու,
 Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
 — Յերեք հատ ձագ, աղա Աղվես:
 — Յերեք հատ ձագ ցույց կտամ քեզ:

Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
 Մինը ծառա դրկես ինձ մոտ:
 Զգի՛ չուտով մի հատը ցած,
 Թե չե կացինս հրեն սրած,
 Գնամ բերեմ,
 Ծառը կտրեմ...

— Վա՛յ, չկտրես,
 Հոգիդ սիրես,
 Ես մինն ահա
 Տար քեզ ծառա,
 Միայն թե եղպես
 Մի ջնջիլ մեզ
 Բնով, տեղով,
 Ամբողջ ցեղով:

Խնդրեց մարիկ Կկուն ու ձագերից մինը ձգեց ներ-
 քե: Աղվեսը հա՛փ, առավ զնաց:

— Վա՛յ-վա՛յ, դո՛ւ-դո՛ւ,
 Իմ լավ կուկու,
 Վո՞ր սև սարում,
 Վո՞ր անտառում,
 Վո՞ր թփի տակ
 Կորար մենակ...

Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,
 Իմ խեղճ կուկու...

Լաց եր լինում մարիկ Կկուն, մին ել, ըհը,
 Աղվեսը յետ յեկավ:
 — Ես սարը իմն ե,
 Ես ծառը իմն ե,
 Ծառում փչակ կա,

Փչակում մի բուն,
 Ես ո՞վ ե յեկեկ
 Տիրացել թաքուն:
 Ա՛խ դու Կկու, հիմար Կկու,
 Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
 — Յերկու հատ ձագ աղա Աղվես:
 — Յերկու հատ ձագ ցույց կտամ քեզ:
 Ա՛խ, չաքամիտ դու ավազակ,
 Ի՞նչ խաբար ե, յերկու հատ ձագ,
 Ի՞նչ, ուզում ես եստեղ զոռով
 Լցնես ամբողջ կկուներո՞վ...
 Զգի՛ չուտով մի հատը ցած,
 Թե չե կացինս հրեն սրած,
 Գնամ բերեմ,
 Ծառը կտրեմ...
 — Վա՛յ, չկտրես,
 Հոգի՛դ սիրես,
 Ես ել առ տար,
 Ու թող դադար՝
 Վերջի՛նը գեթ
 Մնա ինձ հետ...

Աղաչեց մարիկ Կկուն ու յերկրորդ ձագն ել ձգեց
 ներքե: Աղվեսը հա՛փ, ես ել առավ ու զնաց:

— Վայ-վա՛յ, վույ-վո՛ւյ,
 Ընչի համար
 Յեկա ես սար,
 Բուն շինեցի,
 Զագ հանեցի...
 Աղվեսն յեկավ,
 Տարավ կերավ,
 Յերկու, յերկու,
 Կուկու... կուկու...

Լաց եր լինում մարիկ Կկուն:
 Ես միջոցին—ղա՛, զա՛, զա՛... Ագռավն անց եր

Կենում են կողմերով:
 Լսեց Կիււկի լացի ձայնը:
 — Եղպես տխուր ու զարհուրիկ:
 Ի՞նչ ես լալիս, Կիււ քուրիկ:
 — Ինչպե՞ս չլամ, ա՛յ սանամեր.
 Աղվե՛սն յեկամ են սրտամեռ,
 Գլխիս եսպես փորձանք բերամ,
 Չազուկներս տարամ կերամ:
 Վո՛ւյ, իմ աչքին, անխելք Կիււ,
 Ինչպես իզուր խաբվել ես դու
 Սուտ խոսքերից չար Աղվեսի:
 Վոնց թե սարը իմն ե՛կասի:
 Ո՞վ ե տվել եդ լրբին սար.
 Սարն ամենքինս ե հավասար...
 Ո՞վ կթողնի վեր կենա նա
 Ամբողջ սարին գա տիրանա,
 Անունը տա սրած կացնի,
 Սրան, նրան սուտ վախեցնի,
 Ու մինն եսոր, մյուսը յերեկ,
 Չազեր տանի, ուտի մեկ-մեկ...
 Սե գրողի են տարածին
 Ո՞վ ե տվել սրած կացին:
 Մին ել վոք գա ու սպառնա,
 Մի՛ վախենա, քչի գնա:
 Եսպես ասամ Ագռավն ու թռամ գնաց:
 Ահա կրկին Աղվեսն յեկամ:
 — Ես սարը իմն ե,
 Ես ծառը իմն ե...
 Հազիվ երասել, Կիււն բնից գլուխը հանեց:
 — Սուտ ես ասում, դու խաբերա՛,
 Անխիղճ գազան, անկուշտ, ագահ,
 Ո՞վ ե տվել եստեղ քեզ սար,
 Սարն ամենքինս ե հավասար:
 Ի՞նչ ես յեկել սուտ տեր դարձել,
 Յես ել հիմար՝ ճիշտ եմ կարծել,

Չազուկներս տվել եմ քեզ...
 Կոբի՛, գնա, դու չար Աղվես,
 Հերիք ինչքան սուտ ես ասել,
 Հիմի գիտեմ, չեմ վախում ել.
 Կացին չունես ծառը կտրես:

— Ո՞վ ասամ քեզ:
 — Ագռավն ասամ:
 — Ագռա՞վը. լա՛վ:

Ու ագռավի վրա բարկացած՝ Աղվեսը
 պոչը քաշեց, հեռացավ: Գնաց մի դաշտում սուտմե-
 ոտակի տվամ, վեր ընկամ, իբրե թե սատկել ե: Ագ-
 ռավն ել կարծեց, իրամ սատկել ե. թռամ, յեկամ
 վրան իջամ, վոր աչքերը հանի, Աղվեսը հա՛փ, հան-
 վարժ բռնեց:

— Ղա՛-ղա՛, ղա՛-ղա՛,
 Աղվես աղա...
 — Ա՛յ դու կռավան չարալեզու,
 Վոնց թե Կիււին ասել ես դու,
 Թե յես կացին չունեմ սրած...
 Կացին չունե՛մ... դե հիմի կաց...
 — Վա՛յ, քեզ մեղա,
 Աղվես աղա,
 Յես եմ ասել, չեմ ուրանում,
 Ինձ քրքրիր, ինձ կեր հում-հում.
 Տուր ինչ պատիժ սիրտդ կուզի,
 Բայց մի վերջին խոսքս լսի:
 Յես են սարում, հենց դեմ ու դեմ,
 Ենպես մի թանգ պահուստ ունեմ,
 Վոր չես գտնի դու քո որում
 Վոչ մի թառում կամ անտառում:
 Ինչի համար են ահագին
 Գանձը կորչի հողի տակին:
 Արի գնանք, հանեմ տամ քեզ,
 Ենքան ուտե՛ս, ենքան ուտե՛ս...
 Թե չլինի ու սուտ դուրս գամ,

Յեւ հոգիներդ մէջտէ կամ ու կամ...

— Գնանք, — ասով Աղվեսը: Թե կլինի, շատ լավ, թե չի լինի, ելի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերանց ընդհանրապէս հիատել եր, վոր մի յիշում պառկած եր գլուղացու շունը: Աղվեսը տարած, տարած դուրս բերավ ուղիղ են թփի վրա:

— Ե՛հ, տեսց. ես ընդունիմ քո պահումը:

Աղվեսն ագահ վրա ընկավ թփին. շունը վեր լծավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին:

Աղվեսը խեղդվելով սկսեց խոխուալ.

Ա՛խ, յես... ա՛խ, յես...

Ձգուշ աղվես,

Փորձանքի մեջ

Ընկնեմ եսպէ՛ս...

Ա՛խ, անիրավ

Դու սե աղուով...

— Ինչքան ել վոր լինես զգուշ,

Չարի համար թե վաղ, թե ուշ,

Եղ ե պահված, Աղվես աղա,

Ղա՛, զա՛, զա՛, զա՛...

Պատասխանեց Աղուովն ու թռավ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գեթ — դռն:

2. Զարհուրիկ — զարհուրած, սաստիկ վախեցած:

3. Պահուստ — պահած բան:

ՇՈՒՏԱՍԵՆՈՒԿ

Յերկու կլու կար պառավ

Կատուն հափ արավ, տարավ:

23. Ս Ո Ւ Տ Լ Ի Կ Վ Ո Ր Ս Կ Ա Ն Ը

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի որ հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով վորսի գնացինք: Հաղին եր, Հյուղին եր, Չատին եր, Մատին եր, Հալիս եր, յես եյի, գնացինք վորսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, վորտեղ վորս կար՝ սակ ու փակ դնացինք, վորտեղ ահ եր՝ կուղ ու կուղ գնացինք...

Գնացի՛նք, գնացի՛նք, շատ թե քիչ, մին ել տեսնենք յերեք լիճ, յերկուսը ցամաք, մնի մեջ ել իսկի ջուր չկա: Մին ել, ըհը՛, մտիկ տանք, վոր այս անձուր լճում լողում են, ճշում յերեք հատ սպիտակ բադ, յերկուսը սատկած են, մինն ել կենդանի չի:

— Հաղի՛, տո՛ւր, հա տո՛ւր,

Թե՛ թվանք չունեմ:

— Հյուղի՛, տո՛ւր հա, տո՛ւր,

— Յես ել չունեմ:

— Չատի՛... Մատի՛...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարծ ու յերկար, հաստ ու բարակ մի փետ կար. յերեսն առավ, նշան դրեց, մին ել տրա՛ք, վոր կրակեց... Նա կրակեց, յես զարկեցի. վոր զարկեցի՝ փովեց եսպես — ամեն թեւ հինգ դադ ու կես...

— Հաղի՛, դանակ...

Թե՛ դանակ չունեմ,

— Հյուղի՛, դու...

— Յես ել չունեմ:

— Չատի՛, Մատի՛...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հերս ել ունի, բերան չունի: Հաղին մորթեց, ես անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց,

չկարաց. Հյուսիսն մորթեց, չկարաց. Չատին չկարաց.
Մատին չկարաց, հերս ել չկարաց. յե՛ս քաջեցի, մոր-
թեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բազ — մի ասիլ, մի գո-
մեչ ասա: Հաղին շալակեց, չկարաց. Հյուսիսն շալա-
կեց, չկարաց. Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս
ել չկարաց, յե՛ս շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին ել
տեսնենք յերեք գեղ, յերկուսի տեղն իսկի չի յերե-
վում, մնումն ել իսկի մարդ չկա: Ես անշէն գյու-
ղում դես ման յեկանք, դեն ման յեկանք, մի տուն
գտանք, մեջը յերեք պառավ, յերկուսը մեռած, մնի
բերնումն ել չունչ չկա:

— Տղերք, ասինք, յեկեք բազում փլավ անենք:

Ես անշունչ պառավը գնաց դես ման յեկավ, դեն
ման յեկավ, կես բրինձ գտավ, յերեք պղինձ, յերկու-
սը ծակ, մինն ել իսկի տակ չունի:

Չուրը լցրինք ես անտակ պղինձը, մեջն ածինք
բազն ու բրինձը, անկրակ յեփեցինք: Յեփեց, յեփեց,
միսն ու բրինձը գնացին, մնաց Չուրը:

Վորսից յեկած սոված մարդի՛կ, վրա յեկանք,
կերա՛նք, կերա՛նք, վոչ աչքերս բան տեսավ, վոչ բե-
րաններս բան մտավ:

ԲԱՆԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Շենլիկ — բնակչություն:

1. Գտեք այն ստերը, վորոնցով այս գրվածքը գվարձալի
յե դառնում, (որինակ՝ «յերեք լիճ — յերկուսը ցամաք, մինի
մեջն ել Չուր չկա»):

2. Արտագրեցեք այս գրվածքում յեղող հակադրություն-
ները (որինակ՝ «կարճ ու յերկար փետ» և այլն):

3. Թվեցեք գրվածքում յեղած դեպքերը:

24. ՄԱԶԱՅ ՊԱՊՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Մեր արձակ յերկրում
Հարթ ու տափարակ,
Հորդ անձրևներ են
Լինում շարունակ:

Գարունքին մի որ,
Յերբ ջուրը վարար
Իր տակն եր առել
Դաշտեր ու անտառ,

Նստեցի նավակ,
Ասի մի գնամ,
Վառելիք բերեմ
Ձմեռվա համար:

Տեսա ջրի մեջ
Մի փոքրիկ ցամաք,
Վորտեղ նստած են
Չորս-հինգ նապաստակ:

Ասի. «Մի վախեք,
Գալիս եմ ահա,
Հորդացած ջուրը
Ձեզ նեղել ե, հա՞»:

Իսկ նրանք անշարժ,
Ականջները ցից,
Կպել են դետնին
Ու նայում են ինձ:

Մեկին բռնեցի,
Դրի նավակում,

Երեսները, դու տես
Թե վո՛նց են ցատկում:

Հենց վոր վերջինը
Թռավ ու հասնու,
Ջուրը բարձրացավ,
Ֆամաքը պատեց:

Ենն է, ի՛նչ... Հնո՛ւնց
Առաջ է գալիս
Մի կտոր գերան՝
Չորս չլդիկ վրան:

Գերանը թռկով
Նավիս կապեցի,
Ուռած ու փքված
Առաջ սահեցի:

Յերբ վոր մոտեցանք
Բանջարանոցին,
Իմ չլդիկները
Կարծես գժվեցին:

Նավակը ափին
Դեմ առավ թե չե,
Մի մտիկ արա —
Փախչե՛լ, ի՛նչ փախչե՛լ:

Յես ել ժպտալով՝
Նավակի միջից
Ասացի ուժգին
Նրանց յետևից.

«Իմ չիլ-չլդիկներ,
Դուք բարով գնաք,

Բայց ձմռան որին
Աչքիս չերեա՛ք,

Թե չե, հո գիտե՛ք.
Իմ հրացանը
Վորս է վորոնում
Դաշտում ձմռանը»...

ԲԱՌԵՐԻ ԲՍՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հորդ — վարար:
2. Սահել — արագ գնալ:
3. Ուժգին — ուժով:

25. Հ Ե Ր Ո Ս Տ Ղ Ա Ն

1

Մի քանի որ անդադար անձրև եր գալիս: Փոքրիկ վտակները մի-մի հեղեղ էին դարձել ու կատաղած ցած էին գլորվում լեռների վրայից. ձորերն ու կիրճերը գլղղում էին:

Յերկաթուղու գծի մոտ գտնվող մի տնակում խաղում էին չորս տղա, բոլորն էլ գրեթե իրար հասակակից:

— Դե՛հ, Սաքո՛, — կանչեց նրանցից մեկը, — յեթե քաջ տղա յես, կանգնիր յերկաթուղու վրա. չուտով անցնելու յե արագ գնացք:

— Ինչո՞ւ կանգնեմ, — պատասխանեց Սաքոն, — բան ու գործս կտրե՞լ ե:

— Ի՛, վախկոտ, — պարծենում էս, թե ամենքիցս քաջն ես:

Յեվ յերեք ընկերներն սկսեցին ծաղրել Սաքոյին, բայց նա վռչինչ չեր պատասխանում: Մի փոքր հետո

նրանք դուրս թռան սենյակից՝ նայելու, թե ինչպես կանցնի արագ գնացքը, իսկ Սաքոն նրանց յետևից ձայն տվեց.

— Ավելի լավ ե տանը մնաք, անձրևի տակ դուր տեղն ի՞նչ եք թրջվում:

Հանկարծ սարսափելի աղաղակներ լսվեցին:

— Սաքո՛, Սաքո՛:

Տղան դուրս վազեց: Նա իսկույն նկատեց, վոր մոտակա կամուրջը քանդվել է. իսկ գնացքը հենց այն ե՛ պիտի դար ու վրայովն անցներ:

— Կգլորվի, անպատճառ անդունդը կգլորվի:

Բոլորի սրտերը սաստիկ բաբախում էին:

— Պետք ե շուտով մի հնար գտնենք գնացքը փրկելու, — կանչեց Սաքոն: — Ինչքա՞ն ժամանակում կարելի յե կայարան հասնել:

— Կես ժամում. այստեղից կարճ ճամբով չորս կիլոմետր կլինի:

— Զի՞ կարելի ձի ճարել:

— Զրադացական Գիքորն ունի, բայց մինչև ջրաղացը բավական հեռու յե:


— Հովսեփ, վազի դեպի ջրաղացը և փորձիր մի կերպ կայարան հասնել գնացքի դուրս գալուց առաջ: Արմենա՛կ, դու ել շտապիր գծի ճամբով, դուցե կարողանաս պահապանին իմաց տալ, վոր գնացքը կանգնեցնի: Իսկ յես ու Աշոտը կմնանք այստեղ. յեթե դուք բան չանեք, մենք կաշխատենք կանգնեցնել գնացքը:

2

— Վաղուց ե այսպիսի հեղեղ չեմ տեսել, — ասում եր մեքենավարը:

— Յես ել, — պատասխանեց ոգնականը, — տե՛ս, սարերից ինչ հեղեղներ են թափվում:

Գնացքը վշչալով ոձի պես, արագ սողում եր կատաղած գետի ափով:



— Առա՛ջ նայիր, — կանչեց մեքենավարը, — այն ի՞նչ պիտի լինի:

— Յերկու յերեսա. ժամանակ են գտել գծերի վրա խաղալու: Սուլի՛ր, վոր հեռանան:

Մեքենան սուլեց: Արձագանքը խուլ կրկնվեց ձորերի պտույտների մեջ:

Ճամբին կանգնած էին տղաները. պարզ եր, վոր սպասում էին գնացքին: Մեկը թաշկինակը թափ եր տալիս, ավելի և ավելի ուժով:

— Ելի՛ սուլիր, ելի՛ սուլիր:

Անհանգիստ սուլոցները կրկնվում էին: Տղաներից մեկը փախավ, իսկ մյուսը կանգնած եր ուղիղ յերկու գծերի մեջ տեղն ու շարունակում եր թաշկինակը թափ տալ:

Մեքենավարն ու ոգնականն ամեն կերպ աշխատում էին գնացքը կանգնեցնել:

Միմիայն մի հարյուր, հարյուր քսան քայլ ե բաժանում յերեսային գնացքից:

«Արդյոք յերեսան պիտի փրկվի՞», մտածում եր մեքենավարը:

Գնացքն իր թափից դեռ առաջ եր մղվում և ա-
վելի ու ավելի մոտենում յերեխային: Անդադար սու-
լոցները վախեցրել էյին ուղևորներին: Բոլորն ել սար-
սափահար խռնվում էյին դեպի դռներն ու պատու-
հանները: «Ի՞նչ ե պատահել», — հարցնում էյին
միմյանց:

Միայն մի քսան քայլ եր բաժանում տղային մա-
հից, միայն տասը քայլ... Գնացքը կանգ առավ
տղայից յերկու-յերեք քայլ հեռու: Հանկարծ մեքե-
նավարի և ոգնականի կրծքից ուրախության մի բար-
ձր ճիչ դուրս թռավ:

Մեքենավարն անմիջապես դուրս թեքվեց և զայ-
րացած աղաղակեց.

— Անպիտան... դենը կորի՛ր:

Տղան խելագարի պես վեր թռավ և ցույց տալով
դեպի կամուրջը՝ ասաց.

— Քանզվել ե... Ու իսկույն ուժասպառ ընկավ
գետին:

Ուղևորները դուրս թափվեցին վագոններից ու
վազում էյին դեպի մեքենավարը՝ աղաղակելով.

— Ի՞նչ ե, ի՞նչ ե պատահել:

— Կամուրջը քանդված ե, ահա մեզ ազատողը —
կանչեց մեքենավարը հուզված:

Ու բազմությունը խռնվեց Սաքոյի գլխին...

Վերևից անձրևը չարունակ թափվում եր և լեռ-
նային հեղեղները դղրդալով վիժում էյին ցած, դեպի
փրփրած ու կատաղած գետը...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Վտակ — մեծ գետի մեջ թափվող փոքր գետակ:

2. Վիժել — արագ թափվել:

ՀԱՐՅԵՐ

1. Իչի՞ց ե յերևում Սաքոյի հնարազարդությունը:

2. Ինչի՞ց ե յերևում, վոր Սաքոն մյուս յերեխաներից ա-
վելի քաջ ե:

3. Մեքենավարն ինչո՞ւ յեր անհանգստանում:

4. Մի՞թե միայն Սաքոն փրկեց գնացքը:

5. Ուրիշ ի՞նչ կերպ կարելի յեր գնացքը խորտակվելուց
փրկել:

26. Գ Յ Ո Ի Ղ Ի Հ Ե Ք Ի Մ Ը

1

Հեքիմ Համոն վաղուց եր մեր գյուղում: Թե վոր-
տեղից եր յեկել Համոն՝ այդ վոչ վոք չգիտեր. իսկ
թե վո՛րտեղ եր սովորել նա իր հեքիմությունը՝ այդ
ևս մեծ դաղտնիք եր:

Գարնան սկիզբն եր: Ծերուկ Թաթոսի բրիգադի
յեզներից յերեքը հիվանդացել էյին. քոր եր, թե քոս՝
ինքը չգիտեր, միայն խեղճ անասուններն անդադար
քոր էյին անում, քսվում մսուրներին, սյուններին,
կճղակներով իրենց մազը վեր անում ու նույնիսկ
կաշին պլոկում:

Հեքիմ Համոն մի յերկու անգամ յեկել, ինչ վոր
մի բույսի արմատ եր յեփել ու ջուրը քսել յեզներին,
բայց հիվանդությունը չեր անցնում. յեզներն ավելի
էյին քորվում, նիհարում ու կեր ել չէյին ուտում:

Տեսելով, վոր այդ դեղը չի ոգնում, հեքիմը
վորոչեց հիվանդ անասունների վերքերը դաղել:

Յեզները դուրս բերին ու թոկով դունչներն ու
յեղջուրները պինդ-պինդ կապեցին սյուններից, վոր
դաղելիս չկարողանան շարժվել: Ու յերբ հեքիմ Հա-
մոն շիկացած շամփուրը ձեռքին այրում եր յեզների
հիվանդ մորթին, ու յեղջերահոտը տարածվել եր

չուրջը, հանկարծ Թաթոսի բակը մի ձիավոր մտավ. սա տեսնելով այդ բժշկությունը՝ աղաղակեց.

— Ի՞նչ եք անում. այդ վայրենությունն է:

Հեքիմն ու Թաթոսը շուռ յեկան ու տեսան չրջանային անասնաբուժին:

Դա անասնաբուժ Ավետիքյանն էր, վոր գնում էր Սարաչեն գյուղը, բայց արդեն մուլթն էր, ու յեկել էր Թաթոս ապոր տունը՝ գիշերելու:

2

— Ի՞նչ բանի յեք, — ասաց անասնաբուժը ձիուց իջնելով և մոտենալով նրանց:

— Դադում ենք, վոր քոսը բժշկվի, — հանցավորի ձայնով ասաց Թաթոսը:

— Քո՞ բրիգադի յեզներն են:

— Այո՛, իմն են:

— Ապա ո՞վ է սովորեցրել ձեզ այդ բժշկությունը, — զայրացած հարցրեց բժիշկը՝ դիտելով խեղճ անասունների կաշին ու բերանների կապը:

— Ա՛յ սա, մեր հեքիմն է սովորեցրել, — ցույց տվեց Թաթոսը Համոյին:

— Հա՛, յես դրան ցո՛ւյց կտամ, թող սպասի:

Ապա պատվիրեց յեզներին արձակել և ջուկ գոմում կապել:

Այնուհետև անասնաբուժն իմանալով, վոր գյուղում քոսով հիվանդ ուրիշ անասուններ ել կան, վորոշեց հաջորդ օրը մնալ այդ գյուղում: Կանչեց գյուղիսորհրդի նախագահին, նրա միջոցով պատվիրեց, վոր հետևյալ օրն առավոտյան բոլորն ել իրենց հիվանդ անասունները տանեն գյուղից դուրս. գտնվող դատարկ, ընդարձակ մարազներից մեկը:

3

Հաջորդ օրը մեկն իր կովը բերեց, մյուսը՝ հորթը յերրորդը՝ ձին, ու բժիշկը մեկ-մեկ հիսուն անասուն քննելով՝ տեսավ, վոր դրանք վարակված են քոսով: Պատվիրեց այդ անասունները տեղավորել մարազներում, մեծ կաթսաներով ջուր յեռացնել տվեց և պատվիրեց բոլոր անասուններին լողացնել: Ապա ծծումբով մի դեղ պատրաստեց, քսեց անասուններին և կարգադրեց, վոր առանձնացրած պահեն և յերեք օրից հետո նորից լողացնեն, նորից դեղ քսեն, ու նորից լողացնեն, այսպիսով 7-8 օրից հետո անասունները կբժշկվեն:

Այնուհետև կրաջրի հետ սուլեմա խառնեց ու պատվիրեց՝ բոլոր հիվանդ անասունների գոմերը լվանալ, մաքրել այդ լուծվածքով:

Այս դեպքից հետո այլևս հեքիմ Համոյին վոչ վոք չեք հավատում:

Սրանով ել վերջացավ նրա «բժշկությունը»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հեքիմ — բժշկություն անող, վորը բժշկություն չգիտե:
2. Կնդակ — պճեղ:
3. Մսուր — այն տեղը, ուր անասունների համար կեր են լցնում:
4. Դադել — այրել:
5. Սուլեմա — մկնդեղ (մի տեսակ թույն է):

Ծերացել եր կապիկը,
 Լավ չեր տեսնում պապիկը.
 Առավ ակնոց՝
 Մի վողջ կապոց:
 Ակնոցները փոքր ու մեծ՝
 Ձեռքերի մեջ պտըտեց
 Մին դնում է իր գլխին,
 Մին ել պոչի մեջտեղին,
 Մին լիզում է, թքոտում,
 Մին ել սրբում, հոտոտում:
 Հա փորձում է, հա փորձում,
 Բայց ակնոցը չի գործում.
 Են պսպղուն ապակին
 Լույս չի տալիս պապիկին:
 — Կորչե՛ն, — գոռաց, — ջուխտ ու կենտ.
 Նա՛ յե հիմար, նա՛ յե խենթ,
 Ով լսում է եղ խոսքին,
 Մաքեկանց հազար մի ստին:
 Սրանց մասին
 Ինչ վոր ասին,
 Սո՛ւտ է, սո՛ւտ.
 Ես ապակին
 Խափար աչքին
 Ի՞նչ ոգուտ:
 Ու կապիկը՝
 Ծեր պապիկը,
 Խորը վշտով ակնոցները
 Ենպես խփեց չոր քարին,
 Վոր ջուր կտրած փշրանքները
 Կանաչ-կարմիր կապեցին:

(Հեփյաք)

1

Յերկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են՝
 Ի՞նչ անեն, վո՞նց անեն, վոր իրենց տունը պահեն:
 Վճռում են, վոր փոքրը տանը մնա, մեծը գնա մի
 ունևորի ծառա մտնի, ոռճիկ ստանա, ուղարկի
 տուն: Փոքրը մնում է տանը, մեծը վեր է կենում,
 դնում մի հարուստ մարդու մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև դարնան կկվի
 ձեն ածելը: Ես հարուստը մի չլսված պայման է
 դնում ծառային: Ասում է. «Մինչև են ժամանակը թե
 դու բարկանաս, հազար մանեթ տուգանք տաս ինձ,
 թե յես բարկանամ — յես տամ»:

— Յես վոր հազար մանեթ չունեմ, վո՞րտեղից
 տամ, — ասում է ծառան:

— Վոչինչ, փոխարենն ինձ տասը տարի ձրի կծա-
 ռայես:

Տղան մին վախենում է այս տարորինակ պայմա-
 նից, մին ել մտածում է, թե ի՞նչ պետք է պատահի:
 Ինչ ուզում են, անեն. յես եմ ու չեմ բարկանալ,
 վերջացավ գնաց: Իսկ թե իրենք կբարկանան, թող
 իրենք ել տուժեն իրենց դրած պայմանով:

Ասում է՝ լավ. համաձայնվում է: Պայմանը կա-
 պում են ու մտնում է ծառայության:

2

Մյուս ուրը վաղ, տերը վե՛ք է կացնում ծառային,
 ուղարկում է արտը հնձելու.

— Գնա, ասում է, — քանի լույս է, հնձի, վոր
 մութն ընկնի, կգաս:

Ծառան դնում է ամբողջ ուրը հնձում, իրիկունը
 հոգնած գալիս է տուն:

Տերը հարցնում է.

— Եդ ո՞ւր յեկար:

— Դե արևը մեր մտավ, յես ել յեկա:

— Ձե, եդպես չի. յես քեզ ասել եմ՝ քանի լույս է, պետք է հնձես: Արևը մայր մտավ, բայց տես նրա ախպեր լուսնյակը դուրս յեկավ: Սա ի՞նչ պակաս է լույս տալիս...

— Եդ վո՞նց կլինի, — զարմանում է ծառան:

— Հը՛, դու արդեն բարկանում ես, — հարցնում է տերը:

— Ձե՛, չեմ բարկանում... Յես միայն ասում եյի՝ հոգնած եմ... մի քիչ հանգստանամ, — կախադրում է վախեցած ծառան ու դնում է նորից հնձելու:

Հնձում է հնձում, մինչև լուսնյակը մեր է մըտնում: Բայց լուսնյակը մեր է մտնում թե չե, դարձյալ արեգակն է դուրս գալիս:

Ծառան ուժասպառ վեր է ընկնում աբտում:

— Վայ քո արտն ել հարամ ըլնի, քո հացն ել, քո տված ոռճիկն ել, — սկսում է հայհոյել հուսահատված:

— Հը՞, դու բարկանում ես, — կանգնում է գլխին հարուստը: Յերբ վոր բարկանում ես, մեր պայմանը պայման ե. ել չասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում է ծառային կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում է կրակի մեջ: Հազար մանեթ չուներ, վոր տաք, հոգին ազատեր, տասը տարի ել ես տեսակ մարդու ծառայելն անկարելի բան եր:

Միտք է անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ է տալիս հարստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:



3

Հը՛, ի՞նչ արիր, — հարցնում է փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նստում է, գլխին յեկածը պատմում, ինչպես վոր պատահել եր:

— Բան չկա, — ասում է փոքրը, — դարդ մի անի. դու տանը կաց, հիմի ել յե՛ս գնամ:

Վեր է կենում, հիմի ել փոքր ախպերն է դնում ծառա մտնում ելի նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ վորոչում է մինչև դարնան կկվի ձեն ածելն, ու պայման է դնում, վոր յեթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա ու այն որից ել ծառան ազատ է:

— Ձե՛, եդ քիչ է, — հակառակում է տղան, — թե դու բարկանաս, դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հազար մանեթ տամ, կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Լա՛վ,— ուրախանում ե հարուստը:

Պայմանը կապում են ու այժմ ել փոքր ախպերն ե մտնում ծառայության:

Առաջնորդ լուսանում ե, ես ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս ե գնում, տուն ե գալիս, ես ծառան դեռ քնած ե:

— Ա՛յ տղա, դե վեր կաց ե՛, որը ճաշ դառավ:

— Հը՞, բարկանո՞ւմ ես,— գլուխը վեր ե քաշում ծառան:

— Չե՛, չեմ բարկանում,— վախեցած պատասխանում ե տերը,— միայն ասում եմ՝ պետք ե արտը գնանք՝ հնձելու:

— Հա՛, վոր եդ ես ասում, վոչինչ, կգնանք: Ի՞նչ ես շտապում:

Վերջապես ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխները հագնել:

Տերը դուրս ե գնում, ներս ե գալիս, սա դեռ տրեխները հագնում ե:

— Ա՛ տղա, դե՛ շուտ արա, հագի, ելի...

— Հը՞, հո չե՞ս բարկանում:

— Չե՛, ո՞վ ե բարկանում. յես միայն ուզում եյի ասել, վոր ուշանում ենք:

— Հա՛, եդ ուրի՛շ բան ե. թե չե պայմանը պայման ե:

Մինչև ծառան տրեխները հագնում ե, մինչև արտն են գնում, ճաշ ե դառնում:

— Ել ի՞նչ հնձելու ժամանակ ե,— ասում ե ծառան,— տեսնում ես ամենքն ել ճաշում են, մենք ել մեր ճաշն ուտենք՝ հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ճաշից հետո ել ասում ե. «Մշակ մարդ ենք, պետք ե մի քիչ քնենք, հանգստանա՞նք, թե չե»:

Գլուխը կոխում ե խոտերի մեջն ու քնում ե մինչև իրիկուն:

— Տո՛, վեր կաց, մթնեց, ե՛, ուրիշները հնձե-

ցին, մեր արտը մնաց. վա՛յ քո դեսը ղրկողի վիզը կտորվի, վա՛յ քո կերածն ել հարամ ըլի, քո արածն ել... Ես ի՞նչ կրակի մեջ ընկա,— սկսում ե գոռոռալ հուսահատված տերը:

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր ե քաշում ծառան:

— Չե՛, ո՞վ ե բարկանում. յես են եյի ասում, թե մթնել ե, տուն գնալու ժամանակն ե:

— Հա՛, եդ ուրի՛շ բան ե, գնանք, թե չե հո մեր պայմանը գիտես, վայ նրա մեղքը, ով բարկացավ:

4

Գալիս են տուն: Տեսնում են հյուր ե յեկել:
Ծառային ղրկում ե, թե գնա վոչխար մորթի:

— Վո՞րը:

— Վորը պատահի:

Ծառան գնում ե:

Մի քիչ հետո լուր են բերում հարստին, թե հասիր, վոր քո ծառան ամբողջ հոտը կտորեց:

Ես հարուստը վազում ե, տեսնում՝ ճիշտ վոր ինչ վոչխար ունի, բոլորը մորթել ե ծառան:

Գլխին վա՛յ ե տալիս, գոռում.

— Եդ ի՞նչ ես արել, ա՛յ անխիղճ, քո տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր:

— Դու ասիր՝ «ինչ վոչխար պատահի, մորթի», յես ել յեկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթուեցի, ուրիշ ավել պակաս ի՞նչ եմ արել,— հանգիստ պատասխանում ե ծառան: Բայց կարծեմ դու բարկանո՞ւմ ես:

— Չե՛, չեմ բարկանում, միայն ափսոսս գալիս ե, վոր եսքան ապրանքս փչացավ:

— Լավ, վոր չես բարկանում, ելի կծառայեմ:

Հարուստը մտածում է՝ ինչ անի, վոր ես ծառայից ազատվի: Պայման ե կապել մինչև մին ել զարնան կկվի ձեն ածելը, այնինչ՝ դեռ նոր են մտել ձմեռը. դեռ վորտեղ են զարունն ու կկուն:

Միտք ե անում, միտք, մի հնար ե մտածում: Կնոջը տանում ե անտառում մի ծառի վրա հանում ու պատվիրում, վոր «կուկու» կանչի: Ինքը գալիս, ծառային տանում է՝ թե արի գնանք վորսի: Հենց անտառ են մտնում թե չե, կինը ծառի վրայից կանչում է. «կուկու», «կուկու»:

— Ըհ, աչքդ լույս, —ասում ե ծառային տեղը, — կկուն կանչեց, ժամանակդ լրացավ:

Տղեն գլխի յե ընկնում տիրոջ խորամանկությունը:

— Չե՛, — ասում ե, — ո՞վ ե լսել, վոր տարվա ես յեղանակին, ձմեռվա կիսին, կկուն ձեն ածի, վոր սա ձեն ե ածում: Յես պետք ե ես կկվին սպանեմ: Սա ի՞նչ կկու յե...

Ասում ե ու հրացանը քաշում դեպի ծառը:

Տերը գոռալով ընկնում ե առաջը, սկսում կռվել ու անիծել նրան ծառա բռնելու ուրը:

— Հը՛, չլինի՞ թե բարկանում ես...

— Հա, ախպեր, հերիք ե, —ասում ե հարուստը: Արի՛, ինչ տուգանք տալու յեմ, տամ, քեզանից ազատվեմ. իմ դրած պայմանն ե, յես ել պետք ե տուժեմ:

Եսպես փոքր ախպերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում ե, հազար մանեթ տուգանքն ել առնում ու վերադառնում տուն:

ԲԱՆՈՒԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տուգանք — հարկադիր վճար:

2. Պարտամուրհակ — գրություն մի ուրիշին վճարելիք պարտքի մասին, պարտապանի ստորագրությամբ:

Մեր գյուղը գտնվում եր բաբձր լեռներում, քաղաքից հեռու: Գյուղի ճանապարհները նեղ ու քարքարոտ եյին: Այդ ճանապարհներից կարելի յեր անցնել միմիայն ձիով կամ եշով:

Գյուղացիներն արտերը վոր հնձում եյին, իրենց ցորենի ու գարու խուրձերը ձիով եյին փոխադրում տուն: Սայլն անգամ դժվար եր բանում մեր ճամբաներում:

Կոլանտեսականներից շատերը քաղաք չեյին տեսել: Դժվար եր վոտքով ահագին ճանապարհն անցնել՝ քաղաք հասնելու համար: Գյուղից քաղաք տարվող միջերկրներն ու քաղաքից բերվող սպրանքները մեր կոոպերատիվը դժվարությամբ եր փոխադրում:

Ահա թե ինչումեր գյուղի կոլանտեսականներն ամբողջ յերկու տարի կոլեկտիվ կերպով աշխատեցին, վոր մեծ ու ընդարձակ ճանապարհ չինեն:

Գարնան մի ու ճանապարհը համարյա պատրաստ եր: Ամբողջ գյուղը շտապում եր աշխատանքը բոլորովին ավարտել, վորովհետեւ մոտենում եր Մայիսի 1-ը. այդ ուր պետք ե տոնեյինք ճանապարհի բացումը:

Մայիսի 1-ի առավոտը հայրս տնից դուրս գալիս մայրիկիս ասաց.

— Ասողի՛կ, աշխատանքդ վերջացրու, յերեխաներին վերցրու արի հրապարակը: Այսօր քաղաքից մեղ համար ավտոմոբիլ են բերելու:

Հայրիկս թերթի մեջ շատ եր կարդացել ավտոմոբիլի մասին, քաղաքում յեղած ընկերներս ել պատմել

եյին, բայց յես ավտոմոբիլ չեյի տեսել: Մայրիկիս շտապեցնում եյի, վոր տան գործը կիսատ թողնի ու գնանք հրապարակ:

Յես ու վեց տարեկան իմ քույր Սոնիկը հագանք մեր նոր զգեստները, և մայրիկիս հետ ուրախ-ուրախ գնացինք հրապարակ:

Ամբողջ մեր գյուղը խմբվել էր հրապարակում. թե՛ մեծ, թե՛ փոքր, թե՛ ծեր, թե՛ յերիտասարդ, թե՛ կին, թե՛ տղամարդ — բոլորն էլ այնտեղ եյին:

Հրապարակից յերևում էր գյուղի դեմն ընկած մի սար, վորի վրայով անցնում էր նոր ճանապարհը: Այդ ճանապարհին մի խումբ կոլտնտեսականներ կարմիր դրոշակով սպասում եյին հյուրերին:


3

— Յեկա՛ն, յեկա՛ն, — բղավեց փոքրիկ Լեոնը, վոր բարձրացել էր բարդու ծառին և ծառի վրայից նայում էր ճանապարհին: Բոլորն էլ նայեցին դեպի ճանապարհը:

Սարի հետևից դուրս յեկավ ու փոշու ամպ բարձրացնելով առաջ էր սլանում ավտոմոբիլը: Նա կանգ առավ իրեն դիմավորող գյուղացիներին խմբի մոտ ու հետո շարունակեց իր ճանապարհը:

Յերբ ավտոմոբիլը բոլորովին մոտեցել էր հրապարակում հավաքված մարդկանց, հանկարծ մի բարձրաձայն վոռնոց լավեց: Կարծես ամբողջ մի վոհմակ գայլեր եյին վոռնում: Այդ անսպասելի ձայնից կանայք ու յերեխաները սարսափահար յեղան: Մի քանիսն սկսեցին փախչել: Իմ քույր Սոնիկը փաթաթվեց մայրիկիս վոտքերին: Ճիշտ ասած, յես էլ մի փոքր վախեցա այդ վոռնոցից, վորովհետև չգիտեյի, թե ավտոմոբիլի չչափն է այդպիսի ձայն հանում:

Մեր հարևան Թեան բիձեն, վոր հիսուն տարեկան մի հովիվ էր, իր մահակը վեր բարձրացրեց ավտոմո-



բիլի վրա, վոր խփի, իսկ նրա շուրջը կանգնած մեր կոլտնտեսականները ծիծաղից թուլացել եյին:

Յես մորս փեշերից ձիգ տվի ու մոտեցանք ավտոմոբիլին: Բոլորն էլ յեկան հավաքվեցին և հետաքրքրությամբ սկսեցին նայել ավտոմոբիլից իջնող հյուրերին:

4

Շոֆերը մեր գյուղացի Միսակն էր, վոր արդեն մի քանի տարի յեր գյուղից հեռացել էր: Գյուղացիներն սկսեցին բարևել, հարց ու փոքր անել Միսա-

կին. մի քանիսն ել կատակներ եյին անում ու ծիծաղում Թեան բիձի վախենալու վրա:

— Միսա'կ, ի՞նչ կատաղած գոմեշներ եյիր լծել ավտոմոբիլիդ,— ասաց իմ հորեղբայր Վահանը,— քիչ մնաց խեղճ Թեան բիձին պողահարեյին: Քիչ մնաց սիրտը ճաքեր վախից:

— Այ տղա,— ծիծաղելով պատասխանեց Միսակը,— ի՞նչ գոմեշներ, բա չե՞ս տեսնում, վոր ձիեր են: Խրխնջոցը չլսեցի՞ր:

Թեան բիձեն ինքն ել իր արածի վրա ծիծաղեց ու մի քիչ նեղացած ավելացրեց.

— Այ ջահեղներ, յես տեսե՞լ եմ եդ անտերը, վոր չվախենամ, ո՞վ գիտի ինչ սատանի սարքած բան է:

— Վոչի՛նչ, Թեան բիձա, դու մեղավոր չես,— ասաց Միսակը,— ձիերը շատ եյին տաքացել, հիմի մի քիչ ջուր կտամ, կհովանան:

Ու միսակը խնդրեց հորեղբորս, վոր մի դույլ ջուր բերել տա:

Յերբ ջուրը բերեցին, չոֆերը ջուրը լցրեց մեքենայի մեջ, ապա դառնալով Թեան բիձին, ասաց.

— Թեան բիձա, մաշինեն արդեն հովացավ, հիմա լավ կգնա: Արի քեզ մի քիչ տանեմ, ման ածեմ:

— Չե՛, չե՛, չե՛,— վախեցած ասաց Թեան բիձեն,— յես չեմ նստի:

— Թեան, նստի՛ր, նստի՛ր, նստի՛ր Թեան,— ուրախ-ուրախ ձայն տվեցին ամեն կողմից կոլտնտեսականները, և մի քանի յերիտասարդ նրան թեանցովե անելով բարձրացրին մեքենա:

Այդ ժամանակ ավտոմոբիլին մոտեցավ հայրս:

— Միսակ ջան,— ասաց նա,— յերեխաներին ել նստեցրու, ման ածա:

Հայրիկա՛ ավտոմոբիլի դուռը բաց արեց, յերեխաներին հրավիրեց, վոր նստեն: Յերեխաները լցվեցին ավտոմոբիլի մեջ և շրջապատեցին Թեան պապին: Յես ու իմ քույր Սոնիկն ել նստեցինք:

Ավտոմոբիլում Թեանի մահակը յերեխաներին խանդարում եր. գյուղացիներից շատերը դիմեցին նրան, թե մահակդ տուր: Բայց Թեան բիձեն չհամաձայնեց: Նա յերկար մահակը տնկել եր իր ծնկների արանքում ու յերկու ձեռքով ամուր սեղմել:

Յերբ բոլորս տեղավորվեցինք, չոֆեր Միսակը նստեց իր տեղը, ու մեքենան աշխատեցրեց: Ավտոմոբիլի տակ ինչ վոր բան դողուաց, բոբուաց, հետո ավտոմոբիլը տեղից շարժվեց:

Մենք սկզբում մի քիչ վախեցանք, բայց չոֆերն ասաց.

— Յերեխաներ,— ասեք «ուռուա՛»...

Մենք բոլորս ել «ուռուա՛» կանչեցինք, և «ուռուա՛» կանչելով՝ անցանք գյուղի փողոցներից:

Միսակը մեկ-մեկ յերեսը յետ եր դարձնում ու ծիծաղելով հարցնում՝ Թեան բիձին.

— Հը՞, ձիերս վո՞նց են քաշում:

Թեան բիձեն կարճ պատասխանում եր.

— Հա՛, բալա ջան, հա՛...

Յերբ նորից յեկանք գյուղ և հրապարակին եյինք մոտենում, Միսակը նորից հարցրեց.

— Թեա՛ն բիձա, մեկ ել յետ դառնա՞մ:

— Չե՛, չե՛, բավական ա,— պատասխանեց նա ու այս անգամ հանգիստ կերպով ծիծաղեց, միբուրն ուրախությունից չփեց ու ապա սկսեց շոյել յերեխաներին ու հպարտությամբ ասաց.

— Հապա, յերեխե՛ք, ավտոմոբիլը լավ բան ա, տեսե՛ք ինչքան չուտ թթու ջուրը հասանք, յետ յեկանք:

Կոլտնտեսականները մեզ շրջապատեցին և իջեց-
րին:

— Կեցցե՛ք թւանը, կեցցե՛ք, բացականչում եյին
մի քանիսը:

— Հա՛, մեր թւանը վոչ գայլից ա վախենում,
վոչ ավտոմոբիլից, — ասում եյին նրա հասակակից
գյուղացիները:

Այդ նույն որն ուրիշ չատ մարդիկ, կանայք ու
յերեսխաներ ել ման յեկան ավտոմոբիլով, բայց առա-
ջին նստողները մենք ու թւան բիձեն եյինք:

Մայիսի մեկի տոնը մեծ ուրախությամբ անցավ
և Մայիսի մեկին մեր գյուղի ու քաղաքի նոր մեծ ճա-
նապարհն ել բացվեց:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մքերք — ապրանք:
2. Սլանալ — աքաղ թռչել:
3. Սարսափահար — սաստիկ վախեցած:
4. Պագահարել — յեղջուրներով խփել:
5. Խրխիմջ — ձիու ձայն:
6. Ղեկ — մեքենային ուղղություն տվող մասը:
7. Մահալ — հովվական մեծ փայտ:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ գյուղը կտրված եր քաղաքից և ի՞նչ եր դրա հե-
տևանքը:
2. Նոր ճանապարհ չինե՞ն ինչո՞ւ յեր անհրաժեշտ:
3. Գյուղն ինչպե՞ս դիմավորեց առաջին ավտոյին:
4. Թւան բիձան ինչո՞ւ յեր վախենում ավտո նստելուց:
5. Փոխադրական ուրիշ ի՞նչ միջոցներ կան:

Այս հարվածը պատմեցեք հետևյալ պլանով.

ա) Ճանապարհի դերը գյուղի և քաղաքի կապի խնդրում:

բ) Ճանապարհի բացման հանդեսի նախապատրաստումը
Մայիսի 1-ին:

գ) Ավտոյի մուտքը:

դ) Գյուղացիներին դիմավորումն ու ծանոթությունն ավ-
տոյին:

ե) Շրջապայություն ավտոյով:

30. Ա Գ Ռ Ա Վ Ն Ո Ի Ա Ղ Վ Ե Ս Ը

Բախտի բերմամբ
Թե պատահմամբ,
Մի մեծ աղաւ
Մի գունդ պանիր
Դաշտում դաւալ,
Կտուցն առաւ,
Ծառին թռաւ:
Ո՛ր, ինչ պանիր, դեղին վոսկի...
Բայց դեռ չառած համը իսկի,
Աղվեսն անցավ ծառի մոտով,
Գերվեց,
Երվեց
Պանրի հոտով:
Վաղեց, զնաց բերնի ջուրը
Ու թուլացան կուռն ու ճուռը:
Են ժամանակ իրա ձևին,
Ծառի տակից, աչքն աղաւվին,
Հեղիկ նազիկ,
Փափկամազիկ,
Բացեց լեզուն անուշ, մեղուշ,
Թափեց, չափեց չաքար ու նուշ.
«Ինչքան լավն ես,
Յես քո գերին —
Գո եղ սևիկ

Վառ աչքերին,
 Նուրբ ծալքերով
 Զույգ թևերին:
 Մի դու մտիկ —
 Եղպես թիկ,
 Եղպես ճտիկ.
 Մախմուր ազին,
 Խառ ու դումաշ
 Ատլաան հագին:
 Գիտեմ անշուշտ, իմ քույրիկի՛
 Զայնըն ել ե հենց սոխակի:
 Յերգի՛, քուրիկ, մի ամաչի՛,
 Իմ ուղածը մի մեծ բան չի»:
 Ազուս ազին իրեն տված
 Գովեստներից չճամօ՛, ուռած՝
 Ազուս ազին
 Բկովը մին,
 Վոր չկուռա՛ց—
 Պանիրն ընկավ ծառիցը ցած,
 Շողոքորթը հախուեց, գնաց:

ԲԱՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Կուռն ու փուր — ձեռքն ու վոտքը:
2. Մախմուր — թավիշ:
3. Խառ ու դումաշ — մետաքս, թանկագին կտոր:
4. Ատլա — մետաքսե կտոր:
5. Շողոքորթ — կեղծավոր:
6. Հախուի — վրա տալով, աղահաբար ուտել:

Ինչպես մեր չեջանի բոլոր ավաններում ու շենե-
 բում, այնպես ել մեր գյուղում կային մի քանի ֆուր-
 գոնատերեր. սրանց գործն այն էր լինում, վոր միշտ
 բուրդ, բամբակ, ալյուր, գետնախնձոր ու մարդ եյին
 տեղափոխում գյուղից քաղաք, քաղաքից գյուղ:

Այդ ֆուրգոնատերերից մեկն ել մեր հարևան
 Պետրոսն էր:

Լավ մարդ էր հարևան Պետրոսը:

Յերբ իր քառածի ֆուրգոնով նա վերադառնում
 էր քաղաքից, մենք, յերեսաներս, աղմուկով ընդառաջ
 էյինք գնում նրան և ծառս լինում ֆուրգոնի ճաղե-
 րից: Մեզ նկատելով, նա գրպանից հանում էր կան-
 ֆետ ու խնձոր և «հա՛՛ ձեզ, լակոտներ» ասելով,
 ցրում գետին: Մենք իրար թակելով, հավաքում էյինք
 կանֆետ ու խնձորը և գնում չըջապատում նրան իր
 դռանը՝ լսելու, թե ինչ լավ-լավ բաներ պետք ե պատ-
 մի, կամ տեսնելու, թե ինչ ե բերել քաղաքից:

Յեվ այնպիսի՛ բաներ էր բերում նա քաղաքից իր
 տղաների համար, վոր յես միշտ նախանձում էյի
 նրանց: Իր տղաների համար նա բերում էր ձտքավոր
 կոշիկներ, չվի, ծոպավոր գոտի, և վերջապես, այն-
 պիսի բաներ, վոր իմ հայրը յերբեք չէր առնում ինձ
 համար... Մի խոսքով՝ հարևան Պետրոսը շատ էր
 սիրում իր յերեսաներին: Բայց նա ավելի շատ սի-
 րում էր իր ֆուրգոնը և ձիերին և ամեն անգամ պար-
 ծենում էր, վոր իր ֆուրգոնի և ձիերի նմանը չի
 գտնվի վողջ նահանգում:

— Հապա՛, մերը չմեռնի Պետրոսի ձիերի,— ա-
 սում էր նա,— նրանց նման ձի վո՞րտեղ կա... Սրանք
 հրեղեն են, վոչ թե ձիեր... Մի անգամ Յերևանի
 ճամբին ամենքի ձիերն ել հողմեցին, վեր թափվեցին,

իսկ իմոնք, այնպես եյին գնում, վոնց վոր թեա-
վոր,— Ֆը՛ռռ... .

Ու այս ասելով, հարեան Պետրոսը գոհությամբ
ծծում եր ծխամորճը:

2

Պետրոսը մի սովորութիւն ուներ. միշտ մեր
տունը կգար և ձմռան յերկար յերեկոններին հորս հետ
կնստեր ոջախի առջև ու զրույց կաներ զանազան բանե-
րի վրա, ամեն խոսքի վերջում կկրկներ.

— Եսպես բաներ, հարեան...

Մի անգամ, շատ լավ միտս ե, այդպիսի մի
զրույցի ժամանակ հայրս ասաց նրան.

— Պե՛տրոս, հիմի ձեր գործը վատ կլինի. ասում
են, յերկաթուղի պետք ե գա...

— Բարով, հազաբ բարի,— ասաց հարեան Պե-
տոսն անտարբեր,— գա ել, գնա ել. ինձ ի՛նչ...

— Վո՛նց թե,— ասաց հայրս,— ախր այդ յերկա-
թուղին վոր գա, նրանից հետո ամեն բան՝ մարդ,
ապրանք՝ յերկաթուղով կտանեն կրերեն, այնպես վոր
ել Փուրգոնի գործ քիչ կմնա...

Այս խոսքերի վրա հարեան Պետրոսը չիբուխը հա-
նեց բեբանից և զարմացած հորս նայեց.

— Վո՞նց թե,— ասաց նա, կարծես լսածը լավ-
չհասկանալով,— մաշինեն ֆուրգոնի բանը կանի՞:

— Իհարկե,— սլատասխանեց հայրս,— գնացքն այն-
պիսի բեռ ե տանում, վոր ֆուրգոնը չի կարող:

— Ե՛հ, դու ել բան ես ասում,— ասաց հարեան
Պետրոսը և նորից չիբուխը դրեց բեբանը:

— Յեռ քեզ հաստատ բան եմ ասում,— ասաց
հայրս և ոկսեց բացատրել, թե յերկաթուղին ինչեր
ե անում:

Նա ասում եր, թե լրագրում կարդացել ե, վոր
այդ գնացքը մեր խոտի ամբողջ դեղը մի որում կա-

րող ե տանել մինչև «Պրանգստան», իսկ մեր ամբողջ
գյուղն իր տավարով ու մարդկանցով կտեղափորի իր
մեջ: Նա ուրիշ շատ բաներ ել պատմեց, բայց դրան-
ցից միտս ե այն խոսքը, թե գնացքը կարող ե հարեան
Պետրոսի ֆուրգոնն իր ձիերով, ջրի դուլով ու զարու-
խախալով մի քանի բոպեյում թոցնել քաղաք:

Հորս խոսքերը լսելով, յես զարմանում եյի, թե
ինչպես կարելի յե ֆուրգոնն իր ձիերով տանել այդ-
պես. ապա այդ գնացքը չի կտարվի՞, կամ ձիերը
նրան քացի չեն տա՞: Մինչ յես զարմանում եյի այս-
պես, հարեան Պետրոսը, ծխամորճը քաշելով, բեզերի
տակ ծիծաղում եր հորս խոսքերի վրա: Յեմ յերբ
հայրս վերջացրեց իր բացատրութիւնը, նա ծխամոր-
ճը հանեց բեբանից, մոխիրը թափ տվեց ոջախի մեջ
ու դարձավ հորս.

— Հը՛մ, մերը մեռնի՛ Պետրոսի ֆուրգոնի, վոր
մաշինեն նրա բանը պիտի անի... Մի տեղ վոր ձի
չլծեն, մի տեղ վոր լուծ ու սանձեր չլինեն,— նրանով
կարելի՞ յե մարդ ու ապրանք տանել-բերել...

— Քեզ ասում եմ, վոր կարելի յե,— ասաց հայրս
և նորից սկսեց բացատրել շողեկառքի առավելութիւն-
ները:

Նա աշխատում եր հարեան Պետրոսին համոզել,
վոր յերկաթուղու գնացքը կարողանում ե ամեն բան
տանել. բայց հարեան Պետրոսը չեր համոզվում ամե-
նեին և շարունակ կրկնում եր խնդալով.

— Հաբեա՛ն, մի՛ հավատա...

Յեմ սրանից հետո գլուղում ո՛վ վոր խոսում եր
յերկաթուղու, և մանավանդ գնացքի առավելու-
թիւնների մասին, հարեան Պետրոսը միշտ ասում եր
ժպիտն յերեսին.

— Հաբեա՛ն, մի՛ հավատա. նա ֆուրգոնի տեղը
չի բռնի...

ԲԱՍՈՇՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ավան — մեծ գյուղ:
2. Շեն — գյուղ:
3. Քառաձի — չորս ձի լծած:
4. Ծոպավոր — փունջ թելեր ունեցող:
5. Ծխամորս — չիրուխ (ծխելու):
6. Ֆրանգստան — Ֆրանսիա:
7. Ծառս լինել — բարձրանալով կախվել:
8. Խախալ — մաղ՝ ցորեն կամ դարի մաքրելու համար:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ Փուրղոնատներն իրենց Փուրղոններով շարունակ գյուղից քաղաք և քաղաքից գյուղ ելին դնում:
2. Յերկաթուղին ի՞նչ հարմարություններ ստեղծեց քաղաքի և գյուղի բնակիչների համար:
3. Ինչո՞ւ Պետրոսը չէր հավատում, թե յերկաթուղին կարող է փոխարինել Փուրղոնին:
4. Յեթե կարդացել եք Ստ. Զորյանի «Յերկաթուղին» գրքուկը, պատմե՞ք շարունակությունը. յեթե չեք կարդացել, ինքներդ հորինե՞ք շարունակությունը:
5. Կարդացե՞ք գրվածքի այն մասերը, վորոնք ցույց են տալիս Փուրղոնատեր Պետրոսի համառությունն ու պարծենկոտությունը:
6. Պատմե՞ք, թե առաջին անգամ դուք ի՞նչպես գնացք նստեցիք և ո՞ւր գնացիք:

32. Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

1

Փողոցի մայթով 10-11 տարեկան մի տղա յերանցնում:

— Տացիա՛, — լսվում է անկյունից:

Տղան գլուխը բարձրացնում է: Տեսնում է՝ մրտ, պատառոտած շորերով մի յերեխա մոտենում է նրան:

— Ո՞ւր ելիր կորել ախքան ժամանակ: Վա՛հ, այս ինչ ե. վո՞րտեղից ես ճարել այդ լավ շորերը, — հարցրեց մոտեցողը զարմանքով:

Տղան ժպտալով ասաց.

— Ինձ այլևս Տացիա չեն ասում:

— Մենք կարծում ելինք, թե քեզ արդեն բանտարկել են, իսկ դու գուգվել ես. ել լայեղ չես անում մեզ մոտ գաս, հա՞...

— Վո՛չ, — նեղացավ տղան, — չեն թողնում, գործեր ունեմ, սովորում եմ: Գիտե՞ս, Պավլիկ, դու ել արի. ձեռք քաշիր թափառելուց — քեզ ել կընդունենք:

— Ի՞նչ ես ասում, քիչ է մնում սովածությունից ուշաթափվեմ, ել ի՞նչ ուսում, ի՞նչ բան...

— Իսկ մենք կուշտ ենք, տեղներս տաք է, ուտե՛լիքներս առատ:

Պավլիկն ականջները սրեց և ավելի մոտեցավ:

— Այգիներ ենք դցել, մշակում ենք: Ներկայացումներ ենք տալիս. յես ել եմ խաղում. վոր իմանաս՝ թե ինչքա՛ն գո՛հ եմ. յե՛կ, դու ել յեկ, ընկերներին ել բեր. չեք զղջա:

Պավլիկն իր ականջներին չէր հավատում: Նա ճիշտ է, լսել էր, վոր «խուժաններին» հավաքում են, ուսում են տալիս, աշխատանք սովորեցնում, բայց չէր հավատում, վոր ազատ կյանքը թողած «խուժանը» կարող է գո՛հ լինել այդպիսի վիճակից:

— Պատմի՛ր, ի՞նչպես ընկար այդտեղ:

— Մանկական կոմունայի մասին լսե՞լ ես: Ա՛յ, այնտեղ եմ լինում: Թե ինչպես ընկա՝ կպատմեմ: Գնանք:

2

— Հիշո՞ւմ ես մեր հին բնակարանը՝ այդու մոտ, ուր արձաններ կան: Դրանցից առաջինը, վոր ձեռքը մեկնած կանգնել է, անունը Կամո յե. նրա անունն եմ կրում յես այժմ:

— Կամո՞:

— Հա, մեռած ե հիմա: Կենդանության ժամանակ նա հարուստների թշնամին եր, կռվում եր նրանց դեմ: Հիշո՞ւմ ես, մի անգամ, այդ այգում շատ ժողովուրդ կար հավաքված. ինչ վոր մարդիկ եյին խոսում. նրանք Կամոյի կյանքի ու կռիվների մասին եյին պատմում:

— Հիշում եմ, հիշում,— գոչեց Պավլիկը.— նրանք բաց արին այն սպիտակ քաթանը, վորով ծածկված եր արձանը:

— Հա՛, այն որը մենք շատ սոված եյինք, դու մի տեղից հաց ճարեցիր, իսկ ինձ ուղարկեցիք յերչիկ բերելու: Յես գաղտագողի մտա մի խանութ, յերչիկներ թոցրի: Բայց խանութպանը վրա հասավ և գըրպանիցս յերչիկները հանեց:

Սանութպանն ինձ բռնեց, վտաների տակ գցեց, ուզում եր ծեծել, բայց մի անծանոթ յերիտասարդ խանութ մտավ:

Նա ինձ ազատեց դադադած խանութպանի ձեռքից, փաղաքեց, անունս հարցրեց և տարավ իր հետ: Ինչպես տեսնում ես, այժմ պիտներ եմ... անունս ել Կամո:

Պավլիկն ապշած, բերանը բաց լսում եր:

— Ուրեմն սրանից հետո չե՞ս գա մեզ մոտ:

— Վո՛չ:

Պավլիկը մտածմունքի մեջ ընկավ:

— Շատ եմ շտապում, կգա՞ս ինձ հետ,— հարցրեց Կամոն:

— Իսկույն: Մի փոքր սպասի՛ մտածեմ: Տղաների հետ ել կտեսնվեմ և նրանց ել կասեմ: Դու վո՞ր տեղ ես բնակվում:

Կամոն հասցեն տվեց:

— Այս յերեկո մեզ մոտ ներկայացում կա, անպատճառ յեկեք,— ասաց Կամոն:

— Կգանք: Յտեսությո՛ւն:

— Յտեսություն, չմոռանաս՝ ինչ վոր ասացի:

Ակումբի դահլիճը լուսավորված ե: Մեծ բազմություն ե հավաքվել: Յերեկոյթը չուտով սկսվելու յե, սակայն Կամոն չի կարողանում հանգստանալ. կարծես թե մի բան ճնշում ե նրան, վազվզում ե, շուտ-շուտ դռան կողմն ե նայում:

Յերկրորդ զանգը տվին. ուր վոր ե վարագույրը կբացվի:

Կամոն վերջին անգամ նայեց դեպի դուռը, սիրտը թնդաց: Յերևաց Պավլիկի մրոտ դեմքը, հետո՝ յերկրորդի, յերրորդի: Կամոն դիմափորեց նրանց:

— Ո՞ւր եյիք այսքան ժամանակ:

— Վաղուց ե, դուրսն սպասում ենք: Մինչև մըթնելը չվստահացանք ներս դալ. ամաչում եյինք:

— Դե՛, գնանք նայենք,— առաջարկեց նա,— շատ սենյակներ կան. ընթերցարան, Լենինի անկյուն, նրկարչական սենյակ, մարզանքի դահլիճ: Ի՞նչ եք կանգնել, գնանք,— կրկնեց Կամոն:

— Ընկե՛ր ղեկավար, յեթե կարելի յե, մի յերկու ըոպե ինձ լսեք, գործ ունեմ,— դիմեց Կամոն մի յերիտասարդի և սկսեց խոսել նրա հետ:

— Շատ լավ, շատ լավ, ապրես,— խոսակցությունը վերջացնելուց հետո ասաց ղեկավարը Կամոյին:

— Ընկերներ, մի ըոպե սպասեցեք,— ասաց նա:

Պիտներների շփանում շուկ անցավ, յերբ ղեկավարը բեմ բերեց Պավլիկին ու ընկերներին: Նրանց հետ եր նաև ժպտացող Կամոն:

— Ընկերներ,— սկսեց ղեկավարը,— ահա ձեր նոր բարեկամները. սրանց բերել ե Կամոն. ընդունեցեք, թող մեզ մոտ ապրեն: Սրանք ծնողներ չունեն և ստիպված եյին թափառել փողոցե փողոց: Այսորվանից ձեր կոթեկտիվը կլինի սրանց ընտանիքը: Սովորեցեք միասին և աշխատեցեք կատարել այն պատգամները, վոր տվել ե մեզ մեր սիրելի առաջնորդը, մեր մեծ ուսուցիչը—Լենինը:

Կեցցենք ից ու ծափերից թնդաց դահլիճը: Ուրախ
եղին բոլորը, բայց ամենից ավելի ուրախ եր Կամոն:
Ձե՞ վոր նա ինքն ապրել եր այն ծանր օրերը, չե՞
վոր այժմ նա իրեն բախտավոր եր զգում կոմունա-
յում:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Լայեղ անել — արժանի համարել:
2. Գաղտագողի — գողի պես ծածուկ, զաղտնի:
3. Գազագել — կատաղել:
4. Վստահացալ — սիրտ առնել, համարձակվել:
5. Պատգամ — խրատ, պատվեր:

ՀԱՐՑԵՐ

1. Տացիան ո՞վ եր առաջ և վորտե՞ղ ե ապրում այժմ:
2. Պավլիկն ու իր ընկերներն ինչո՞ւ յեկան մանկական

դամունա:

3. Կոմունայում ի՞նչպես ընդունեցին նրանց:

1. Պատմեցեք պիոներների և «խուժանների» կյանքի մա-
սին (ըստ հոգվածի):

2. Վերնագրեր գրեք հոգվածի մասերին:

33. ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից յեկա այցելության
Գործարանի պարիսպներին,
Յերկաթակուռ այն շենքերին,
Վոր շունչ տվին իմ յերգերին:

Ահա մտա նրա չեմքով,
Ինձ վողջունեց աբթուն սուլիչ,
Մեքենաներ ուրախացած՝
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պտուտակներ,
Շողեմուրճը հպարտ թնդաց
Ու վորոտաց՝ դեռ չե՞մ հոգնել:

Նրան խմբով ձայնակեցին
Չարաճճի հաղար մուրճեր,
Ծլվլալով զրնգացին՝
Ինչպես ուրախ դեղձանիկներ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Յերկաթակուռ — յերկաթի պես ամուր շինած, յերկա-
թապատ:

2. Փոկ — անիվները միացնող (պտտելու համար) կաշվի
լայն ժապավեն:

ՀԱՐՑԵՐ

1. Բանաստեղծն իրեն ի՞նչպես և զգում գործարանում:
2. Ի՞նչպիսի տրամադրությամբ և գրված այս վոտանավորը
(տխուր, ուրախ, հուսահատ, զվարթ):

Արտագրեցեք գործարանը և մեքենաների մասերը բնորո-
շող բառերը (ածականները):

(Քրոջ պատմածից)

Իննը և կես տարեկան Վոլոդյան ընդունվեց գիմնազիայի առաջին դասարանը: Գիմնազիայի համար նրան յեբկու ձմեռ պատրաստեցին: Մանուկ հասակից չափազանց աշխույժ լինելով, նա ուղղակի թռչելով երգասի գնում: Հիշում եմ, աչնան մի ցուրտ առավոտ մայրիկն ուզում եր նրա վերարկուն հագցնել, բայց մեկ ել տեսավ՝ Վոլոդյան չկա: Դուրս նայեց, վոր յետ կանչի, բայց Վոլոդյան հասել եր փողոցի անկյունը:

Նա հեշտությամբ ու հաճույքով եր սովորում և չափազանց ընդունակ եր: Հայրն ել նրան՝ ինչպես և մեծ յեղբորն ու քրոջը, սովորեցնում եր տոկունություն և ճշտապահություն: Հիշում եմ, վոր ուսուցիչներն ասում եյին, թե Վոլոդիային շատ ե ոգնում այն, վոր նա դասարանում միշտ ուշադիր լսում ե դասի բացատրությունը: Իր հրաշալի ընդունակությունների շնորհիվ նա սովորաբար դասարանում արդեն յուրացնում եր տրված նոր դասը, տանը միայն մի քիչ պետք ե կրկներ: Դրա համար ել յերեկոյան, յերբ մենք տեղավորվում եյինք մեծ սեղանի շուրջը, ընդհանուր լույսի տակ պարապելու, Վոլոդյան արդեն իր դասերը սովորած եր լինում և խոսում եր, աղմկում ու խանդարում մեզ: «Վոլոդյա՛, դադարիր»:


«Մայրի՛կ, Վոլոդյան խանդարում ե մեզ», — ասում եյինք մենք: Բայց Վոլոդյան ձանձրանում եր հանդիստ նստելուց և շարունակում եր խաղալ ու խոսել:

ԲԱՌԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Տոկունություն — գիմացկունություն:

ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչպես եր սովորում Վոլոդյան:
2. Ի՞նչպես եր յերեխաներին զբաղեցնում հայրը:
3. Ի՞նչպես ե կոչվում մի մարդու կյանքի նկարագրությունը:



ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ

Մեր յերկիրը՝ Յակուտիան, Հյուսիսային Սա-
ռուցյալ ովկիանոսին մոտ է գտնվում, Լենա գետի
ափին: Մեր յերկիրը մեծ է և ծածկված է խիտ սն-
տառներով (տալգա): Յակուտիայի տալգաներում
վայրի գազաններ չատ կան—արջեր, սամույրներ,
կզաքիսներ և այլն: Շատ կան նաև սկյուռներ:

Իմ հայրը չորս տարեկան եր, յերբ թոքախտից մե-
ռավ պապս: Հայրս մնացել է իր մոր հետ, մենակ:
Մի տարի անց մայրը կուրանում է յերկու աչքով:
Նրանք մնացել են բարեկամների խնամքին: Ամբողջ
տարին սպասով եյին կերակրվում—մի բուռ ալյուր,
յերբեմն էլ ծառերի կեղևը՝ մանրած:

Մեր շրջանում միայն մի դպրոց է յեղել, այն ել
մեր գյուղում: Իննսուն կիլոմետր տարածության վրա
ուրիշ դպրոց չկար: Դպրոցում սովորում եյին միայն
տասչորս յերեխա:

Դպրոցը գտնվում եր մի փոքր, մութ խոհիթում:
Պատուհաններին ապակու փոխարեն սառույց եր դրած:
Մութն ընկնելիս մոմեր եյին վառում:

Որական չորս անգամ ուսուցչուհին հավաքում եր
աշակեփտներին, կանգնեցնում եր սրբապատկերի առաջ
ու ստիպում ուսերեն աղոթքներ ասել: Ով վատ եր
աղոթում, նրան ստիպում եր չոքել սուր փայտերի
վրա:

Չորս տարվա ընթացքում հայրս սովորել եր մի-
այն այբուբենն ու ուսական չորս աղոթք:

Հայրս այնուհետև ծառայության է մտնում մի
հարուստ վաճառականի մոտ, հետո արդյունաբերող
վորսորդների հետ գնում է Բևեռային գոտում ծառա-
յելու: Այդ աշխատանքներին զնացողներից յուրաքան-

չյուրի մեջքին յերեք հատ տախտակ եյին կապում,
մահվան դեպքում դադաղ շինելու համար:

1919 թ. հայրս վերադարձավ: Այդ ժամանակ Յա-
կուտսկում բանվորներն արդեն տապալել էին
սպիտակ գեներալ Կոլչակի լուծը:

Դեռ յերկար ժամանակ տեղական կուլակներն ու
վաճառականները կոպում էին Սորհրդային իշխա-
նության դեմ: Նրանց ոգնում էին սպիտակ գեներալ-
ները: Իմ հորը նշանակեցին կարմիր ջոկատի պետ:

Այսպես եր պատմում հայրս:

2

Այժմ յես ձեզ կպատմեմ, յերեխաներ, թե ի՞նչպես
եմ ապրում: Իմ անունն է—Թլյա: Տասնեկու տարե-
կան եմ: Պիոներ եմ: Ութ տարեկան էյի, յերբ դպրոց
մտա: Մեր չրջանում այժմ տասնվեց դպրոց կա: Յա-
կուտիայում այժմ բոլոր յերեխաները սովորում են:
Դպրոցը նոր է, լուսավոր, դասարաններում և մի-
ջանցքներում ծաղկամաններ կան: Մենք մայրենի լեզ-
վով ենք սովորում, յակուտական նոր դասագրքերով:
Ամենից շատ յես սիրում եմ ուսերեն և Փիզկուլտու-
րա:

Արդեն մի տարի յե՝ Մոսկվայումն եմ: Հայրս ու-
սանող է: Այս ձմեռ նա վերջացնում է ուսումը և մենք
Յակուտիա կվերադառնանք: Յես չտապում եմ՝ չու-
սով իմ ընկերներին տեսնելու:

Յես նրանց կպատմեմ Լենինի դամբարանի, Հեղա-
փոխության թանգարանի մասին: Այժմ կպատմեմ
մետրոյի մասին: Ինչպես գեղեցիկ է ու հետաքրքրա-
կան, ինչպես են գնում—դալիս գետնի տակ գնացքնե-
րը: Կպատմեմ կենդանաբանական այգու մասին: Ամե-
նից շատ ինձ դուր յեկան փիղն ու կապիկները: Այս
ամառ յես հանգստացա Մոսկվայի մոտի պիոներական
ճամբարներից մեկում:



ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆ

Հաճախ վիճում եմ մայրիկիս հետ, թե յես ի՞նչ եմ դառնալու, յերբ մեծանամ: Մայրիկս ուզում է, վոր յես բժիշկ դառնամ:

— Մեր ժողովրդին բժիշկներ են պետք, — ասում է նա:

Իսկ յես ուզում եմ... ողաջու դառնալ:

Յերբ հայրիկս պատմում է իր սարսափելի ծանր անցյալի մասին, տխրում եմ, իսկ նա ինձ սիրտ է տալիս:

— Այժմ այդ բոլորն անցել է, հիմա մեր ժողովուրդը զոհ է, ունեւոր: Նսեղձեր ու տգետներ ել չկան: Յակուտիան ծաղկում է, դուք բոլորդ կմեծանաք և կողնեք ժողովրդին:

Յես գիտեմ, վոր Խորհրդային իշխանությունը փրկեց մեզ կորստից: յես գիտեմ, վոր Յակուտիան ծաղկում է ընկեր Ստալինի հոգատարության շնորհիվ:

Ահա թե ինչու յես անչափ սիրում եմ ընկեր Ստալինին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Սամույր, — կղաքիս, թանգարժեք մուշտակով կենդանիներ: Վերածնվել — նորից ծնվել:

Բլեռ — յերկրագնդի հյուսիսային (այս դեպքում) ամենահեռավոր կետը, ցուրտ դոտում:

Դամբարան — գերեզման:

1888 թվականին ծնողներս ինձ տվին Գորու ծխական դպրոցը: Դասարանում յես նստած էյի Իոսիֆ Ջուղաշվիլու հետ մի նստարանի վրա: Յես թույլ սովորող էյի և իմ ընկերը, Սոսոն, միշտ ուրախությամբ տգնում եր ինձ:

Մեր դասարանում սովորում էյին հարուստների ու չքավորների յերեխաներ: Հարուստների յերեխաներն իրենց հեռու էյին պահում մեզնից, չքավորներն էլ: Նրանց հարաբերությունները մեզ հետ աստիճանաբար սրվում էյին նաև այն պատճառով, վոր Ստալինը, վորն առաջին աշակերտն եր համարվում դասարանում, մեզնից եր:

Ստալինը բացառիկ հիշողություն ուներ: Դասատուների բացատրությունները նա հիանալի յուրացնում եր և ապա ստույգ վերարտադրում:

Նա յերբեք չեր հրաժարվում իր խոսքերից, միշտ հավատացած լինելով, վոր դրանք ճիշտ են:

Նա հիանալի պատասխանում եր, յերբ կանչում էյին գրատախտակի մոտ: Այդ ամենն ել ավելի յեր զայրացնում հարուստների յերեխաներին և նրանք յուրաքանչյուր հարմար առիթով վրեժ էյին լուծում մեզնից:

Իոսիֆը գիրք չատ եր սիրում և մեզ գրավիչ կերպով պատմում եր կարգացածի մասին: Նրա պատմություններն անչափ հետաքրքիր էյին և հուզող, վորը լսելու համար հավաքվում էյին նաև հասակավորները: Իմ հորեղբայրը սովորաբար չնորհակալություն եր հայտնում Սոսոյին, և խնդրում ավելի հաճախ այցելել մեր տուն:

Դասատու Իլուրիձեն համառուրեն հակառակում եր վորպես մեր խմբի առաջնորդի, «կտրել»: Նա մեզ անվանում եր «աղքատների ու դժբախտների յերեխաներ»:

Մի անգամ Իլուրիձեն գրատախտակի մոտ կանչեց Իոսիֆին և հարցրեց.

— Քանի՞ վերստ ե Պետերբուրգից մինչև Պետերգոֆ:

Սոսոն ճիշտ պատասխանեց: Բայց ուսուցիչը չհամաձայնվեց նրա հետ: Իսկ Սոսոն պնդում եր իր ասածի վրա և չեր գիշում:

Նրա համառությունը, իր խոսքերից հրաժարվել չցանկանալը սաստիկ զայրացրին Իլուրիձեյին: Նա սկսեց սպառնալ և պահանջել, վոր Իոսիֆը ներողություն խնդրի, բայց վերջինս հաստատակամ բնավորություն ուներ: Նա նորից մի քանի անգամ կրկնեց միևնույն բանը, հայտարարելով, վոր ինքն իրավացի յե: Նրան միացան աշակերտներից մի քանիսը և այս հանգամանքն ել ավելի զայրացրեց ուսուցչին: Նա սկսեց դռուլ ու հայհոյել: Ստալինը կանգնած եր անշարժ, նրա աչքերը զայրույթից լայնացել էյին...

Այդպես ել նա չղիջեց:

Այն տարիներին Ստալինը լինում եր մեզ մոտ, գյուղում, և գյուղում պարապում եր—դասեր եր տալիս գյուղացիների յերեխաներին: Նա գրքեր եր կարդում նաև հասակավորների համար, պատմում ու բացատրում նրանց համար անհասկանալի տեղերը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հարաբերությունը սրվում եր — հարբերությունը վատանում եր:

2. Բացառիկ — սովորականից դուրս, հաղվադուտ:

3. Վերադարձվել — իմացածը պատմել:

4. Գրավիչ — դուրեկան, գրավող:

5. Հաճախ — շուտ-շուտ:

6. Զիջել — հարմարվել, կակղել:

Յես դեռ յոթ տարեկան էյի, վոր սկսեցի ելեկտրականությամբ հետաքրքրվել. կոճեր, մարտկոցներ էյի հավաքում, ելեկտրական զանգ, հեռախոս էյի սարքում...

Յերբ մենք ընտանիքով փոխադրվեցինք տբակտորի գործարան, վորոչեցի ելեկտրական ավտո կառուցել, բայց այնպիսին, վոր կարողանար 18 ժամ անընդհատ աշխատել. միայն թե հարմար ելեկտրական մոտոր և գործիքներ չունեյի: Շատ մտածեցի, թե ողնության համար ում դիմեմ և վորոչեցի. պետք է նամակ գրել ընկեր Որջոնիկիձէյին:

Վոչ վորքի բան չասացի: Նստեցի, սկսեցի գծագրել և պատրաստեցի այն, ինչ վոր պետք էր: Հետո գրեցի նամակումս, վոր ուզում եմ ելեկտրական ավտո չինել, բայց մոտոր և գործիքներ չունեմ:

Նամակս ծրարեցի և հասցեն գրեցի.

Մոսկվա, Կրեմլ, ընկեր Որջոնիկիձէյին:

Մի ամիս անցավ. ստուգումների շրջանն էր. թվաբանությունից ստուգում ունեյի, յեռանդով պարապում էյի, բացի թվաբանությունից ուրիշ բանով չէյի զբաղվում:

Մի որ հանկարծ դպրոցի դիրեկտորը կանչում է ինձ. «Ի՞նչ է պատահել»,—մտածում եմ. «չե՞ վոր վոչ մի անկարգ բան չեմ արել»:

Յերբ ներս մտա դիրեկտորի սենյակը, նա առաջակեց ինձ դասարանի ղեկավարի հետ միասին գնալ տրակտորի գործարանը:

Գնացինք. մեզ ընդունեց գործարանի դիրեկտորը:

— Այդ դո՞ւ յես պիտներ Սուսլովը, — հարցրեց նա:

— Այո՛... յես եմ, — պատասխանեցի:

— Ընկեր Որջոնիկիձէյին նամակ գրե՞լ ես:

— Գրել եմ:

Պարզվեց, վոր նամակս ստացել են և գծագրերիս

ծանոթացել: Յերբ մեր գործարանի դիրեկտորը գործով Մոսկվա յե գնում և ներկայանում ընկեր Որջոնիկիձէյին, նա պատվիրում է դիրեկտորին.

— Պիտներ Սուսլովը հետաքրքրվում է ելեկտրականությամբ, կանչիր մոտդ, ծանոթացիր և ոգնիր նրան:

Դիրեկտորն ինձ մի հիանալի փոքրիկ, գեղեցիկ մոտոր տվեց: Մոտորի վրա մի թիթեղ էր կպցրած և վրան գրած.

Վոլոգիա Սուսլովին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մոտոր — շարժիչ մեքենա:

2. Թիթեղ — յերկաթե բարակ թերթ:

38. ՄԵԶ ՄՈՏ ԲՈՂՈՐԸ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ

Յես ուզում եմ պատմել իմ հայրիկի մասին, թե ինչպես ինձ ոգնեց մեր նոր Սահմանադրությունը հասկանալու: Ստալինյան Սահմանադրության մեջ ասված է, վոր բոլոր քաղաքացիները մեր յերկրում հավասար են: Բոլոր ազգերն էլ հավասար են: Իսկ հայրիկս հրեա յե, նա շատ նեղություններ է տեսել ու շատ է տանջվել: Հայրիկս պատմում է, վոր նա հիմա յե միայն ապրում, իսկ առաջ նա վոչ թե ապրում էր, այլ տանջվում:

Յես սովորում եմ դպրոցում, ինչպես ուրիշ շատ յերեխաների հետ, իսկ հայրիկս իր ժամանակին չէր կարող սովորել. նրան վոչ մի դպրոց չէյին ընդունում: Նա չէր էլ կարող ապրել այն քաղաքներում, վորտեղ ինքն էր ցանկանում: Հրեաներին թույլ էյին տալիս ապրել միայն փոքր քաղաքներում և ավաններում: Յես կարդացել եմ, վոր Զինաստանում հիմա յե

այդպիսի վերաբերմունք կա դեպի ուրիշ ազգությունները. այնտեղ յեվրոպական թաղերում այսպիսի հայտարարություններ են կայցնում պատերին. «Շներին և չինացիներին մուտքն արգելվում է»:

Յարական կարգերում միայն հրեաներին չեք, վոր հալածում եյին, այլ նաև թաթարներին, հայերին, ուղբեկներին և մյուս մանր ազգերին: Բուրժուաներն ու կալվածատերերն եյին բոլոր ազգերի մեջ թըշնամություն սերմանում, վոր նրանք չմիանան ու չապստամբվեն ցարական պետության դեմ:

Ավելի վատ է հիմա Փաշխտական Գերմանիայում: Այնտեղ Փաշխտները հալածում են հրեաներին և մյուս ազգություններին:

Իսկ մեր Խորհրդային յերկրում այդպիսի բան չկա:

Այժմ մեր յերկրում բոլորն ել հավասար են—չինացիք, հրեաները, ուղբեկները, ռուսները, վրացիները, թաթարները, հայերը և այլն: Յեվ ամեն մի ազգ ու ժողովուրդ աշխատում է իր յեռանդն ու ընդունակությունները տալ մեր ընդհանուր մեծ հայրենիքին: Չե վոր ամեն մի ժողովուրդ իր լեզուն ունի, իր լավ յերգերն ու հեքիաթները: Յեվ ընկեր Ստալինն ասել է, վոր այդ բոլորը շատ արժեքավոր են և բոլորիս համար պիտանի:

Հայրիկս ասում է, վոր բոլոր ժողովուրդներն իրենց հայրենիքն են համարում մեր խորհրդային յերկիրը: Ինքը՝ իմ հայրիկը, անվանի կոլտնտեսական է: Նա միշտ ասում է ինձ.

«Սովորի՛ր, Չինա. սովորի՛ր թե իմ և թե քո փոխաբեն. յես զուրկ մնացի ուսումից, բայց դու և մեր Մեծ հայրենիքի բոլոր յերեխաները սովորում են անխտիր: Վոչինչ, վոր մենք մեծերս անցյալում շատ ենք տանջվել. յես այժմ ուրախ ու գոհ եմ, վոր դու և քեզ նման մեր հայրենիքի բոլոր յերեխաները լավ ուրերի հասաք և յերջանիկ եք...»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Սերմանել — տարածել (ցանել):

Յեռանդ — ուժ—կարողություն, բուռն ձգտում:

Պիտանի — պետքական:

39. Փ Ե Տ Ր Ա Վ Ո Ր Կ Ա Պ Ը

Քաղաքի շուրջը թփուտների միջով, գառիվայրով սողում են կարմիր փողկապներով յերեխաներ: Նրանք ռազմական խաղ են կազմակերպել. յերեխաների մի խումբն սկսում է գրոհել «հակառակորդի» դիրքերը...

Պաշտպանվողներն ամեն կողմից չբնապատված են: Նրանք այդպիսի արագ հարձակման չեյին սպասում: Այժմ «Ռազմական խորհուրդ» են հրավիրել:

— Մեր ռազմական մի ջոկատը մնացել է քաղաքում: Այժմ միայն նրանք կարող են փրկել,— ասում է «կարմիրները» «հրամանատար» Բաբկեն Ալոյանը.— պետք է կապ ուղարկել քաղաք:

— Յես կգնամ,— առաջարկում է Շուրա Լորովը:

Շուրան զգուշ ցած է սողում: Նա չբնապատված անցնում է «թշնամու» առաջին ջոկատի մոտով և ավելի համարձակ առաջ է շարժվում: Հանկարծ բարձրաձայն լսվում է՝ «կանգ ա՛ռ»:

Շուրան նայում է շուրջը: Տեսնում է, վոր իր վրա յեն վազում չորս մարդ: «Թշնամիներ» են, մտածում է Շուրան և գլխարկն աչքերին քաշելով, սկսում է վազել, ինչքան ուժ ունեք: Բայց նրա ճանապարհը կտրում են ելի յերկուսը:

Շուրայի ընկերները նկատում են այս բոլորը:

Հետախույզների պետը հուզված մոտենում է հրամանատարին.

— Ընկեր հրամանատար, հակառակորդը բռնեց մեր կապին:

— Կանչել աղավնապահներին, — կարգադրում է հրամանատարը:

Մի րոպե չանցած հայտնվում է աղավնապահ զորավարի պետ՝ Կոլյա Արուզովը:

— Անմիջապես կապվել քաղաքում մնացած ջոկատի հետ, — կարգադրում է նա:

Հրամանատարը հուշատետրից մի թերթիկ պոկեց և գրեց. «Պահեստի զորամասի պետին: Հրամայում եմ գրությունս ստանալուն պես շտապ դուրս գալ մեզ ողնելու և խփել թշնամու թիկունքին (ուր թիկունքը շատ խիտ են և հեշտ է քողարկվել): Ձեզ հետ միաժամանակ մենք ել ենք հարձակվում»:

Հրամանատար՝ Բ. Ա. ԱՆՈՅԱՆ

Այս գրությունն ստանալով, Կոլյան զգուշությամբ բաց արավ վանդակը և հանեց աղավնին: Ալյումինե այն ողակին, վոր պինդ հագցրած էր աղավնու վոտքին, նա ամրացրեց գրությունը: Ելի մի քանի վայրկյան — և աղավնին թեթև ու հեշտ վեր թռավ:

Թղթատար թռչունն արագ անհետացավ աչքերից: Հակառակորդը չէր կարող նրան բռնել: Ե՛, հակառակորդը իսկի չնկատեց ել թռչող աղավնուն: Դեռ քառորդ ժամ ել չէր անցել, վոր «Կարմիրներն» աննկատելի մոտենալով խփեցին թշնամու թիկունքին:

Միաժամանակ իր զորամասերով գրոհի գիմեց և Բաբկեն Ալոյանը: Այսպիսով այս խաղին «Կապույտները» սաստիկ պարտություն կրեցին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զառիվայր — թեք, ուղղաձիգ ժայռեր:

2. Քողարկվել — ծածկվել, աննկատելի դառնալ:

Բոլոր մթնում էր: Գիշեր էր արդեն:

Լեռներին բազմած յերկնակամարը հազիվ էր նշմարվում իր գույնզգույն ամպերով, վորոնք աղոտ կերպով փայլում էին այս ու այնտեղ ցրված աստղերի լույսով:

Սաղաղ ու հանգիստ էր ամեն տեղ...

Աստղերն ընկնում, վայրկենապես յերկնակամարի վրա իրենց յետևից թողնում էին մի պայծառ գիծ, և գալարվում, կորչում էին անհունության մեջ:

Ավելի խորը՝ ձորի միջում, հեռվից լսվում էր մի խուլ շառաչուն:

Քուռ գետն է այդ, անմնաս ու խելոք, վորպես մոր աղիզ գավակ, սակայն սրտնեղած՝ հոսում էր ժայռերի միջով, ուր Ավճալան*) մեկնված բարձր լեռների լանջերին՝ միշտ անքուն, վսրպես արթուն պահակ, լուռ ունկնդրում է այդ կյանքի ձայնին:

Քուռ գետն է այդ, վոր քանդում, մաշում է ամեն ուր՝ միշտ մաքուր, բայց միշտ խոնավ ժայռերի կուրծքը. ապա ժայռերից պոկած կտորները խմբում, հավաքում է մի հարմար տեղ, ճարպկորեն վոստնում, համբուրում է նրանց ու կրկին համբույրով մնաս բարեասում, անցնում — գնում:

Քուռ...

Քանի՜-քանի՜ անգամ այս նույն տեղում դավաճանել է իր հունին և ափերից դուրս գալով՝ բավական վնասներ է պատճառել Ավճալային:

Սակայն այս գիշեր խաղաղ ու հանգիստ հոսում է նա, խաղաղ ու հանգիստ է նաև Ավճալան:

Լուսամուտներից աղոտ պլպլում են ճրագները և հազիվ նշմարելի դարձնում ծխի մեջ կորած գյուղական խրճիթները:

*) Տեղի անուն է և գտնվում է Թբիլիսիից մոտ 10 վերստ հեռավորության վրա:

Գիշերվա ժամը 12-ին կայարանում հանկարծ լրացեց զանգակի զիւղ ղողանջը. արձագանքը յերկար ու յերկար տարածվեց ողբի մեջ — կարծես վոսկե զնդակներ եյին թափվում պողպատե թիթեղի վրա:

Ապա վշշալով, դանդաղորեն, կարծես հանգստի կարոտը սրտին, հոգնած ու ծխի մեջ կորած՝ մոտենում ե գնացքը: Մի վայրկյան կանգ ե առնում, հազիվ շունչ քաշում և հանկարծ նորից շարժում ե թևերը, նորից փնջացնում ու վշշացնում, աշխատանքի անցնում, լեռների ուղին բռնում:

Շարժվում ե գնացքը սկզբում դանդաղ, ապա արագ և իր վշշոցի մեջ խեղդում, խլացնում ֆուռի ալիքների դղրդյունը:

Լեռները նորից մնում են միայնակ իրենց տեղերում, իսկ լեռների մեջ՝ Ավճալան, սրտաբեկ ֆուռ գետը, խավար գիշերն իր լուռ տարածված յերկնակամարով ու գունդգունջն ամպերով:

Անցնում ե վորոշ ժամանակ, հուլիսի նշույլներ են յերևում, կամաց-կամաց գիշերն սկսում ե գունատվել. արբեցածի նման գունատ առավոտը հազիվ բաց ե անում իր աչքերը և իր պղտոր հայացքը ձգում կանաչազարդ լեռներին, ձորերին ու հովիտներին, ծաղկազարդ դաշտերին ու մարգերին:

Խճուղին, վորպես մաքուր վզկապ, հանգիստ փրկվում ե քո առջև, սպասում ճամբորդներին:

— Հի՛ր-մո՛ո՛, սևուկս, — ուրախ ձայնում ե սայլապանը՝ դիմելով իր յեզներին: Սայլը ճռռալով շարժվում ե դանդաղորեն, իր յետևից բարձրացնելով թանձրը փոշի:

Նախիրը տարածվում եր արոտատեղերում կանաչ դաշտերի ու հովիտների վրա: Վոչխարների հոտը բարձերի նման մեկնվում եր սարերի կանաչ լանջերին, իսկ

խճուղու վրա մտրակի շարժվելու պես յերևում եր ձիու խրխնջոցը և սմբակների դուփյունը:

Լուսանում եր, խորը քնից արթնանում եր գյուղը, արթնանում եր հանգիստ ու խաղաղ, համեստ, ամաչկոտ...

Այսպես եր գիշերն ու լուսաբացը Ավճալայում միշտ, բազմաթիվ տարիների ընթացքում:

Իսկ այսօր...

Գիշեր ե. Ավճալայի մոտ՝ յերկինքը ելեկտրական լամպերի լույսերով բարձրացել եր վեր, ներդաշնակորեն սփռել իր փայլփլող լույսի ճառագայթներն անտառների, ժայռերի, ֆուռ գետի և շուրջը ձգվող տարածության վրա:

Վշշալով մոտենում ե գնացքը, հանդիպելով լուսավորված վայրերին, խնդում ե և աղմկելով նորից սլանում՝ տանելով իր հետ տեղեկություններ Սև ծովին՝ սպիտակ գիշերվա մասին:

Աղմկելով հոսում ե ֆուռը, նրան վրդովում են յրեցոր քանդվող ու տաշվող ժայռոտ ափերը, ուժով զարնվում ե նրանց հսկայական ժայռերին ու քարերին, վորոնք նետվել են նրա սիրտը և խանգարում են նրա խաղաղ ընթացքը:

Հեռվից յերևում են անհարթ կամարներով ժայռոտ ջրանցքները, վորոնց ափերին թափված են հողալույսեր:

Ափսեյի նման տարածված հարթության վրա բարձրացել են բազմաթիվ, դեռևս չներկած տներ և մեջքը դեպի գիշերն արած՝ հաղթ կանգնած են ելեկտրական լամպերով լուսավորված:

Յերկար ձգված են յերկաթգծերը, վորոնց վրա անընդհատ վազվզում են վազոնետկաները:

Լծված ձիերը քարշ են տալիս իրենց յետևից ծանր բեռնավորված սալլակներ և անիվների ճռուցի հետ միասին բարձրացնում են իրենց գլուխները:

Այստեղ—այնտեղ խումբ—խումբ և առանձին—առանձին յերեվում են բանվորներ զանազան հազուստներով, նրանցից յուրաքանչյուրը ձեռքի թիակով կամ յերկաթե լոմով կռվում է հողի հետ, ձեռք չի քաշում նրանից, ջրով հզվացած այդ սև հողից:

— Լարենք ուժերա, ընկերո՛ւմի աշխատենք, արդեն լուսանում է,— լավեց վոզեորիչ և սրտապնդիչ խոսքը, և մեկը մյուսի յետևից գործիքները բարձրացրին իրենց գլուխները մայր—հողի քար—սրտից:

— Կա՛նգ առեք... դադարեցրեք, ընկերներ... այդ ժայռը յերկաթ—լոմերով չենք կարող քանդել,— բացականչեց նրանցից մեկը, վորը կանգնած եր հողաթմբի վրա. հուզված նայեց ցած, վորտեղ միքանի բանվորներ Քոի ափին աշխատում էին յերկաթալարերով քանդել հսկա ժայռը՝ ջրանցք անցկացնելու համար:

— Կա՛նգ առեք, անհրաժեշտ է ումբով պայթեցնել այս ժայռը, կրկնեց նորից յերիտասարդը և ուշադրությամբ սկսեց ամեն կողմից զննել ժայռը:


Բանվորները դադարեցրին իրենց աշխատանքը:

4

Մի քանի բանվորներ առաջ շարժվեցին, գործիքները վար դրին և ցած վազեցին:

Ժայռը պայթեցնելու հարմարեցրին, պատրույգն անցկացրին և կարճ ժամանակից հետո պատրույգի միջով արդեն ոճանման դալարումներով պայթուցիկ ումբին եր մոտենում վառված կայծը:

Մի վայրկյան ևս, հանկարծ լավեց պայթյունի վորոտ: Սև ու թանձր ծուխը բարձրացավ ողի մեջ և յերբ ծուխը պարզվեց, այն ժամանակ միայն յերևացին



կտոր—կտոր յեղած քարաժայռերը և դուրս թափված հողը:

Թանձր ծուխը պատել եր ամբողջ շրջակայքը. պայթումից բարձր նետված քարերը թափվում էին ցած, իսկ ջրանցքի քանդվածքում, կռվի մեջ կռված վորսի նման ընկած եր հսկա ժայռի մի մասը: Այդ նույն վայրկյանին խորքից դուրս ժայթքեց պղտոր ջուրը, հոսեց քարուքանդ յեղած հողի—քարերի վրայով ու միացած Քոու գետի պղտոր ջրին, իր հետ քաշ տվեց քարեր, ավազ ու տիղմ:

Ժայռը քանդվեց. ժայթքած ջուրը դանդաղորեն հոսում եր ու միանում գետին. ուղին ծածկվեց ցեխ ու տիղմով:

— Ապա՛, ընկերներ, այժմ արդեն ժամանակ է ջրանցքի հունը մաքրելու,— բարձր ձայնով կանչեց գլխավորը և աչք ածեց բոլոր բանվորներին, վորոնք հանդադար քայլերով անմիջապես շարժվեցին առաջ և իջան դեպի ջրանցքի հունը:

Նորից աշխատանքի անցան թիակները, ուրազները և յերկաթ-լոմերը: Գործի անցան սայլերը և փոքրիկ վազոնետիկաները՝ դուրս թափած հողն ու քարը ջրանցքի մոտից հեռացնելու համար:

Յեւ այսպես, հազարավոր հուժկու բազուկների, հազարավոր սրտերի և հարյուր հազարավոր մկանների շարժումների—հարվածների տակ՝ մարեց գիշերը:

Իսկ յեփկինքը մեծանում, լուսավորում էր շրջապատը: Բոցավառված արևն իր վոսկեզոծ ճառագայթները սփռեց ամենուրեք և ցույց տվեց բոլորին իր ուժն ու կորովը:

— Սպասի՛ր, կանգ առ, ո՛վ արև, Թբիլիսին Ավ-ճալայում իր համար նոր արև է կառուցում:

Այսպես կառուցվեց Անդրկովկասի ամենամեծ էլեկտրոկայաններից մեկը՝ Չազեսը Քուռ գետի վրա, Թբիլիսիից 12 կիլոմետր հեռու:

Չազեսում կանգնեցված է Լենինի հսկա բրոնզե արձանը:

Չազեսն ավարտվեց 1927 թվին, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության տասերորդ տարեդարձին:

Այդ որվանից Թբիլիսին և իր շրջակայքը վողովված են Չազեսի առատ ու եծան լույսով:



41. Գ Ա Ր Ն Ա Ն Հ Ր Ա Վ Ե Ր

Բացվում են դարնան

Որերը պայծառ.

Կգաս իմ ընկեր,

Գնանք դեպի սար,

Գնանք դեպ ալյոտեղ՝ յերկնահաս վերև,

Կյանքը լայնարձակ, յերկինք ու արև...

Փթթում են դարնան

Ծաղկունքը վառ-վառ

Վե՛ր կաց, վեր, ընկեր,

Յենենք դեպի սար.

Հազար գույներով, հազար-հազար ցեղ,

Ժպտում են նրանք ու բուրում ալյոտեղ...

Կանչում են դարնան

Հավքերն անհամար.

Գնանք, իմ ընկեր,

Թռչենք դեպի սար,

Յերգենք նրանց հետ՝ յերկնահաս վերեւ
կյանքը լայնարձակ, ծաղիկ ու արեւ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Յերկնաւիտ — յերկնքին հասնող, շատ բարձր:
2. Հավք — թռչուն:

42. Լ Ի Ն Ա Ո Ւ Ե Ն Ա

1

Լինա Ողենան իսպանական հերոս ժողովրդի հա-
րազատ աղջիկներից մեկն էր: 1936 թվի սեպտեմբերի
20-ին Լինա Ողենան մեռավ հերոսի մահով: Գրեհադա
քաղաքի մոտ տեղի ունեցած կռիվների ժամանակ կոմ-
յեբիտուհի հրամանատար Լինա Ողենան առաջնորդում
էր իր զորամասը: Նա անվախ էր ու խիզախ — քաջի
նման կռվելով առաջ գնաց, իսկ նրա զորամասը յետ
մնաց: Մեկ էլ հանկարծ Լինան նկատեց, վոր ինքը
չըջապատված է թշնամիներով: Հասկացավ իր դրու-
թյունը, չվախեցավ, չտատանվեց, բայց վճռեց թանկ
ծախել իր կյանքը: Նա գիտեր, վոր թշնամիների ձեռքը
պետք է ընկնի — բայց կանգ առավ, չոգեց, իր ունե-
ցած բոլոր գնդակներից մեկը պահեց ծնկի տակը և
մյուս բոլոր գնդակներից պահեց մեկով մի Փաշիստ
սպանեց: Վերջին, պահած գնդակով վերջ տվեց իր յե-
րիտասարդ ու վառվռուն կյանքին: Թշնամու ձեռքի
ընկավ նրա անշունչ մարմինը միայն:

Կես ժամ հետո նրա ջոկատը վրա հասավ: Իր սի-
րելի հրամանատարի դիակը տեսնելով, ջոկատը կա-
տաղի հարձակվեց թշնամու զորամասի վրա և վոչ մե-
կին կենդանի չթողեց: Ապա վերցրին հերոս աղջկա
դիակը և տարան:

2

Լինա Ողենայի մահը մեծ ցավ պատճառեց վոչ
միայն Իսպանիայի, այլ և ամբողջ աշխարհի բանվոր-
ներին ու նրանց զավակներին:

Մեր՝ Խորհրդային յերկրի բոլոր յերեխաները
կարգացին, իմացան Լինա Ողենայի կյանքի և հերո-
սական մահվան մասին: Բոլորը սիրում ու հարգում են
նրա անմահ հիշատակը:

Այդ սիրո ապացույց է Լինա Ողենայի մորը գրու-
ված՝ 9 տարեկան Ասումա Մաուերի նամակը, Սիմֆե-
րոպոլ քաղաքից:

Սիմֆերոպոլի 10-րդ դպրոցի աշակերտուհի, 9
տարեկան Ասումա Մաուերը մարտի 16-ին նամակ է ու-
ղարկել Բարսելոնա, Փաշիստ խռովարարների դեմ ու-
նեցած կռիվներում հերոսաբար ընկած կոմյեբիտուհի
Լինա Ողենայի մորը:

Նա գրել է.

«Սիրելի մորաքույր Ողենա.

Մեծ դժբախտություն է պատահել մեզ: Բայց դու
մի լար: Հանրապետական Իսպանիայում նույնպիսի
ուռախ կյանք կլինի, ինչպես մեզ մոտ: Ելի մի՛ լար
նրա համար, վոր դու, քո սեռչյա Լինայի փոխարեն,
ունես կապուտաչյա Լինա: Դա իմ քույրն է — Լինա
Մաուերը: Նա ծնվել է անցյալ տարվա ոգոստոսին,
յերբ քո Լինան հերոսաբար ընկավ Փաշիստների դեմ
կռվելիս: Յեւ ահա այն ժամանակ յես ու մայրիկս վո-
րոչեցինք մեր փոքրիկին Լինա անունը տալ, վոր պահ-
պանենք քո հերոսուհի Լինայի հիշատակը և կարեկ-
ցենք ձեր վշտին:

Վողջ յեղիր, թանկագին մորաքույր Ողենա: Մի
մոռացիր, վոր դու մի Լինա էլ ունես»:

ԱՍՈՒՄԱ ՄԱՈՒԵՐ

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տատանվել — կասկածել, յերկմտել (չարժվել):
2. Ապացույց — մի դեպք հաստատող փաստ, նշան:
3. Կարեկցել — ջախջախ, տխրոսալ, վշտակից լինել:

Լուին փոքր եր, ժանը՝ մեծ:

Ամեն առավոտ Լուին կապում եր իր կապույտ գոգնոցը, գլխին դնում կլոր գլխարկը և շտապում դպրոց:

Ժանը հագնում եր լայն շալվար և բլուզ: Նա աշխատում եր գործարանում:

Լուին գիտեր, թե ի՞նչ է կատարվում գործարանում, ժանն ել գիտեր, թե ի՞նչ է կատարվում դըպրոցում:

Բայց այս առավոտ Լուին նկատեց, վոր ժանն ուշացել է, ինչ վոր բան է թագցնում:

— Ինչո՞ւ աշխատանքի չես գնում, ժա՛ն, — ասաց մայրը:

— Կգնամ, մայրիկ, — պատասխանեց ժանը:

Մայրը հագնվեց ու գնաց գործի:

Լուին ու ժանը մնացին մենակ: Ժանը մի կապոց բաց արավ, նրա մեջ իրար վրա դարսած ելին տաված թերթեր, վորոնց ճակատին գրված եր՝ «Փարիզի 16-րդ շրջանի բանվորներին»:

Ժանն ասաց.

— Վոստիկանները հսկում են... պետք է կպցնել... չկարողացա...

— Լսի՛ր, ժան, — մոտենալով նրան շշնջաց Լուին, — յես քեզ կոգնեմ, փոքրերին դժվար կնկատեն...

Լուիի մատները դողում ելին: Նա կամաց վերցրեց մի թերթ: Նրա տակը կար յերկրորդը, յերրորդը, չորրորդը... Յերեսայի աչքերն ուրախությունից փայլեցին, սիրտն սկսեց արագ խփել:

— Քի՛չ վերցրու, — ասաց ժանը, — ավելի չես կաբող կպցնել, հերի՛ք է:

Նրանք միասին դուրս յեկան փողոց:

— Հաջողություն եմ ցանկանում, — ասաց ժանը, և Լուին ծովեց դեպի ձախ:



Լուին հեռու գնաց: Հասավ մի անծանոթ փողոց: Ավելի լավ. այստեղ վոչ վոք իրեն չի ճանաչի: Փողոցի ծայրին մի մեծ յեկեղեցի կար:

— Այս յեկեղեցու պատերին ել կկպցնեմ, — մտածեց Լուին:

Նա բարձրացավ լայն սանդուխտներով և դես ու դեն նայեց. փողոցներում մարդ չկար: Հեռվում յերևում եր սպիտակ գոգնոց հագած մի յերեսա միայն, վորը քաշեր տալիս իր ձեռնասայրը:

Լուին կռացավ, կապոցից մի թերթիկ հանեց, սոսինձը քսեց, կպցրեց պատին, ձեռքով սեղմեց:

Հանկարծ նա իր հետևից ձայն լսեց... Առանց հետ նայելու ականջ դրեց...

— Չե՛... բան չկա:

Լուին քարե սանդուխտներով գնաց, հասավ յեկեղեցու մյուս անկյունին և դես ու դեն նայեց:

— Վախենալու կարիք չկա. վոչ մի տեղ վոստիկաններ չեն յերևում:

Կռացավ, մի թերթ վերցրեց, սոսինձը քսեց...

— Կարծե՞ս մեկն այստեղ կանգնած է, չնչում ե... հենց կողքի...

Ուղեց յետ նայել, բայց չկարողացավ...

— Իհարկե, կանգնած է... նույնիսկ յերևում են

նրա դեղին բեղերը և ինչ վոր կապույտ բան:

Լուին հանկարծ արագ շուռ յեկավ և գլուխը բարձրացրեց: Կապույտ գլխարկի տակից ուղիղ նրան ելին նայում վոստիկանի սուր, սև աչքերը:

— Բռնվեցի: Ել փախչել չեմ կարող, — մտածեց Լուին:

Ձեռքերն ու վրձինը դողացին, բայց մի վայելյան միայն:

Յերեսխան ուրախ դեմք ընդունեց և ասաց.

— Բարե, պարոն:

— Դու այստեղ ի՞նչ ես անում:

— Պարոն, յեթե դուք հետաքրքրվում եք, նեղութուն կրեք, մոտեցեք անկյունին: Ահա այստեղ, դեպի աջ յես կպցրել եմ, կարող եք կարդալ: Դրանցից յես բան չեմ հասկանում, պարոն:

Վոստիկանը կամաց-կամաց առաջ գնաց:

Լուին կատվի արագությամբ յետ դարձավ, վերցրեց կապոցն ու պո՛ւկ...

Այդ ժամանակ լավեց սուլիչի բարձր ձայնը:

Լուին վազում եր:

— Ահա, ահա՛ կհասնի ու կբռնի, — մտածում եր նա:

Փողոցի անկյունում, փռան մոտ, կանգնած եր սպիտակ գոգնոց կապած, ձեռնասայլ քշող յերեսխան:

— Ա՛ռ, պահի՛ր, — գեչեց Լուին ու կապոցը գցեց հացով լիքը ձեռնասայլի մեջ:

Սպիտակ գոգնոց հագած յերեսխան վախեցած յետ նայեց և վոստիկանին տեսնելով՝ իսկույն հասկացավ, թե ինչ է պատահել:

Նա հանդարտ տեղավորեց կապոցը ձեռնասայլի անկյունում և վրան հացեր դրեց: Հետո հանգիստ սկսեց քաշ տալ սայլակը, չվճվացնելով մի ուրախ յեղանակ:

Լուին վազում եր առաջվանից ավելի արագ:

Վոստիկանը շարունակում եր սուլել:

Լուին հոգնել եր. նրա շնչառությունը ծանրացել եր, վոտները գոժվարությամբ ելին շարժվում:

Իսկ փողոցը յերկար եր. վազում եր, վազում, ծայլին չեր հասնում: Վո՞րտեղ թաղնվի:

3

Վերջապես հասավ փողոցի ծայրին:

Հեռվից յերևում եր մի կարմիր չենք:

«Դպրոց», — կարդաց Լուին կապույտ ցուցանակի վրա:

Իսկ վոստիկանը մոտ եր:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց վախեցած ուսուցչուհին:

Լուին վազելով ներս մտավ դպրոցի բակը և փաթաթվեց ուսուցչուհուն:

— Ծանոթ աչքեր եմ, — մտածեց ուսուցչուհին... հա՛... Սա այն բանվորի յեղբայրն է...

— Թագքրե՛ք ինձ, փրկեցե՛ք... վոստիկանը մոտ է. հիմա կբռնի ինձ, — աղաչեց Լուին:

— Դու ո՞վ ես, ի՞նչ ես արել:

— Հասկանում եք. յես... նա... թերթիկներ...

Ուսուցչուհին բռնեց նրա ձեռքը:

— Հասկանում եմ... գիտեմ... գնանք...

Ուսուցչուհին յերեսխանին տարավ դասարան:

— Նորե՛կ, նորե՛կ, — գոչեցին աշակերտները ծափ տալով ու թռչկոտելով:

— Կամա՛ց, կամա՛ց, մի՛ աղմկեք, — ասաց ուսուցչուհին և Լուին տարավ, նստեցրեց վառարանի մոտ:

— Հանե՛ք տետրակները, թելադրություն պետք է գրեք: Մի տետրակ էլ նորեկին տվեք:

Ուսուցչուհին բարձր ձայնով թելադրում եր և շուտ-շուտ դեպի դուռը նայում:

Լավեց նախասենյակի դռան ձուռոցը, դուռը բաց-

վեց և ներս մտաւ դպրոցի դիրեկտորն ու նրա յե-
տեւից՝ վոստիկանը:

Դասաբանը լուռ եր:

— Տեսնո՞ւմ եք, այստեղ ել ամեն ինչ կարգին ե:
Ինձ մոտ այդպիսի բան լինել չի կարող: Յես իմ ոգ-
նականներին շատ լավ եմ ճանաչում: Յտեսութժյո՛ւն,
յերեսաներ, ցտեսութժյո՛ւն, տիկին Սյուզան,— ասաց
դիրեկտորը և դուրս գնաց: Նրա յետեւից ել վոստիկա-
նը:

Դասը վերջացավ:

Ուսուցչուհին բռնեց Լուիի ձեռքը և տարավ նրան
դեպի դպրոցի յետևի դուռը:

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ,— չչնջաց Լու-
ին, և ուզում եր դուրս գալ փողոց, բայց հանկարծ
յետ դարձավ:

— Մի հատ մնացել ե ծոցումս: Վերցրեք իբրև հի-
շատակ,— ասաց յերեսան, և ուսուցչուհուն մի թեր-
թիկ տվեց, վորի ճակատին գրված եր՝

«Փարիզի 16-րդ շրջանի բանվորներին»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Սոսիմ — կպցնող—մածուցիկ մի նյութ:

2. Յուցանակ — խանութի կամ հիմնարկի անունը ցույց
տվող մեծ տառերով գրված տախտակ:

44. Վ Ա Ղ Գ Ա Ր Ն Ա Ն Ը

Վառ արևի
Շողքը ժպտուն,
Տաք հաբավի
Հեքը արթուն
Խաղ արեցին
Ու հալեցին

Չմռան ճերմակ
Մուշտակը տաք:
Շատ նեղացավ
Չմեռ պապին
Ու հեռացավ
Արցունքն աչքին:
Արևի տակ
Ծիծաղի տակ
Աղմկեցին
Ու վազեցին
Պղտոր, անցորդ
Ջրերը հորդ,
Թռչնիկները
Ուրախ թռան
Ու ծաղիկները
Կյանք առան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հեֆ — շունչ:

2. Հարդ — վարար:


45. Տ Ր Ա Կ Տ Ո Ր

1

Այս դեպքը պատահեց տարիներ առաջ:

Աշնան մի պարզ առավոտ եր: Պարույրը հոր մաշ-
ված մուշտակի տակ կուչ եր յեկել: Նա ինչ վոր տա-
րորինակ ձայն եր լսում, բայց չեր հասկանում, թե
այդ ի՛նչ բան ե: Ֆուրգոնի ձայն չեր: Պարույրը դուրս
սողաց մուշտակի տակից և մոտեցավ պատուհանին.
զարմացավ:

— Մայրի՛կ, շո՛ւտ, մի տե՛ս:



— Հը՞, այդ ի՞նչ է:
 — Շո՛ւտ, չո՛ւտ, այս ի՞նչ մաշինա յե գալիս:
 Մինչև մայրն յեկավ, Պարույրն ահաբեկ փողոց
 վազեց: Ով զարթնել էր այդ ահագին մեքենայի դղրդո-
 ցից, դուրս եր յեկել:
 — Այս ի՞նչ տեսակ ավտոմոբիլ է, — զարմանում
 էին գյուղացիները:
 — Ուրիշ բան է:
 — Ավտոմոբիլ է:
 — Չե՛, ավտոմոբիլ չէ:
 — Տրակտոր է, — ասաց գյուղխորհրդի նախագա-
 հը՝ նրանց մոտենալով:
 — Ի՞նչ գիտես:
 — Մեքենա-տրակտորային կայանում եմ տեսել:
 — Տեսե՛ք, տեսե՛ք Մարտինն է մաշինի վրա նըս-
 տած:
 — Հա՛, ուրեմն մեր կոլտնտեսության համար են
 բերում:

Պարույրն ու իր տարիքի ուրիշ յերեխաներ լսում
 էին այս խոսակցությունները և վազում տրակտորի
 յետևից: Տրակտորը դանդաղ եր գնում: Գյուղի մեջ-
 տեղը կանգ առավ: Ամբոխը չըջապատեց նրան:

— Վո՞րտեղից եք բերում:

— Ի՞նչի համար է, ի՞նչ պիտի անենք:

— Շա՞տ են շինում սրանից — հարցեր էին տալիս
 Մարտինին:

— Մեքենա-տրակտորային կայանից են ուղարկել.
 տրակտորով հող են վարում, խուրձ կրում, մի խոս-
 քով՝ ամեն տեսակի աշխատանք կատարում: Յերկաթե
 ձի յե, ելի՛, ա՛յ մարդիկ: Խարկով քաղաքումն է շին-
 ված:

2

Յերբ տրակտորը հեռացավ, յերեխաները յետ
 դարձան ու ճանապարհին վորոշեցին, վոր առավոտյան
 իրենք ել մեծերի հետ գնան տեսնելու, թե ինչպես
 պետք է Մարտինը հողը վարի:


Դեռ լույսը նոր եր բացվում. Պարույրը մի կտոր
 հաց վերցրեց ու դուրս վազեց:

Գյուղացիները խմբերով գնում էին դեպի կոլտն-
 տեսության հողերը:

Յերբ մոտեցան, տրակտորն արդեն կանգնած էր
 դաշտի ծայրին, ու մի բաղմախոփ դուրսն ել կպցրած
 եր նրան:

Մարտինն ու յերկու անձանոթներ դիտում էին,
 վոր ամեն բան կարգին, սարքին լինի: Վերջապես ան-
 ծանոթներից մեկը մոտեցավ, ինչ վոր մի կոթ պտտեց,
 ու տրակտորն իսկույն սկսեց շարժվել, դողալ ու փըն-
 չացնել, ինչպես կենդանի մի արարած:

Յերեխաները վա՛յ արին. իսկ անձանոթը բարձ-
 րացավ վրան, հանգիստ նստեց ու կոթերից մեկը սեղ-
 մեց: Տրակտորը կամաց շարժվեց, նրա յետևից՝ դու-
 թանը:



— Հը՞, այդ ի՞նչ է:

— Շո՛ւտ, չո՛ւտ, այս ի՞նչ մաշինա յե գալիս:

Մինչև մայրն յեկավ, Պարույրն աբղեն փողոց վազեց: Ով զարթնել էր այդ ահագին մեքենայի զղրդոցից, դուրս եր յեկել:

— Այս ի՞նչ տեսակ ավտոմոբիլ է, — զարմանում էին գյուղացիները:

— Ուրիշ բան է:

— Ավտոմոբիլ է:

— Չե՛, ավտոմոբիլ չէ:

— Տրակտոր է, — ասաց գյուղխորհրդի նախագահը՝ նրանց մոտենալով:

— Ի՞նչ գիտես:

— Մեքենա-տրակտորային կայանում եմ տեսել:

— Տեսե՛ք, տեսե՛ք Մարտինն է մաշինի վրա նըստած:

— Հա՛, ուրեմն մեր կոլտնտեսության համար են բերում:

Պարույրն ու իր տարիքի ուրիշ յերեխաներ լսում էին այս խոսակցությունները և վազում տրակտորի յետևից: Տրակտորը դանդաղ եր գնում: Գյուղի մեջ-տեղը կանգ առավ: Ամբոխը շրջապատեց նրան:

— Վո՞րտեղից եք բերում:

— Ի՞նչի համար է, ի՞նչ պիտի անենք:

— Շա՞տ են շինում սրանից — հարցեր էին տալիս Մարտինին:

— Մեքենա-տրակտորային կայանից են ուղարկել. տրակտորով հող են վարում, խուրձ կրում, մի խոսքով՝ ամեն տեսակի աշխատանք կատարում: Յերկաթե ձի յե, ելի՛, ա՛յ մարդիկ: Խարկով քաղաքումն է շինված:

2

Յերբ տրակտորը հեռացավ, յերեխաները յետ դարձան ու ծանաղարհին վորոշեցին, վոր առավոտյան իրենք ել մեծերի հետ գնան տեսնելու, թե ինչպես պետք է Մարտինը հողը վարի:

Դեռ լույսը նոր եր բացվում. Պարույրը մի կտոր հաց վերցրեց ու դուրս վազեց:

Գյուղացիները խմբերով գնում էին դեպի կոլտնտեսության հողերը:

Յերբ մոտեցան, տրակտորն արդեն կանգնած եր դաշտի ծայրին, ու մի բազմախոփ գութան ել կպցրած եր նրան:

Մարտինն ու յերկու անծանոթներ դիտում էին, վոր ամեն բան կարգին, սարքին լինի: Վերջապես անծանոթներից մեկը մոտեցավ, ինչ վոր մի կոթ պտտեց, ու տրակտորն իսկույն սկսեց շարժվել, դողալ ու փրնչացնել, ինչպես կենդանի մի արարած:

Յերեխաները վա՛յ արին. իսկ անծանոթը բարձրացավ վրան, հանդիստ նստեց ու կոթերից մեկը սեղմեց: Տրակտորը կամաց շարժվեց, նրա յետևից՝ դութանը:

Պողպատի խոփերը վարում եյին, ու հողի շերտերը
 ժապավենների նման շարվում եյին իրար կողքի:

— Եհէ՛, ա՛յ բան, — զարմանում եյին ծերունիները:

Պաբուլը հաշվեց, վոր տրակտորը տասն որում
 կոլտնտեսութեան բոլոր հողերը կվարի:

Մի յերկու անգամ պտտվելուց հետո, Մարտինը
 մոտեցավ գյուղացիներին:

— Հը՞, լավն ե՞:

— Ի՛նչ խոսք:

— Լա՛վն ե, թե լավի պե՛ս:

— Սրանից հետո մեքենա-տրակտորային կայանի
 տրակտորները կվարեն ձեր կոլտնտեսութեան հողերի
 մեծ մասը, — բացատրեց տրակտորիստ Մարտինը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մուշտակ — մորթուց կարած տաք վերաբկու:

2. Տարոբինակ — վաչ սովորական:

3. Ամբոխ — անկազմակերպ ժողովուրդ:

46. ԾԱՂԻԿՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ



ՄԵՂՈՒ

Բարե՛վ, բարե՛վ, կապույտ ծաղիկ,
 Ա՛խ, ինչ լավն ես ու դալար,
 Թող քո սրտից մեղուն քաղի
 Անուշ հյութեր իր համար:



ԾԱՂԻԿ

Պստիկ մեղու,
 Ճստիկ մեղու
 Աչխատասեր ու արի,
 Ո՛ւր ես տանում,
 Ի՛նչ ես անում
 Փռչին դու իմ թերթերի:



ՄԵՂՈՒ

Կապույտ ծաղիկ, նուրբ ու նախշուն,
 Բացված գարնան հովի հետ,
 Յես քո հյութից մեղր եմ քաշում
 Համով, հոտով բուրավետ:
 Առավոտից մինչ ուշ գիշեր
 Շրջում եմ դաշտ ու այգի,
 Չե՞ վոր յես ել անգամն եմ ժիր
 Մեր յերջանիկ համայնքի:

— Խուլի՛ր, խուլի՛ր:

— Կանգնեցնել նաւը, — անհանգիստ ձայնով հրամայեց հերթապահը:

Նաւը վայրկենապես կանգնեց, խրվեց ժայռերի մեջ և, թակարդն ընկած թռչունի պես, սկսեց թռչել:

2

Նավապետը քնած էր. նա իսկույն արթնացավ ու մի րոպեյից հետո արդեն դիտարանի վրա յեր: Բոլորն ել արագ հագնվելով՝ վերև վազեցին:

Նաւն ուժգնությամբ դիպչում էր քարերին: Մեքենան գործում էր վորքան ուժ ուներ, բայց չէր կարողանում նաւը տեղից շարժել. խորն էր խրվել:

Սոսկալի դրություն էր. անտանելի մութ էր ու փչում էր քամին:

Տասը րոպեյից հետո իմաց տվին, վոր ջուրը նավի ճեղքվածքով ներս է լցվում. բոլոր միջոցները գործ դրին, բայց ջուրը հետզհետե ավելանում էր: Դրությունը ծանր էր. աղատվելու վոչ մի հնար չկար. վոչ վոքից ոգնություն սպասել չէր կարելի: Ամեն ինչ ներքեից բարձրացրին տախտակամած:

Նաւն աղատելու մասին ել վոչ վոք չէր մտածում:

Բայց գիշերով, այն սոսկալի արեկոծության միջոցին, մակույկներով հեռանալն ել անմտություն էր. պետք էր սպասել լուսաբացին:

Վերջապես արեւելքն սպիտակեց:

Նավից հարյուր մետր հեռավորության վրա յերեւոյաց բարձր և ուղղաձիգ ափը: Քամին չէր հանդարտվում, և արեւներն ասեղ մոնչյունով զարկվում էին ափին:

Մոտիկ ափին անհասանելի յեր թվում, մասն՝ անխուսափելի: Ափն եյին հավաքվել մի խումբ մարդիկ, բայց ինչ կարող էին անել նրանք, կամ ինչո՞վ ոգնել:

3

Լուսացավ:

Մութ ամպերը պատել էին յերկինքը: Քամին չէր հանդարտվում. արեւներն առաջվա պես սոսկալի էին: Նաւը յերբեմն ճոճվում էր հարվածներից, բայց դեռ ջրի յերեսին էր մնում:

Նավապետը պաղարյունությամբ չքջում էր ամեն կողմ ու վոգեւորում նավաստիներին.

— Դե՛, տղերք, մի՛ վախենաք, քամին շուտով կդադարի, և նավակներով ափ դուրս կգանք:

Նավապետը դառնալով հերթապահին՝ ասաց.

— Յեթե հնարավոր լիներ պարանի ծայրն ափ հասցնել և այնտեղ ամրացնել, միակ փրկությունն այդ կլիներ: Բայց իսկապես չի կարելի. քամին չի դադարում, մակույկն իսկույն ջրով կլցվի:

— Գուցե հնար լինի լողալով:

— Լողալով: Բայց ո՞վ սիրտ կանի: Յեթե նույնիսկ մեկը հրաշքով ափ հասնի լողալով, ափի քարերին կդիպչի ու կջարդվի... Բայց և այնպես, պետք է փորձել... Յեթե ափին գտնվողները պարանի ծայրը բռնեն, մենք փրկված ենք: Հրամայեցեք, վոր նավաստիները հավաքվեն:

Յերբ բոլորը շարքով կանգնեցին, նավապետը մոտեցավ ու բացատրելով իր միտքը, ձայն տվեց.

— Դե՛, տղերք, կա՞րողյոք ձեր մեջ մեկը, վոր ուզում է մեզ՝ բոլորիս աղատել: Յեթե կա, թող ա՛յս կողմը կանգնի:

Վոչ վոք չչարժվեց. բոլորը սոսկումով նայում էին փրկրած արեւներին:

Միայն Պատիկ նավաստին դուրս յեկավ շարքից, համարձակ մոտեցավ նավապետին և քաշվելով ու կարմրելով ասաց.

— Յես կամենում եմ, նավապետ:

— Դո՞ւ, — զարմացած բացականչեց նավապետը:

— Այո՛, նավապետ:
 — Ի՞նչ քո բանն է, դու իսկույն կխեղդվես:
 — Անհոգ յեղեք, նավապետ, յես սովոր եմ ջրին,
 լողալ գիտեմ:

— Լա՞վ ես լողում:
 — Այո՛:
 — Բայց դու հասկանո՞ւմ ես, թե ի՞նչ ես անում:
 — Հասկանում եմ, նավապետ:
 — Բայց և այնպես կամենո՞ւմ ես:
 — Ընկերներիս փրկության համար ինչպե՞ս չա-
 նեմ:

— Յեթե պարանի ծայրն ափ հասցնես, դու մեր
 փրկիչը կդառնաս... Բոլորի կողմից շնորհակալու-
 թյուն եմ հայտնում քեզ, — ասաց նավապետը հուզ-
 ված:

Պատիկ նավաստին արագությամբ մերկացավ, կա-
 պեց խցանե գոտին և պաքանի ծայրը փաթաթեց մեջ-
 քին:

Յերբ պատրաստ եր, խոնարհությամբ գլուխ տը-
 վեց ամենքին և դողդողացող ձայնով ասաց.

— Մնա՛ք բարև, ընկերներ:

— Գնա՛ս բարև, Պատիկ:

Բոլորը նայում էին նրան իբրև մի զոհի:

Նա նետվեց ալիքների մեջ:

4

Բոլորի աչքերն ուղղված էին դեպի անվախ լո-
 ղորդը: Նրա գլուխը սև կետի նման յերբեմն յերևում
 եր ալիքների միջից, յերբեմն անհետանում:

— Կեցցե՛ս, լավ ե լողում, — ասում եր նավապե-
 տը աչքը չհեռացնելով լողորդից:

Ճիշտ վոր Պատիկը լավ եր լողում... Արդեն մոտ
 է. մի քանի շարժում ել, և ահա ափը կհասնի: Ափում
 գտնվող մարդիկ ինչ վոր բան են աղաղակում նրան,

դեպի աջ ցույց տալով, բայց նա վոչինչ չի հասկա-
 նում: Հանկարծ մի ալիք ուժով վերցրեց նրան և խը-
 փեց ծովեզրի մի սուր քարի... Սոսկալի ցավն ու
 թուլությունն իսկույն հաղթեցին նրան և մթադնած
 աչքերով կարողացավ պարանի ծայրը միայն ցույց
 տալ մոտ վազող մարդկանց:

Ափին գտնվող մարդիկ դուրս քաշեցին Պատիկի
 դիակը և սկսեցին պարանը ձգել:

Կես ժամից հետո պարանի ծայրն ամուր կապված
 եր մի ժայռի: Նավի վրա յեղող մարդիկ սկսեցին
 պարանի ոգնությամբ ափ դուրս գալ:

Յերբ բոլորն ափ դուրս յեկան, նավապետը,
 ցույց տալով Պատիկի դիակը, ասաց.

— Յեղբայրներ, ահա սա՛ յեր, վոր զոհեց իր
 կյանքը մեզ փրկելու համար:

Նա վերցրեց գլխարկը, խոնարհվեց և համբուրեց
 Պատիկի ճակատը:

Բոլորն ել վերցրին գլխարկները և մեկ-մեկ սկսե-
 ցին համբուրել Պատիկին:

Այդ միջոցին նավը սուզվում եր:

ԲՆՈՒՆՐԻ ԲՍՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Նավաստի — նավի վրա ծառայող:
2. Ավագ — գլխավոր, մեծ:
3. Դիտարան — բարձրից դիտելու, նայելու տեղ:
4. Խուբ — ջրի տակի սուր սուր քարեր:
5. Տախտակամած — նավի վերևը (կտուրը):
6. Ուղղաձիգ — վերևից ներքև ուղիղ ձգված:
7. Պաղարյունուրյուն — սառնասրտություն:
8. Մակույկ — փոքրիկ նավակ:
9. Սոսկում — սարսափ:

48. ԼՈՒՍԱԴԵՄԻՆ

Անուշ հովերն են փչում,
Վոսկի հասկերն են ծփում,
Մանր ուլունք չաղ տալով՝
Բարակ առուն կարկաչում:

Առվի կանաչ ափերին
Գառներն, ուլերն արածում—
Ծաղիկներն են թփերին՝
Անուշ բուրմունք տարածում:

Արչալույսը վոսկեզոծ
Ծաղեց հեռվից չողալով,
Խոփը մտավ հողի ծոց՝
Ակոս շարեց սողալով:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ծփալ — շարժվել:
2. Բուրմունք — անուշահոտություն:

49. ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Ղուանակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ,
Ծաղեց լուսնակն յերկնքից
Հովվի սրինգն եր անուշ:
Հոտաղն յեղներ կարածե,
Մաճկալ պառկել, քունն անուշ,
Զըղըղուն քամին կփչե,
Ծովային հովն եր անուշ:
Դաշտեր, ձորեր մնջեր են,
Զրեր գլգլան, ձենն անուշ:

Հավքեր թռան իրանց բուն,
Բլբուլի տաղն եր անուշ.
Անմահական հոտ բուրեր,
Կարմիր վարդի հոտն անուշ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զղըղուն — սվալացող:
2. Մնջեր են — լռել են:
3. Տաղ — յերգ:

50. ՔԱՋ ՆԱՊԱՍՏԱԿԸ

1

Վախկոտ նապաստակը ծնվեց անտառում:
Մի չոր ճյուղ եր կոտրվում, թե մի ճնճղուկ թըռ-
չում— նա սարսափում եր:
Վախեցավ մի որ, յերկու որ, մի չաբաթ, մի
տարի, և յերբ մեծացավ, մեկ ել վախենալուց ճանճ-
րացավ:

— Յես վոչ վոքից չեմ վախենում, — գոռաց ան-
տառովը մին: — Ամենևին չեմ վախենում...

Վաղեցին, յեկան, հավաքվեցին մեծ ու փոքր նա-
պաստակները և ալանջ են դնում, թե վոնց ե պարծե-
նում շղթիկը: Ականջ են դնում ու չեն հավատում ի-
րենց լսածին: Դեռ չեք պատահել, վոր նապաստակը
վոչ վոքից չվախենար:

— Ե՛յ դու, շղթիկ, գայլի՞ց ել չես վախենում:

— Վո՛չ գայլից եմ վախենում, վո՛չ աղվեսից,
վո՛չ ել արջից, վո՛չ վոքից չեմ վախենում:

Այդ արդեն չափից անց եր: Ծիծաղեցին նապաս-
տակները, հռհռացին ու սկսեցին գլուխկոնձի տալ,
վազվզել, և ցատկոտել դժի նման:

— Ի՞նչ եմ ձեզ հետ յերկար ու բարակ խոսում, —

գոռում եր քաջասիրտ նապաստակը:—Յեթե ինձ մի
գայլ պատահի, յես ինքս նրան կուտեմ:

— Ա՛խ, ի՞նչ ծիծաղելին ե, ա՛խ, ի՞նչ հիմարն ե:

Նապաստակները անընդհատ խոսում եյին գայլի
մասին, իսկ գայլը, դու մի առիւլ, հեռու չի լինում:

2

Սոված գայլն անտառում ման եր յեկել ման ու
մտքումն ասել. «ա՛յ մի նապաստակ պատահի՛, ինչ
կուտե՛մ»... Հենց այդ ժամանակ ել քթի տակ լսեց
նապաստակների ձայնն ու առավ նրանց հոտը: Մոտե-
ցավ, թաքնվեց և լսեց, թե ինչպես են ծիծաղում իր
վրա, և ամենից շատ այն պարծենկոտ չլդիկը:

— Կա՛ց, հենց քե՛զ պիտի ուտեմ հիմա,—մտա-
ծում ե գայլն ու ջոկում, թե վորն ե այդպես պարծե-
նում:

Իսկ նապաստակները վոչինչ չեն տեսնում և ավե-
լի ու ավելի յեն ուրախանում:

Բանն այնտեղ հասավ, վոր պարծենկոտ չլդիկը
յեւով մի կոճղի, բարձրացավ յետևի թաթերի վրա ու
խոսեց.

— Լսեցե՛ք, ե՛յ վախկոտներ: Լսեցե՛ք և ի՛նձ նա-
յեցեք: Ահա յես ձեզ մի բռն ցույց կտամ... յես...
յես... յես...

Այստեղ խեղճ նապաստակի լեզուն փորն ընկավ:

Տեսավ իրեն նայող գայլին: Մյուսները չեյին
տեսնում, իսկ նա տեսավ ու վախից ձայնը կտրեց:

Մին ել հանկարծ մեր պարծենկոտ չլդիկը գնդա-
կի պես վեր թռավ, գիպավ ուղղակի գայլի գլխին,
գլորվեց նրա մեջքով, գլուխկոնձի տվեց ողի մեջ ու
ծլկեց. վո՛նց ե փախչում...

Յերկար վազեց խեղճ նապաստակը, այնքան վա-
զեց, վոր ուժից ընկավ:

Նրան թվում եր, թե գայլը կրնկակոխ գալիս ե
յետևից և ահա կըռնի ու կզզզզի իրեն:

Վերջապես խեղճն ուժասպառ՝ աչքերը փակեց և
կիսամեռ ընկավ մի թփի տակ:

Իսկ գայլն այդ ժամանակ վազում եր հակառակ
կողմը:

Յերբ նապաստակը նրա գլխին ընկավ, գայլը կար-
ծեց, թե մեկն իրեն հրացանով զարկեց, գլուխն առավ
ու փախավ:

3

Յերկար ժամանակ նապաստակներն ուչքի չեյին
գալիս. վորը թփի տակ եր թաք կացել, վորը կոճղի
յետևը, վորը փոսի մեջ:

Վերջապես հոգնեցին թաքնվելուց, ովքեր ավելի
քաջ եյին, կամաց-կամաց գլուխները հանեցին, սկսե-
ցին չորս կողմը նայել:

— Ա՛յ թե լավ վախեցրեց գայլին մեր նապաս-
տակը,—վճռեցին բոլորը: Յեթե նա չլիներ, մենք
կենդանի չեյինք մնա... Բայց ո՞ւր ե նա, մեր անվախ
նապաստակը:

Սկսեցին փնտռել. ման յեկան, ման յեկան, ան-
վախը չկար ու չկար:

— Մի ուրիշ գայլ կերած չլինի՞ նրան:

Վերջապես գտան նրան մի փոսի մեջ, թփի տակ
պառկած, վախից կիսամեռ:

— Կեցցե՛ չլդիկը,— գոռացին միաձայն:—Վա՛յ,
չլդիկ, ա՛յ թե վախեցրիւր պառավ գայլին, հա՛, շնոր-
հակալ ենք, յեղբայր: Իսկ մենք կարծում եյինք, թե
դու պարծենում ես միայն:

Խորամանկ չլդիկը հանկարծ սիբտ առավ, դուրս
յեկավ իր փոսից, աչքերը ճպճպացրեց ու ասաց հը-
պարտ.

— Հապա դուք ի՞նչ եյիք կարծում, ա՛յ դուք,
վախկոտնե՛ր:

Ու այն որովանից մեր նապաստակն սկսեց ինքն ել
հավատալ, թե ճիշտ վոր ինքը վոչ վոքից չի վախե-
նում:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Կրկնակոխ — յետեից հասած, մոտեցած:

2. Կոնդ — կտրված ծառի բնի մնացած մասը:

ՀԱՐՅԵՐ

1. Կարելի՞ յե հետեյալ արինակները փոխարինել փակա-
գըծերում բերված նախադասություններով.

ա) «վախեցավ մի որ, յերկու ոք, մի շաբաթ, մի տարի»
(միշտ վախենում եր).

բ) «վո՛չ դայլից եմ վախենում, վո՛չ աղվեսից, վո՛չ ել ար-
ջից— վոչ վոքից չեմ վախենում» (դայլից, աղվեսից, արջից չեմ
վախենում).

գ) «ման յեկան, ման յեկան, անվախը չկար ու չկար» (չատ
փնտռեցին, բայց անվախը չկար):

Վա՞րն ե ավելի պատկերավոր:

2. Վո՞ր հատվածներն են ցույց տալիս նապաստակի վախ-
կոտությունը կամ նրա խորամանկությունը:

3. Գրվածքի վո՞ր տեղերն են ցույց տալիս, թե ինչու վախ-
կոտ նապաստակը քաջի անուն ստացավ:

Պատմեցեք այս պատմվածքի բովանդակությունը համառո-
տած:

51. ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

Դու կապուտակ ծովով արի,

Թեթե, թեթե թևով արի.

Ծովի փրփուր լանջով արի,

Գարնան յերգով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,

Արի՛, արի՛, գարուն դու բեր:

Սևիկ-մեիկ աչիկ ունես,

Մկրատաձև պոչիկ ունես,

Ծովի փրփուր լանջով արի,

Գարնան չնչով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,

Արի՛, արի՛, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կգա,

Անծիծեռնակ գարուն չկա,

Ծովի փրփուր լանջով արի,

Գարնան չնչով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,

Արի՛, արի՛, գարուն դու բեր:

52. Վ Ա Ր Դ Ը

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,

Տեսավ մի վարդ դաշտի միջին.

Վարդը տեսավ, ուրախացավ,

Մոտիկ վազեց սիրուն վարդին,

Սիրուն վարդին, կարմիր վարդին,

Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ.— Գեղ կպոկեմ,

Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին:

Վարդը ասավ.— Տե՛ս, կծակեմ,

Վոր չմոռնաս փշոտ վարդին.

Փշոտ վարդին, կարմիր վարդին,

Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տղան պոկեց,

Պոկեց վարդը դաշտի միջին.

Փուշը նրա ձեռքը ծակեց,

Բայց ել չոգնեց քնքուշ վարդին.

Քնքուշ վարդին, կարմիր վարդին,

Կարմիր վարդը դաշտի միջին:

Մի անգամ գնում եմ անտառով և անուշ եմ ա-
նում ճանապարհին գնած քաղցր բալը:

Հանկարծ մի յեղջերու դուրս յեկավ. ամրակաղմ,
գեղեցիկ, ճյուղավոր պոզերով մի յեղջերու:

Իսկ յես վոչ մի գնդակ չունեմ:

Յեղջերուն հանգիստ կանգնել, նայում եր ինձ.
կարծես գիտեր, վոր հրացանս դատարկ ե:

Իմ բախտից մոտս մի քանի բալ եր մնացել և յես
հրացանս բալի կորիզով լցրի: Այո՛, այո՛, մի՛ ծիծա-
ղեք: Հրացանս լցրի սովորական կորիզով:

Հրացանը թնդաց, բայց յեղջերուն միայն գլուխը
թափահարեց: Կորիզը կպավ ճակատին և վոչ մի վը-
նաս չտվեց: Մի վայրկյանում նա անհայտացավ խիտ
անտառում:

Յես շատ ափսոսացի, վոր այդպիսի գեղեցիկ
կենդանուն ձեռքիցս բաց թողի:

Մի տարի հետո, յես նորից վորսի եյի գնացել:
Ի հարկե, բալի կորիզի պատմությունն այդ ժամա-
նակ յես բոլորովին մոռացել եյի:

Ինչպես զարմացա, յերբ անտառի խորքից ուղիղ
գեմս դուրս յեկավ մի հրաշալի յեղջերու, պոզերի մեծ-
տեղը մի մեծ բալենի: Հավատացե՛ք, վոր շատ հրա-
շալի յեր. ամրակաղմ յեղջերու, գլխին մի մեծ ծառ:

Իսկույն գլխի ընկա, վոր այդ ծառը բսել եր բա-
լի այն փոքրիկ կորիզից, վորով յես անցյալ տարի
հրացանս լցրել և արձակել եյի յեղջերույի վրա:

Այս անգամ գնդակի պակասություն չունեյի: Նը-
շան բռնեցի, արձակեցի և յեղջերուն անկենդան գե-
տին ընկավ:

Յեւ յայսպես, մի զարկով միանգամից ստացա և՛
խորոված, և՛ քաղցր բալի կամպոտ, վորովհետեւ ծա-
ռը ծածկված եր խոշոր, հասուն բալերով:

Պետք ե խոստովանեմ, վոր այդպիսի համեղ բալ
կյանքումս յերբեք չեմ կերել:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Արտասովոր — վոչ սովորական:

2. Կամպոտ — մրգերից պատրաստած անուշահամ ջրալի
ուտելիք:

54. Գ Ա Ր Ն Ա Ն Ը

Մայիսն յեկավ վաբդավառ,
Կարմիր վարդը թփին շար,
Բուրմունքն անուշ, շունչն անուշ,
Գույն-գույն ծաղկի փունջն անուշ:

Մայիսն յեկավ զովարար,
Ի՛նչ սիրուն ե մեր աշխարհ,
Պաղ-պաղ աղբյուրն ե անուշ,
Ուրախ զեփյունն ե անուշ:

Մայիսն յեկավ կենսուրախ,
Զիլ հնչում ե յերգ ու տաղ,
Հովվի սրինգն ե անուշ,
Հոտաղի յերգն ե անուշ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զեփյուն — մեղմ, դուրեկան քամի:

2. Կենսուրախ — ուրախ կյանք տվող:

55. ԱՌԱՎՈՏԸ

Արշալույսի ցուքերը
Շապիկ հագան ծիրանի.
Տեսան, թռան հավքերը,
Նրանց հազար յերանի:

Դաշտի քնքույշ ծաղիկը
Բացեց թերթեր բուրավետ
Յեւ վաղորդյան շաղիկը
Յերկինք թռավ շողի հետ:

Ու բարձրացավ թանձր մեզ
Գետի փրփուր ջրերից:
Ջրին ասավ մի յեղեգ.
— Տե՛ս, լույս ծագեց վերևից:

ԲԱՌԵՐԻ ԲՆՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հավք — թռչուն:
2. Վաղորդյան — վաղ առավոտյան:
3. Մեզ — մառախուղ, մշուշ:

56. ՄԱՅԻՍԻ ՄԵԿՆ ԱՔՍՈՐՈՒՄ

Ցարական կառավարութիւնը դաժան կերպով եր
վարվում այն հեղափոխականների հետ, վորոնք ժո-
ղովրդի աչքերն եյին բաց անում և պայքարի եյին
կանչում ինքնակալության դեմ: Վոստրիկանական շը-
ները կրնակալութիւն հետեւում եյին հեղափոխականներին,
ձերբակալում եյին, հեռավոր Սիբիր աքսորում:

Վլադիմիր Իլյիչին և Նադեժդա Կոնստանտինով-
նա Կրուպսկայային նույնպէս Սիբիր աքսորեցին: Ըն-
կեր Կրուպսկայային իր հիշողութիւններում պատմում
է, թե ինչպէս Վլ. Իլյիչը տոնեց Մայիսի մեկը
1899 թ. աքսորում: Առավոտը վաղ հավաքվեցին բո-
լոր հեղափոխական բանտարկյալները, շնորհավորե-
ցին իրար և սկսեցին յերգել:

«Հասավ Մայիսը ուրախ,
Հեռու մեզնից, տխրութիւն,

Թող հնչի մեր յերգը խիզախ,
Գործադուլի յենք կանչում:
Վոստրիկաններն չարաչար
Իրենց սև գործն են անում,
Մեկ-մեկ ուզում են վորսալ
Ու նստեցնել մեզ՝ բանտում:
Մենք կթքենք նրանց վրա
Ու կտոնենք Մայիսն անահ:
Մեկ ել, ահա,
Հո՛ւլ-հա՛ հո՛ւլ-հա՛».

«Յերգեցինք ոռւսերեն, — գրում է Նադեժդա
Կոնստանտինովնան, — յերգեցինք նույն յերգը լեհե-
րեն և վորոշեցինք դաշտ գնալ ճաշից հետո — մայիս-
յան տոներ տոնելու:

Իսկ յերեկոյան յես և Իլյիչը չեյինք կարողանում
քնել, յերազում եյինք հաղթական բանվորական ցույ-
ցեր, վորոնց մենք ել կմասնակցենք յերբեիցե»:

ԲԱՌԵՐԻ ԲՆՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Իմֆնակալութիւն — թաղավորի անսահման իշխանութիւն:
2. Խիզախ — քաջ, համարձակ:
3. Դաժան — խիստ, անգութ:
4. Կրուպսկայ — կրունկը կոխելով (յետեից հասնելով):
5. Անահ — անվախ:

57. ԿԱՐՄԻՐ ԱՐԱԳԻԼ

1

Բուլղարական Բրադա քաղաքում ընդհանուր ան-
հանգստութիւն եր տիրում: Անհանգիստ եր վոստրի-
կանութիւնը, անհանգիստ եյին քաղաքացիները:
Յերկու կողմն ել ահով սպասում եյին ինչ վոր արտա-
կարգ դեպքերի:

Վաղը մայիսի մեկն է, և իշխանությունը կարգադրել եր՝ վո՛չ մի ցույց, վո՛չ մի դրոշակ, վո՛չ մի համախմբում: Կարգադրված եր, վոր այդ ուրը նույնիսկ կարմիր կտոր չլինի տների պատուհաներում, խանութների ցուցափեղկերում և մարդկանց վրա: Առհասարակ կարմիրը, վորպես հեղափոխության նշան, չպետք է յերևաք քաղաքում:

Այդ եր պատճառը, վոր վոստիկաններն այժմյանից շրջում եյին փողոցները, զննում պատուհաններն ու խանութները, անգամ կտուրները՝ տեսնելու թե կարմիր դրոշակ չե՞ն ամրացնում վորեւ տեղ, կամ թռուցիկ չե՞ն փակցնում: Գիտեյին, վոր կոմունիստները համարձակ մարդիկ են, կարող են հանկարծ մի այնպիսի բան անել, վոր քաղաքի իշխանությունն ու վոստիկանությունը խայտառակվեն: Դրանից եր, վոր նրանք կրկնապատկել եյին իրենց հսկողությունն ու յեռանդը:

2

Վոստիկանների ուժեղացած այդ հսկողությունն անհանգստացնում եր քաղաքացիներին, վոմանք վախենում եյին խուզարկությունից, ձերբակալությունից, իսկ քաղքենիները՝ անսպասելի աղետներից:

Բայց այդ ուրն ամենից ավելի անհանգիստ եյին յերկու փոքրիկ տղա— Պետկոն ու Խրիստոն: Դեռ մի քանի ուր առաջ նրանք վորոշել եյին՝ Մայիսի մեկին, ընկերների հետ, կարմիր դրոշակով դուրս գալ փողոց և մասնակցել հասակավորների միտինգին (լսել եյին, վոր այդպիսի միտինգ պիտի լինի): Հետո այցի զնալ հինգ տարի առաջ սպանված հեղափոխականների դերեզմաններին, ուր թաղված եյին նաև Պետկոյի հայրը և Խրիստոյի մեծ յեղբայրը: Բայց իշխանության սպառնալից արգելքն ամբողջովին քանդում եր նրանց ծրագիրը, և նրանք այժմ անհանգիստ մտածում եյին այնուամենայնիվ մի բան անել, մի այնպիսի բան,



վոր վոստիկանությունը գլուխը կորցնի և ավելի կատաղի: Յեվ դրա համար Խրիստոն առաջարկում եր գիշերը նավթ լցնել վոստիկանական շենքի վրա և վառել: Պետկոն համաձայն չեր. գտնում եր, վոր դրանից կարող է քաղաքը հրդեհ ընկնել և անմեղ մարդիկ կվնասվեն իզուր:

Շատ առաջարկներ արին ընկերներն իրար, բայց բոլորն ել անհարմար գտան: Վերջում, յերբ արդեն հուսահատվել էյին, Պետկոն վեր թռավ տեղից:

— Գտա՛:

— Ի՞նչ,— հետաքրքրվեց Խրիստոն:

— Հետևի՛ր ինձ, կիմանաս:

Ու ընկերները ճանապարհ ընկան դեպի քաղաքի այգիները:

Բայց թե ինչ եր Պետկոյի գաղտնիքը—այդ պարզվեց միայն հետևյալ ուրը—Մայիսի մեկին:

3

Մայիսի մեկի առավոտը վոստիկանները սովորականից ավելի էյին: Նրանք՝ աչքերը չորս՝ հսկում եյին հրապարակին ու մյուս փողոցներին, վոր ցույց լինելու դեպքում՝ ցրեն, հարկ յեղած դեպքում՝ կբա-կեն: Դրա համար սովորականից ավելի էյին զինված:

Առավոտը, ժամը տասին, յերբ չուկան լիքն եր արդեն մթերք ծախող դյուղացիներով և առևտրի յեկած քաղաքացիներով, Պետկոն ու Խրիստոն չուկա յեկան՝ մի փակ կողով ձեռներին: Տպավորութունն այն եր, թե յեկել են բան գնելու կամ վաճառելու: Դրա համար ել մի ծերունի հարցրեց.

— Ձո՞ւ, յեք ծախում:

— Ձե՛, —ասացին նրանք ու անցան առաջ, մտան բաղմության մեջ և կողովն զգուշությամբ գետնին դրին:

— Հիմա ի՞նչ անենք,— հարցրեց Խրիստոն:

— Սո՛ւս, սպասիր,— զգուշացրեց Պետկոն:

Յերկու վոստիկան՝ թուր ու ատրճանակ կապած և սուլիչը վզներիցը կախ, չրջում էյին չուկայում և հեռվից ուշադիր գնում ամեն մեկին ու նրա ապրանքը: Յերբ նրանք յեկան, ու սրա-նրա ապրանքը հոտո-

տելով անցան, Պետկոն շշնջաց Խրիստոյին.

— Բա՛ց թող...

Կողովը բացվեց և դուրս թռավ մի կարմիր բան ու առևտրով զբաղված բաղմության միջից բարձրացավ վեր:

Ջարմանքի ձայներ լսվեցին, իսկ վոստիկաններից մեկն ապչեց մի վայրկյան. կարմիրը նրան աչալես չփոթեց, վոր մի քանի քայլ յետ գնաց. մեկ նրան թվաց թե «փռոսն» ե, մեկ ել կարծեց՝ ծալած կարմիր դրոշակ: Յերկու դեպքում ել՝ կարմիրն անթույլատրելի յեր, ուստի նա առաջ վազեց, վոր բռնի, բայց վորքան մեծ յեղավ զարմանքը, յերբ այդ թրու-չող կարմիրը թևերը բաց արավ և մի տարորինակ ձայն հանեց. «Կըրը՛կ»...

Կին, մարդ, յերեսա, առևտուրը թողած, նայեցին թռչող կարմրին, իսկ վոմանք բացականչելով, հետևեցին վոստիկանին: Վոստիկանը, չհասնելով թռչողին, դա համարեց ցույցի նշան ու սուլեց:

Սուլոցի վրա վոստիկանատնից անմիջապես դուրս թափվեցին կազմ ու պատրաստ վոստիկանները և վազեցին դեպքի վայրը, ուր բոլոքն արդեն նայում էյին վեր՝ ողում սավառնող կարմրին:

— Արագի՛լ ե, արագի՛լ,— բացականչում էյին մարդիկ:

4

Իսկապես արագիլ եր: Նա թևատարած մի յերկու պտույտ գործեց չուկայի վերև, մի յերկու անգամ գլուխը թեքեց դես ու դեն ու թռավ դեպի վոստիկա-նատուն, հանդարտ իջավ նրա աշտարակի գլխին, ժա-մացույցից վեր... Շուկայում ծիծաղ բարձրացավ: Իսկ յերբ արագիլն իրեն հանգիստ զգալով, վոտի մեկը ծալեց, դրեց փորի տակ—ծիծաղը փոխվեց քրքի-քիջի:

Դա փոքրիկ քաղաքին ծանոթ արագիլն էր, վոր որվա վորոշ ժամերին սիրում էր թառել յեկեղեցու գմբեթին, կամ վոստիկանատան աշտարակի գլխին, ուր մարդկանցից հեռու հանգստանում էր:

Բայց ինչո՞ւ յեր կարմրել—այդ էր զարմանալին:

— Արյունոտված ե, —ասում էյին մարդիկ:

— Յերևի վիրավորված ե:

— Ներկել են, ներկել, —բացականչեց մեկը հանկարծ: — Չե՞ք տեսնում, մինչև անգամ գլուխն ու վոտները կարմիր են...

Ու սկսեցին փափսալ, թե ով կարող է ներկած լինել:

5

Կարծում էք արագիլի պատմությունը սրանով վերջացա՞վ: — Վո՛չ:

Այնուհետև մի ամբողջ շաբաթ, նա, կարմիր թեւերը դրոշի պես պարզած, հաճախ սավառնում էր քաղաքի գլխին ու մեկ-մեկ իջնում կա՛մ յեկեղեցու գմբեթին, կա՛մ վոստիկանատան աշտարակին:

Նրա թևերը կարմիր մնացին այնքան, մինչև վոր անձրևները լվացին նրանց:

Բայց մինչև այսօր ել Բաագայում չգիտեն, թե ո՞վ էր ներկել նրան:

Այդ բանը գիտեն միայն Պետկոն ու Սրիստոն:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Արտակարգ — անսովոր, վոչ սովորական:
2. Համախմբում — հավաք, ժողով:
3. Աղետ — թշվառութուն, փորձանք, դժբախտութուն:
4. Աչքերը չորս — շատ աչաղիր:
5. Քրքիջ — բարձրաձայն ծիծաղ:
6. Գմբեթ — չենքի բարձր, սուր ծայր:

ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչ դրուժյան մեջ էր Բաագա քաղաքը Մայիսի 1-ի նախորդակին:

2. Ո՞ւմնից էր վախենում իշխանությունը:

3. Ի՞նչ ձեռնարկեցին Սրիստոն և Պետկոն:

4. Ինչո՞ւ նրանք զամբյուղը չուկա տարան:

5. Ինչո՞ւ մարդիկ փափսալով էյին ասում իրար՝ «ո՞վ է ներկել արագիլը»:

1. Կարդացեք պատմվածքի այն մասը, ուր նկարագրված է Պետկոյի և Սրիստոյի նախապատրաստական աշխատանքը:

2. Գրեցեք այն մասին, թե ի՞նչպես չուկայում արագիլը գուրս թռավ զամբյուղից:

3. Պատմեցեք թե ուրիշ ի՞նչ կերպ կարող էր վերջանալ այս պատմվածքը:

4. Կարդացեք «Կարմիր Կոլանը» գիրքը և համեմատեցեք այս պատմվածքի հետ:

58. ԲՈՒԴՅՈՆՆԻՆ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ

Մի օր ընկեր Բուդյոննին յեկավ գործարան, ուր աշխատում էյին մանկապարտեզի յերեխաների հայրերը: Գործարանը շատ լավ էր աշխատել, և Սիմյոն Միխայիլովիչ Բուդյոննին յեկել էր հարվածայիններին շնորհավորելու: Նա ավտոյից դուրս յեկավ: Հարվածայինները հավաքվեցին ահումբ: Բուդյոննին ճառասեց:

Հանկարծ բեմի վրա դուրս յեկան գործարանի մանկապարտեզի յերեխաները. Մարթան և Մայան մի քիչ քաշվում էյին: Շատ ժողովուրդ կար, աղմուկ էր:

— Ընկեր Բուդյոննի, —ասաց Մայան և լռեց:

— Յես եմ Բուդյոննին, —ասաց Սիմյոն Միխայիլովիչը:

— Քեռի Բուդյոննի, մորաքույր Սիման...սկսեց Մարթան, բայց Մայան նրան ընդհատեց։

— Մենք, բոլոր յերեխաներս, խնդրում ենք ձեզ հյուր գալ մեզ մոտ՝ մանկապարտեզ։ Այնտեղ մեզ մոտ չքերթ կլինի։

— Մեզ մոտ աղջիկներին ել թույլ կտան, վոր չքերթի մասնակցեն, — ավելացրեց Մարթան։

— Դե, ընկերներ, — ասաց Բուդյոննին հարվածա-
յիններին, — քանի վոր յերեխաները կանչում են, չեմ կարող հակառակվել։ Յենթարկվում եմ։ Գալիս եմ։ Գնանք։ Ինձ ել տարեք ձեզ հետ։

2

Յեվ Բուդյոննին բռնեց յերեխաների ձեռքից։ Նը-
բանք ակումբից փողոց դուրս յեկան։ Բուդյոննուն
տեսներով՝ փողոցում յեկողները վազեցին։ Վողջ փո-
ղոցը գոչեց. «Բուդյոննին, Բուդյոննին ե գալիս»։

Յերեխաները Սիմյոն Միխայիլովիչի ձեռքից բռն-
ած հպարտ-հպարտ գնում եյին։ Իսկ նրանց յետևից
դանդաղ շարժվում եր Բուդյոննուն ավտոն։

Այսպես նրանք յեկան մանկապարտեզ։ Ներս մը-
տան գլխավոր մուտքից։ Մորաքույր Սիման դիմավո-
րեց ընկեր Բուդյոննուն։ Յերեխաները նրան չըջապա-
տեցին։

— Քեռի, դուք իսկապե՞ս Բուդյոննին եք, —
հարցրին յերեխաները։

— Ազնիվ խոսք, — ասաց Բուդյոննին։

— Իսկ ինչո՞ւ ձիու վրա չեք։

— Այստեղ ձի չի մտնի, — պատասխանեց Սիմյոն
Միխայիլովիչը։

— Իսկ ինչո՞ւ թուր չունեք։

— Ժողով գնալիս թուր չեն կապում, — ասաց
Բուդյոննին, — յես հարվածայինների մոտ եմ յեկել։
մտերմանում եմ և վոչ թե կոպում։ Ճիշտ ե, չե՞։

— Շ՛յ, ինչքան ումբիկներ ունես ոճիքիդ, — աս-
ացին յերեխաներից մի քանիսը և ամեն կողմի վրա
հաշվեցին չորս ումբիկ։

— Իսկ քանի՞ չքանչան, — գոչեցին մյուսները և
համրեցին կարմիր դրոշի չորս չքանչան։

— Համենայն դեպս դուք իսկականը չեք, — ասավ
համառ Ավդուտը։ — Իսկական Բուդյոննին փառավոր
գեներալ ե։ Իսկ իսկական գեներալը մի՞թե մանկա-
պարտեզ կգա։

— Մեզ մոտ գեներալներ չկան, — աղմկեցին յե-
րեխաներն իրար ընդհատելով։ Բուդյոննին ամենեվին
եկ գեներալ չե, նա Կաբմիր հեծելազորի ամենագլխա-
վորն ե։

— Ճիշտ ե, — ասաց Բուդյոննին։ Կեցցե՛ք, յերե-
խաներ։ Իսկ յեթե չեք հավատում, վոր յես իսկական
Բուդյոննին եմ, կարող եք թեկուզ բեխերս շոշափել։

Յեվ բոլոր յերեխաները հերթով շոշափեցին ընկեր
Բուդյոննուն բեխերը։

— Այնուամենայնիվ դուք նման եք, — ասաց Յու-
լիկը։

— Ո՞ւմ նման եմ։

— Նկարներում յեղած Բուդյոննուն։ Մենք ել ենք
ձեզ նկարել, — ասացին յերեխաները և բոլորը ցույց
տվին իրենց նկարածները։

Ընկեր Բուդյոննուն նկարը ձիու վրա նստած շատ
եղ լավ չեր դուրս յեկել։ Միայն ումբիկներն եյին ու-
ղիղ։

Բայց ընկեր Բուդյոննուն նկարները դուր յեկան։
Նա ծիծաղեց և ասաց։

— Կեցցե՛ք, յերեխաներ, վոչի՛նչ, վոր շատ ել
նման չե։ Սովորեցեք ավելի լավ նկարել։ Ա՛յ, ում-
բիկները ճիշտ են։

Յերեխաները շուտով Բուդյոննու հետ բոլորովին մտերմացան։ Նրանք ցույց տվին իրենց բոլոր խաղալիքները, մանկապարտեզի բոլոր սենյակները, — և ննջարանները, և ընթերցարանները և լվացվելու սենյակը։ Մինչև անգամ վիճեցին Բուդյոննու հետ այն մասին, թե ո՞վ է գլխավորը. կարմիր բանակայինը, միլիցիոնե՞րը, ուղաչո՞ւն, թե՞ նավաստին։ Ընկեր Բուդյոննին պատասխանեց ճիշտ այնպես, ինչպես մորաքույր Սիման. «Բոլորը հարկավոր են։ Վոչ վոք գլխավոր չի»։

Հետո սկսվեց չքերթը։ Սա մի նշանավոր չքերթ էր։ Մասնակցում էին բոլոր յերեխաները։ Շքերթի հրամանատարն էլ ինքը՝ ընկեր Բուդյոննին էր։

Սմեն ինչ այնպես էր, ինչպես կարմիր հրապարակում։ «Յերաժշտությո՛ւն», — ասաց Սիմյոն Միխայիլովիչը։ Յեվ մորաքույր Սիման նստեց դաշնամուրի մոտ։ Հյուր յեկած ծնողները տեղավորվեցին պատերի մոտ գտնվող նստարանների վրա։

Բոլոր յերեխաները ծածկեցին բուդյոննովյան գլխաբլիներ, կարմիր աստղերով։ Նրանք վերցրին իրենց փոքրիկ հրացանները և դրոշակները։

— Մենք բուդյոննովցիներ ենք, — գոչեցին յերեխաները։

— Սպասեցեք, — ծիծաղեցին ծնողները։ — Բուդյոննովցիներ կլինեք հետո, իսկ առայժմ բուդյոննիկներ եք։

Մի քանիսը նստեցին աթոռների վրա, վորպես ձիավորներ, թիկունքը դեպի առաջ — սա կարմիր հեծելազորն էր։ Ուզում էին Բուդյոննու համար երայդպիսի մի ձի ճարեն։ Բայց բոլոր ձիերը նրա հա-

մար փոքր էին։ Յերեխաների մի մասը հագավ հակադաշին դիմակները։ Սա քիմիական գունդն էր։ Մյուսները յերեք-յերեք նստել էին նստարանների վրա — դրանք տանկեր էին։ Վոմանք էլ կարմիր խաչեր կապեցին — դրանք սանիտարներ էին։ Առաստաղից կախեցին դիրիժաբլների և ոդանավերի մոդելներ։

— Շքերթ, դդա՛ստ, — հրաման տվավ Բուդյոննին և բոլորը լռեցին։

— Աջ դա՛րձ, — գոչեց Բուդյոննին։ Յեվ բոլորը դեպի աջ դարձան։ Միայն Ավգուստը չհասկացավ և դեպի ձախ դարձավ։ Շփոթվելուց նրա աջ ականջը կարմրել էր։

— Վո՞ր կողմն է քո աջ ականջը քոր դալիս, — հարցրեց Բուդյոննին։

— Այս կողմը, — ասաց Ավգուստը և դարձավ այն կողմը, վոր աջ ականջը քոր էր դալիս։

— Հանդիսավոր մա՛րչ, — հրաման տվավ Բուդյոննին և ձեռքը դրեց գլխարկին։

— Դեպի ա՛ջ, դեպի դաշնամուրը, քայլո՛ո-ո՛ւ մա՛րչ։

Մորաքույր Սիման նվագեց Բուդյոննու մարչը. «Մեր յերդբայր Բուդյոննի, վողջ ժողովուրդը մեզ հետ է», — յերգեցին յերեխաները։ Յեվ չքերթն սկսվեց։

Մա՛րչ, մա՛րչ։ Անցավ հետևակը

Յեվ աղմկեց ինչ-վոր բան, —

Ասես թե հեծելազորը.

Ասես թե հրետանին

Յեվ բանակը չքերթով

Անցնում է շարան-շարան։

— Մեկ, յերկու, ձա՛խ... Մեկ, յերկու, ձա՛խ...

— Լա՛վ էք քայլում, յերեխանե՛ր, — գոչեց ընկեր Բուդյոննին։

— Ծառայում ենք աշխատավոր ժողովրդին, —
պատասխանեցին յերեսաները:

Յուլիկի համար այստեղ ավելի հետաքրքրական
էր, քան թե կարմիր հրապարակում: Սլանում էր
աթոռների վրա յերեսաների հեծելազորը: Առաջ էյին
շարժվում տանկ — նստաբանները: Վորոտում էր
մարշը: Քայլում էյին քիմիկոսները և սանիտարները:
Ծածանվում էյին դրոշակները: Որորվում էր գիրի-
ժարը: «Ուռա՛» գոչում էյին յերեսաները: Ծնողները
տեղերից վեր էյին թռչում: Նրանք ել էյին «ուռա՛»
գոչում և ծափահարում:

Բուլդոզիկները չքերթը վերջացրին...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ


1. Շֆերք — կազմակերպված յերթ՝ տոների ժամանակ:
2. Քիմիական գունդ — թունավոր նյութերի (գազերի) դեմ
պայքարող գունդ:
3. Մոդել — ձև, առարկայի փոքրացրած նկարը (ձևը):
4. Հեծելազոր — ձիավոր զորք:
5. Հրետանի — թնդանոթներից կրակող զորք:

59. Ս Ա Ր Գ Ն Ա Լ Ը

1

Ահա գարնան հետ և չարան-չարան
Դաշտավայրերից դեպի զով սարեր
Ձգվեց սայլերի, ուղտերի քարվան —
Փախչում են շողից թե թուրք, թե հայեր:

Թնդում են ձորում զանգի հնչյուններ,
Ձիերի խրխինջ, պայտերի դոփյուռ,



Մեկ-մեկի կցած անվերջ քարվաններ
Քաշում և նառը, ահեղ մոռչում:

Լեռների տոնն և մարդ և անասուն
Ուրախ յերգերով դիմում են սարեր,
Մոռնալով ձմռան քաշած վայնասուն,
Ծաղիկ փնջելով անցնում են ձորեր:

Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
Գարնան արևից փայլում են զենքեր,
Յեւ թարմ, կենսաբույր թավիչ կանաչով
Բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:

Մայրում են, բայրում գառնուկն ու մաքին,
Թնդում կովերի, հորթերի բառաչ,
Իսկ տըրլնգալով գոմեջը ձագին
Կանչում ե գանդաղ վազելով առաջ:

Վազում են հոգնած շները հոտի
Յեւ լեզուն հանած թանչին են տալիս,
Լսվում ե հանկարծ ձայնը լակոտի,
Վոր քոչից ընկած՝ կալանչ ե գալիս:

2

Քարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.
Վրան-վրանի յետևից բուսավ
Ծաղիկների մեջ գույն-գույն, սիզավետ:

Ալաչուխ, դազա, անվերջ վրաններ
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
Հենվեցին մեկ-մեկ բարձր քարափին:

Ու հով սարերի սիզավետ լանջին
Բազմել են հայի, թուրքի բինաներ,
Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝
Դեռ յերևում են ուղտի քարվաններ:

Խրխնջում ե ձին, կովը բառաչում,
Բոլորն ել իրանց յուրան են ճանաչում.
Բայում ե անուշ ամլիկը գառան,
Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

Գիշերը հասավ, մթին ե ճամբան.
Մարում ե կամաց աղմուկը քոչի,
Առվակի ափին քարվաններ իջան,
Կանչում են՝ «Տղե՛րք, ապրանք չկորչի»:

Ձիերի ջոկեր, ուղտերի քարվան,
Սայլերի ճռուց, վոչխար ու տավար
Գտնելով ձորում գիշերն իջևան,
Հանգիստ են առնում մյուս որվան համար:

Կրակի վրա, առվակի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
Մի տեղ ել կորած գառանն ու հորթին՝
Սար ու ձորն ընկած հովիվն ե կանչում:

Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթ ու խորոված:
Գիշերն ել արդեն մնջում ե, լուռ,
Հոգնած քոչվորին հանգիստ քուն բերում...

3

Բայց Լոք սարերի կանաչ լանջերում
Մի բինա ել կա, վոր հեջ չի քնում,
Այնտեղ խարույկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Յեւ մեծ ու փոքր ականջներ սրած,
Աչուղ Գիքոյի յերգերն են լսում:

Պատմում ե յերգում աչուղն անցյալից,
Ձորերում տեսած հին իգիթներից.
Կրակին գցած կաղնի մեծ գերան,
Սարվորն ել արթուն լսում ե նրան:

Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
Գարնան արևից փայլում են զենքեր,
Յեւ թարմ, կենսաբույր թավիչ կանաչով
Բացվում են, ժպտում սարվորի զեմքեր:

Մայրում են, բայրում դառնուկն ու մաքին,
Թնդում կովերի, հորթերի բառաչ,
Իսկ տըրլնդալով գոմեշը ձագին
Կանչում ե դանդաղ վազելով առաջ:

Վազում են հոգնած չները հոտի
Յեւ լեզուն հանած թանչին են տալիս,
Լսվում ե հանկարծ ձայնը լակոտի,
Վոր քոչից ընկած՝ կալանչ ե գալիս:

2

Քարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.
Վրան-վրանի յետևից բուսավ
Ծաղիկների մեջ գույն-գույն, սիզավետ:

Ալաչուխ, դադա, անվերջ վրաններ
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
Հենվեցին մեկ-մեկ բարձր քարափին:

Ու հով սարերի սիզավետ լանջին
Բազմել են հայի, թուրքի բինաներ,
Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝
Դեռ յերևում են ուղտի քարվաններ:

Խրխնջում ե ձին, կովը բառաչում,
Բոլորն ել իրանց յուրտն են ճանաչում.
Բայրում ե անուշ ամլիկը գառան,
Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

Գիշերը հասավ, մթին ե ճամբան.
Մարում ե կամաց աղմուկը քոչի,
Առվակի ափին քարվաններ իջան,
Կանչում են՝ «Տղե՛րք, ապրանք չկորչի»:

Ձիերի ջոկեր, ուղտերի քարվան,
Սայլերի ճռուց, վոչխար ու տավար
Գտնելով ձորում գիշերն իջևան,
Հանգիստ են առնում մյուս որվան համար:

Կրակի վրա, առվակի ափին
Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
Մի տեղ ել կորած գառանն ու հորթին՝
Սար ու ձորն ընկած հովիվն ե կանչում:

Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթ ու խորոված:
Գիշերն ել արդեն մնջում ե, լռում,
Հոգնած քոչվորին հանգիստ քուն բերում...

3

Բայց Լոք սարերի կանաչ լանջերում
Մի բինա ել կա, վոր հեչ չի քնում,
Այնտեղ խարույկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Յեւ մեծ ու փոքր աղանջներ սրած,
Աչուղ Գիքոյի յերգերն են լսում:

Պատմում ե յերգում աչուղն անցյալից,
Չորերում տեսած հին իգիթներից.
Կրակին դցած կաղնի մեծ գերան,
Սարվորն ել արթուն լսում ե նրան:

ՔԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Դաշտավայր — հարթ տեղ, ուր ամառը շոգ է լինում (արան) :
2. Կենսաբույր — կյանք բուրոյ :
3. Թանչել — հեալ :
4. Սեգ — կանաչ, նուրբ խոտ :
5. Ալաչուխ, դագս. — վրանների տեսակները :
6. Բիմա — վրանների տեղը :
7. Յուրդ — վրանի զբաղեցրած տարածությունը :
8. Արկած — պատահած նշանակալի դեպք, պատահար :
9. Իգիթ — քաջ, կտրիճ :

ՀԱՐՑԵՐ

1. Այս բանաստեղծության մեջ ի՞նչն է ավելի շատ դրամ հեղինակին (բնության տեսարան, կենդանիներ և այլն) :
2. Վո՞ր ազգերի քոչվորների կյանքն է նկարագրած այս տեղ :
3. Վո՞ր ժամանակաշրջանի քոչն է նկարագրում բանաստեղծը :
4. Ինչո՞ւ էյին քոչում գյուղացիները :

—

1. Այս բանաստեղծության ուրիշ վերնագիր դրե՞ք :
2. Գտե՞ք գրվածքի հետևյալ մասերը.
ա. քոչը դիչերով.
բ. տեղ հասնելը.
գ. քոչը ճանապարհին :
3. Կարգացե՞ք այն մասերը, վորտեղ պատկերացված են՝ քարվանք, հովիվը, կենդանիները, խարույկի տեսարանը :
4. Ընտրեցե՞ք և արտագրեցե՞ք այն բառերը, վորոնք ցույց են տալիս հատկություններ, որինակ, դարձան արև, թարմ, կենսաբույր կանաչ և այլն :

—

Դուրս յեկավ արևը լուսավոր
Են լեռան հետևից հեռավոր,
Վոսկեղեն շող փռեց սարերին,
Լույս-համբույր սլաքդեց ծառերին :

Կանաչ խոտն ու ծաղկունք ծիծաղում
Նայեցին արևին ժիր խաղով,
Հավքերը թը՛ռ արին թև թևի,
Միաձայն գովքն արին արևի...

Բայց ահա արևը բարձրացավ,
Են քաղցր զով հովը չքացավ,
Տոթակեղ ու խանձված կեսորին՝
Բոլորը պապանձված սուս արին :

ՔԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Պարգևել — նվիրել :
2. Ծաղկունք — ծաղիկներ :
3. Հավք — թռչուններ :
4. Տոթակեղ — շողից վառված :
5. Պապանձվել — լռել :

1

61. Ձ Ա Լ Ա Ն Կ Ը

Մեր Ձալանկը մի սև բրդոտ շուն էր, կուրծքն ու վիզը ճերմակ, վոր հեռվից թվում էր սպիտակ վրդ-կապ : Փոքրուց նրա ականջներն ու պոչը կտրել էյին, այդ պատճառով ամառը սաստիկ տանջվում էր ճանճերի ձեռից. հողը փոս էր անում, մեջը պառկում, կամ ժամերով մտնում էր թփերի ու լորենների մեջ և

գուրս եր գալիս այն ժամանակ միայն, յերբ անծանոթ վոտնաձայն եր լսվում բակում, կամ անցնող շան հոտ եր առնում: Մեր տավարին սիրում եր նա... Յեթե պատահեր, որինակ, մեր յեղներն առանց հսկողի մնային դաշտում, Չալանկը կմնար նրանց մոտ, նույնիսկ առավոտից մինչև յերեկո կհսկեր քաղցած և յերեկոյան միայն, յերբ յեղները գային տուն, նա ել հետները կգար...

Չմեռը հայրս Չալանկին կապում եր մեր գոմի դռան առջև, ուր նա յերեկոները խոտ եր դնում նրա համար, վոր տեղը տաք ու փափուկ լինի: Հայրս Չալանկին գոմի դռանը կապում եր, վոր գող գալու դեպքում իմացնի, վորովհետև գոմը գտնվում եր մեր տնից բավական հեռու:

— Քնածն ու մեռածը մեկ է, — ասում եր հայրս և միշտ զգուշացնում, վոր յեթե ինքը պատահեց, տանը չեղավ, մենք չմոռանանք Չալանկին կապել գոմի դռանը:

Յեվ, պետք է ասած, Չալանկի պատճառով թե նրա ահից, մեր գոմից բան չեր գողացվում: Հայրս հավատացած եր, վոր մի բան պատահելիս, Չալանկը հաջողով կիմացներ: Իսկ Չալանկը յերբեք սուտ չեր հաջում... Դա արդեն հայտնի յեր:

2

Չմռան մի գիշեր, յերբ մեր տանը բոլորս խոր քնած էինք, հանկարծ զարթեցինք, ինչ-վոր տարորինակ ձայներից: Մեկը դիպչում եր մեր դռանը, չանգռում այն և ինչ-վոր մոմուցի նման ձայներ հանում:

Ամենից առաջ զարթեցինք յես ու մայրս: Հայրս, սովորաբար, խոր եր քնում. մինչև չհրեյիր՝ չեր զարթնի: Մի քանի անգամ ականջ դնելով այդ տարորինակ ձայներին, մայրս զարթեցրեց հորս:

— Տես մի, են ի՞նչ է, վոր դուռը չանգռում է, — ասաց մայրս:

Այդ ըոպեյին դռան չանգռուողը կրկնվեց. նորից մեկը դիպավ դռանը և լսվեց զսպված կլանչոց:

— Շուն է՞, — հարցրեց հայրս տարակուսած, անկողնում նստելով: Ապա վեր կացավ, արխալուխը գցեց ուսերին ու գնաց դեպի դուռը:

Բայց մայրս չթողեց դուռը բանալ:

— Կատաղած շուն կլինի, բաց մի՛ անի:

Հայրս նայեց լուսամուտից, բայց բան չնկատելով, լուսամուտի մի փեղկը բաց արավ ու գլուխը դուրս հանեց:

— Դե կո՛րի, — գոռաց նա և, հետ դառնալով, ասաց.

— Մեր շունն է, կապը կտրել է...

— Բայց ինչի՞ յե դուռը չանգռում, — ասաց մայրս: Չլինի՞ սոված է:

— Չէ՛, հենց իրիկունը, գոմը փակելուց հետո յեմ հաց տվել, — պատասխանեց հայրս: — Ով գիտի, գելի հոտ է առել, վախից կապը կտրել, դեռն է յեկել...

Ու հայրս, ուսերին գցած արխալուխը մի կողմ դնելով, ուզում եր կրկին անկողին մտնել, յերբ շունը կրկին դիպավ դռանն ու կլանչեց:

— Չէ՛: Սա, ի՛սկ վոր գելի հոտ է առել, — կրկնեց հայրս, — վախից կլանչում է...

Ու նորից բարկացավ վրան:

— Դե կորի՛, անպետք...

Չալանկն ընդհատեց կլանչոցը, բայց դարձյալ դռնովը դիպավ:

— Քեզ պես հաղարը լինի, ես ցրտին դուրս չեմ գա, — ասաց հայրս ու մտավ անկողին:

3

Բայց հազիվ անկողին եր մտել, շունը դարձյալ յեկավ, դարձյալ դռնովը դիպավ ու կլանչեց: Հայրս ուզում եր ելի բարկանալ, բայց այս անգամ մայրս

խորհուրդ տվեց վեր կենալ, տեսնել թե, ինչ է պատահել:

— Ես չունն իսկի եսպես չի արել: Չլինի դո՞մը դուրե մտել,— կասկած հայտնեց:

— Յես կարծում եմ գել է տեսել, դրանից ե փախչում,— ասաց հայրս, դժգոհ վեր կենալով ու հազնվելով:— Յեթե դող լինե՞ր՝ կհաջեր: Ծուռը մենակ գել տեսնելիս չի հաջում:

— Դե վոր եղպես ե, հրացան վերցրու,— խորհուրդ տվեց մայրս անհանգստացած:— Սոված գելեր կլինեն, կվնասեն...

Հայրս այդպես ել արավ. հազնվելուց հետո՝ վերցրեց տան անկյունում կախված մեր հին հրացանը և սկսեց վառող լցնել:

— Դու ե՛լ վեր կաց, ա՛յ վորդի,— ասաց մայրս,— վե՛ր կաց, ճրագը վառի, հորդ հետ գնա: Գելերը ճրագի լույսից վախենում են...

Ասաց ու ինքն ել վեր կացավ:

Յեվ մինչ հայրս հրացանը կլցներ, յես հազնվեցի արագ: Ծառ եյի լսել գայլերի մասին, բայց չեյի տեսել... Ճրագը դտա, վառեցի և հորս հետ դուրս յեկա:

Դուռը բաց արինք թե չե, Չալանկը, կապի կտորը վզին, դիպավ հորս վոտքերին, կլանչեց ու առաջ վազեց:

Բայց հայրս կանգ առավ՝ շուրջը նայելու: Յես նույնպես նայեցի. գայլ չի՞ր յերևում արդյոք... Յուրտ եր. ձյուն... Գետինը, տանիքները, պատերը, ծառերը — ամեն ինչ ծածկված եր ձյունով... Թեև անլուսին գիշեր եր և սպիտակի վրա ամեն ինչ պարզ յերևում եր, բայց գայլ չկար...

«Յերևի դոմի մոտ ե», մտածեցի:

Ծուռը, վոր առաջ եր գնացել, նկատելով հորս ու իմ կանգ առնելը, յետ դարձավ իսկույն, կլանչեց և կրկին առաջ ընկավ, շուտ շուտ յետ՝ հորս յերեսին

նայելով. կարծես ուզում եր հասկացնել, վոր հետե-վենք իրեն:

Հայրս, հրացանը պատրաստ բռնած, ելի չորս կողմն աչք ածելով, յես ել նրա հետ, քայլ առ քայլ գնացինք շան յետևից:

Չալանկը վազում — գնում եր մինչև դոմի դուռը, այնտեղից վազում գալիս հորս մոտ, կլանչում և դարձյալ գնում դեպի դոմը:

Այս բանը կրկնեց մի քանի անգամ, և հայրս այլևս առանց շուրջը նայելու, շտապեց դեպի դոմը:

— Եստեղ ինչ վոր բան կա,— ասաց նա ու քայլերն արագացրեց:



Յես, ճրագը ձեռիս, հետևեցի նրան:

Չալանկը, դոմի դռան առջև կանգնելով, սկսեց կլանչել ու անհադիստ շարժումներ անել:

4

Հայրս բացեց դոմի դուռը, և յերբ ներս մտանք ու յես ճրագով լուսավորեցի դոմը, մեր աչքին պարզվեց հետևյալ տեսարանը:

Մեր մեծ կովը ծնել եր: Հորթն աղբի մեջ ընկած՝ մզկում եր և ուզում եր բարձրանալ, բայց չեր կարողանում: Իսկ մայրը բառաչելով, անհանդիստ շուտ

եր գալիս յերկու կողմի վրա, կապը ձիգ տալիս՝ դունչը հորթին հասցնելու... Ու չէր կարողանում:

Հայրս իսկույն վերցրեց հորթը՝ մաքրեց, աղ արավ ու դրեց մօր առաջ... Յեվ մինչ հայրս հորթը մաքրում, աղ եր անում, Չալանկը, ուրախ կլանչելով, թռչկոտում եր դես ու դեն:

— Այ կեցցե՛ս, Չալանկ, — ասում եր հայրս նրա գլուխը շոյելով, — յես քեզ զուր տեղը ծեծեցի:

Պարզվեց այսպիսով, վոր Չալանկը դրսից լսելով գոմում կատարվող անհանգստությունը, կապը կտրեւ եր, յեկել մեզ իմաց անելու:

Այդ որվանից մենք սկսեցինք սիրել Չալանկին առանձին սիրով: Յեվ յերբ պատահում եր, վոր նա հաջում, կլանչում եր դուրսը, միշտ ուշադիր եյինք նրա ձայնին: Գիտեյինք, վոր Չալանկը սուտ չի հաջի:

Շունն իմաստուն կենդանի յե, — ասում եր հայրս այդ դեպքից հետո: — Շանն ախպոր պես պիտի սիրել...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Տարակուսել — կասկածել:
2. Վատու — պայթուցիկ նյութ (փամփուշտի միջի):
3. Աչք ածել — ուշադիր նայել, հսկել:

62. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՅԵՐԵԿՈՒՅԹԸ

1

Հավաքվել եյին ծաղիկները փոքրիկ մարգագետնի վրա՝ սարի լանջին, անտառի յեզերքին: Հավաքվել եյին բոլորը՝ զարդարված իրենց գույնզգույն թանկագին զարդերով:



Սիրի-սիրի

Յեղածաղիկն ել եր այնտեղ, դեղկապուտաչյա մանուշակները, վորոնք խմբով մի թփի տակ քաշված, փափրսում եյին իրար հետ:

Հապա զանազաններն իրենց գույնը գույն թավիչ գլխարկներով ու վրդները նազանքով թեքած. հապա հպարտ, ցից մեխակը ատամնավոր պսակը գլխին, կարմիր կամ ճերմակ:

Յե՛վ սպիտակ յեղինջը՝ փարթամ տերևների ծոցում, ե՛կ կապույտ անանուխը, ե՛կ դեղին պուպուն, բոլորն ել այնտեղ եյին, սարի լանջին, անտառի յեզերքին, ամառվա այդ գով իրիկունը:

2

Հենց վոր ահագին կաղնու յետևից լուսինը յերևաց ե նրա արծաթի շողերն ընկան փոքրիկ մարգագետնի վրա, ծաղիկներն ավելի գլխարթացան, լուսատրտիկներն ավելի պայծառ վա-

Այնտեղ եր սուսամբարը՝ կանաչ չրջադեցատը հագին, մարգարիտները՝ սպիտակ պսակներն իրենց դեղին գլխակներին:

Այնտեղ եյին բոժոժները՝ սպիտակ, ախուժ ու գլխարթ այնտեղ եր սիրի-սիրին իր կարմրավուն, դանդուր գլուխն ուղիղ պահած:



Շուշան



Մարգարիտ

ռեցին իրենց լապտերիկները ծառերի ստվերի տակ ու ծղրիղներն ել ավելի յեռանդուն սկսեցին իրենց նվազը: Թեթև զեփյուռը դուրս պրծավ հանկարծ անտառի յետևից ու վազ տվեց մարդագետնով: Բոլոր ծաղիկները չնորհալի վողջունեցին իրար ու պարերն սկսեցին:



Զանազան



Մեխակ



Անանուխ

Նարգիզն իր յերկայն վիզը պչրանքով թեքած՝ գլուխն է ծոմուում թեթև ու սիրուն, և ամբողջ ցողունը դողում է հուզումից:

Իսկ ինչպե՞ս խելառ թռթռում էյին կապույտ ու ճերմակ զանգակները՝ շարված իրենց յերկար-բարակ




Պուպու




Զանգակ



Բոժոժիկ



Նարգիզ



Մանուշակ

ցողունի՛ն: Ինչպե՞ս շուշանը նազանքով շարժում էր կամաց իր քնքուշ ճերմակ գլուխը:

Ի՛նչ յեռանդով պարում էյին բոլորը:

Կապույտիկ պատատուկը թփերի ու վոստերի վրա յեր մազլցել, վոր ավելի լավ տեսնի: Մինչ ցածում տեսակ-տեսակ խոտերն ու սեղերն ուրախությունից ծափ էյին տալիս:

3

Հանկարծ կտրվեց ծղրիղի նվազը, քամին հոգնած՝ թողեց ու քաշվեց, ու պարերը դադարեցին:

Յե՛վ հնչեց սոխակի՛ քաղցր ու աննման յերգը: Յերգում էր ու գովում դարնան գովքը, սարերի թարմությունը, ծառ ու ծաղկի գեղեցկությունը:

Ծաղիկները հափշտակված ականջ էյին դնում անշարժ, անշունչ: Ականջ էր դնում ամբողջ անտառը կարծես քարացած:

Ահա լուսինը մտավ ամպերի յետևն ու ծածկվեց. մութը պատեց մարդագետինը: Բոլոր ծաղիկները կա-

խեցին իրենց ծանրացած գլուխները, փակեցին իրենց հոգնած աչիկներն ու քուն մտան:

Անտառի խորքից լսվում է միայն սոխակի մեղմ ու քնքուշ յերգը. կարծես անուշ որոր է ասում...

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Լանջ — կուրծք:
2. Յեզբբ — ափ:
3. Յեղիմջ — բանջար (ծակող):
4. Լուսատիկ — մթնում լույս տվող փոքրիկ միջատ:
5. Պչբանֆով — նազ անելով, զարդարվելով:
6. Հափշտակվել — տարվել, գրավվել:
7. Փարքաւ — ճոխ, առատ:

ՀԱՐՅԵՐ

1. Ինչո՞ւ այս հոգվածի վերնագիրն է «Ծաղիկների յերեկոյթ»:

2. Բացի ծաղիկներից ել ո՞վ եր մտնակում «յերեկոյթին»:

1. Արտագրեցեք ծաղիկների անուններն իրենց հատկանիշները ցույց տվող բառերի հետ միասին:

63. Ա Ր Ե Վ Ի Խ Ա Վ Ա Ր Ո Ւ Մ Ը

1

Աշխարհագրության դասը շատ հետաքրքիր անցավ. մթնացրած դասարանում յերեխաները պարզ կերպով տեսան յերկրի պտույտն արևի շուրջը և լուսնի պտույտը՝ յերկրի շուրջը: Վոչ միայն դասատուն, այլ և իրենք յերեխաները կարողանում էին գործիքը (տելուրի) պտտացնել այնպես, վոր մեկ արևի խավարումն էին ստանում, մեկ՝ լուսնի.

— Ուրեմն յերեխաներ, դուք տեսնում եք, վոր

այս բոլորը կատարվում է բնական—ֆիզիքական ու բնքների հիման վրա, վոր արևի կամ լուսնի խավարումները ճիշտ այնպիսի յերեկոյթներ են ինչպես արինակ բուքը, յերկրաչարժը, հեղեղը և այլն:

— Իսկ ինչո՞ւ մարդիկ զանազան պատմություններ են հնաբել այդ խավարումների մասին, իբր թե... — ուզում եր շարունակել Արմիկը, բայց մյուսները վրա բերին.

— Վիշապն է կուլ տալիս արևին.

— Ձուկը կամ թռչունն է դողացել.

— Արևի խավարման ժամանակ սնահավատ մարդիկ սուգ էին անում, պղնձյա ու թիթեղյա ամանները դուրս էին ածում, աղմկում, գոռում, վոր իբր թե չար ուժերին փախցնեն և աբեին ազատեն:

— Իսկ ինչ ցույց տվեց 1936 թ. հունիսի 19-ի տեղի ունեցած խավարումը, — հարցրեց ընկ. Յուլիկը:

— Մենք առաջուց գիտեցինք այդ մասին. որացուցում կարդացինք, — ասաց Հայկազը:

— Իսկ յես «Պիոներ-կանչ»-ում էյի կարդացել, — վրա բերեց սահավախոս Ձոնիկը:

— Այդպես, ուրեմն վերջացնենք. պատրաստվենք արևի խավարումը գիտելու, — դասը վերջացրեց ընկեր Յուլիկը:

Ձանգը տրվեց. աշակերտները ցրվեցին:

2

Արևի խավարման նախորդ որը յերեխաները չուտ քնեցին. նրանք վաղ առավոտ պետք է հավաքվեին Պուշկինյան պուրակը, վորտեղից բարձրանալու էին մոտակա բլուրը՝ գիտելու արևի խավարումը:

Ընկեր Յուլիկը հանձնարարել եր ապակիներ մրոտել, թե չե՝ «սովորական աչքով նայելը շատ վտանգավոր է, կարող է տեսողությունը փչանալ»:

Ինքն ընկեր Յուլիկն իր հետը բերել եր կինո-ժա-

պավենների կտորները արևի խափարումը դիտելու համար:

Յերեխաները հավաքվեցին. վոմանք շատ շուտ ելին յեկել. վախեցել ելին, վոր քնով ընկնեն և այդ հաղվաղյուտ յերևույթը դիտելու հնարավորությունից զրկվեն:

— Տառս չեր թողնում, — ասում եր՝ դուք ի՞նչ եք, վոր եղպիսի հարցերով եք զբաղվում, — պատմում եր Սուրբիկը:

— Իսկ մեր հարևանուհին՝ տերտերակինը մեզ անիծում եր, ասելով, թե՝ մեղք ենք գործում, աստված մեզ կպատժի, — իրար ընդհատելով պատմում ելին Գաբրիկն ու Չարիկը:

— Մնում ե 10 րոպե, մինչև խավարումը, չարժեքներ, — լավեց ընկեր Յուլալի հրամանը և յերեխաներն սկսեցին բլուրը բարձրանալ:

3

Յերկինքն ամպամած եր. սակայն առավոտվանից փչում եր քամին, վոր կամաց-կամաց ցրեց ամպերը: Արեւելքը շառագունել եր և կարմրավուն հորիզոնից դուրս յեկավ արևի վոսկե սկավառակը:

— Մնում ե 3 րոպե, — ձայն տվեց ընկեր Յուլալը, կանգնեցեք մի գծի վրա. պատրաստեցեք մրոտած ապակիները, իսկ միաժամանակ վերցրեք և այս ժապավենները: Մի աչքը փակ մյուսով պետք ե դիտել արևը:

Յերեխաներն սպասում ելին լուռ ու հանգիստ:

Հանկարծ... կարծես թե մթնում ե. բայց ամպեր չկան: Յերեխաները նկատեցին վոր արևի սկավառակի ծայրին ինչ վոր ստվեր յերևաց. ահա այդ ստվերը մեծանում ե, կլոր գծով կտրում ե արևի սկավառակը. հետզհետե արեւի վրա յե գալիս և մթնում ու տվելի մթնում. կարծես յերեկո յե:

Յերեխաները շունչները պահած դիտում ելին:

Հետո հակառակը նկատեցին. ահա ստվերը հեռանում ե արևից, հետզհետե պարզվում ե, քիչ հետս լրիվ յերևում արևի ջինջ սկավառակը:

— Վա՛յ, վերջացավ, ինչքան հետաքրքիր եր, — ձայն տվեց Ամալիան:

— Ափսոս, շուտ անցավ, — ասում ելին մյուսները:

— Իհարկ ե. չե՞ վոր մենք դիտելինք վոր կարճ ե տևելու: Այժմ զնացեք տուն, հանգստացեք և նախաճաշելուց հետո կէաք դպրոց պարապմունքի:

Պատանի եքսկուրսանտների խումբն ուրախ ու դուհ ցած շարժվեց բլրից:

64. ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԸ ԳԱՌՆԱՐԱԾ

1

Այս գարում Մսրա անհաղթ ու հզոր

Մսրա Մելիքն եր նստած թագավոր:

Հենց վոր իմացավ ել Մհեր չկա,

Վեր կացավ կովով Սասունի վրա:

Ձենով Ոհանը ահից սարսափած՝

Թշնամու առաջն յելավ գլխաբաց,

Աղաչանք արավ, ընկավ վոտները:

— Դու յեղիր, ասավ, մեր գլխի տերը,

Ու քո շվաքում քանի վոր մենք կանք,

Քո ծառան լինենք, քո խարջը միշտ տանք,

Միայն մեր յերկիր քար ու քանդ չանես

Ու քաղցր աչքով մեզ մտիկ անես:

— Ձե՛, ասավ Մելիք, քո ամբողջ ազգով

Անց պիտի կենաս իմ թրի տակով,

Վոր եզուց—ելոր, ինչ ել վոր անեմ,


Վոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ:

Ու զնաց Ոհան՝ բոլոր բովանդակ

Սասունը բերալ, քաշեց թրի տակ.
 Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
 Մոտ չեկավ դուշման Մելիքի թրին:
 Յեկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
 Թափ տվավ մարդկանց զցեց զես ու գեն:
 Փոքրիկ ճկույթը մի քարի առաւ,
 Ապառաժ քարից կրակ դուրս թռավ:
 — Պետք է սպանեմ ես փոքրիկ ծուռին,
 Ասավ թագավորն իրեն մեծերին:
 — Թագավո՛ր, ասին, դու եսքան հզոր,
 Թրիդ տակին է մողջ Սասունն աշտոր,
 Ի՞նչ պետք է անի քեզ մի յերեսա,
 Թեկուզ իր տեղով հենց կրակ դառնա:
 — Դո՛ւք գիտեք, ասավ Մսրա թագավոր,
 Բայց թե իմ գլխին փորձանք զա մի ո՛ր,
 Ես որը վկա,
 Մբանից կգա:

2

Ես վոր պատահեց, մեր Դավիթ հսկան
 Մի մանուկ եր գեռ յոթ-ութ տարեկան.
 Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
 Վոր նրա համար թե մարդ, — թե մժեղ:
 Բայց վա՛յ խեղճ վորբին աշխարքի վրա,
 Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:
 Ձենով Ոհանին ուներ մի հար կին:
 Մին-յերկու լռեց, մի ո՛ր ել կարգին
 Իրեն մարդու հետ սկսավ կովել.
 — Յե՛ս մենակ հոգի, հազար ցավի տեր,
 Ի՛նչ ես ուրիշի վորբին տուն բերել,
 Նստեցրել գլխիս պարապ հացակեր...
 Հո՛ղեմ գլուխը... յես գերի հո չե՞մ՝
 Ամենքի քեֆի յետեից թռչեմ...
 Մի կուռ կորցրո՛ւ, կարգի՛ր մի բանի,



Գնա իր համար աշխատանք անի...
 Ու հետն սկսավ վողբալ ու կոծել,
 Իր ուրը սգալ, իր բախտն անիծել,
 Թե անբախտ յեղավ աշխարքի միջում,
 Վոչ մի տեր ունի, վոչ մարդն է խղճում...
 Գնաց Ոհանը յերեսի վոտի
 Մի գույգ վոտնաման բերավ յերկաթի,
 Յերկաթի մի կոռ շալակին դրած,
 Ու արավ Սասմա քաղքի գառնարած:

Բնեց գառները մեր հովիվ հսկան,
Յեւով Սասունի սարերն աննման.

« Ե՛յ ջան, սարեր,
Սասմա սարեր... »

Վոր կանչեց, նրա ձենից ահալոր
Դորդ — դմբդմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գաղաններ բներից փախան,
Քարեքար ընկան, դադարկուն յեղան:
Դավիթն ընկավ նրանց յետեից,
Վորին մի սարից, վորին մի ձորից —
Աղվես, նապաստակ, գել, յեղնիկ բռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան՝ քչեց վողջ Սասմա քաղաք:
Կաղկանձ ու վոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Քաղքցիք հանկարծ մին ել են տեսան՝
Գալիս են հրես անհամար գաղան.

« Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք... »

Մեծեր, յերեսեր

Սրտաճաք յեղած,

Գործերը թողած,

Վորը տուն ընկավ, վորը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՛հ, ես մարդիկը ի՛նչ վաղ են քնում.
Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր,
Յեւե՛ք, չուտով բացեք դռներ.
Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քսան արել...
Շուտով յեւե՛ք, յեկե՛ք, տարա՛ք,
Ձեր գառն ու ուլ դոմերն արեք:
Տեսավ՝ չեն դալի, դուռ չեն բաց անում,
Ինքն ել մեկնվեց քաղքի մեյդանում,
Գլուխը դրավ մի քարի մնաց

Ու մուշ-մուշ քնեց մինչև լուսաբաց:
Լուսին՝ իշխաններ յեւան միասին,
Գնացին Ձենով Ոհանին, — ասին.
— Տո՛ Ձենով Ոհան, տո՛ մահի տաքած,
Ես խենթը բերիր, արիր գառնարած,
Վոչ գառն ե ջոկում, վոչ գելն ու աղվես,
Գաղանով լցրեց մեր քաղաքն էսպես.
Հողիդ կսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չե ես խալիսին լեղաճաք կանի:

ՔԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Խարջ — հարկ:
2. Ելոր — մյուս որը:
3. Դուշման — թշնամի:
4. Կորյուն — գաղանների ձագ (առյուծի):
5. Ծուռ — խենթ, խելառ:
6. Կոծել — լաց լինել:
7. Կռ — մահալ:
8. Գաղաթկուն լինել — անտուն—անտեղ մնալ:
9. Կաղկանձ — գաղանի ձայն:
10. Մեյդան — հրապարակ:
11. Մեկնվել — տանել, ձգվել:
12. Կռ — կողմ:

65. ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ՎՐԱ

Յերեկո յեր. արևը մայր եր մտնում, իր թեք ճա-
ռագայթները ցրելով յերկրի վրա: Գյուղը մթնում
եր: Շուտով վառվեցին լապտերները փողոցում:

Վիտյան բակը դուրս յեկավ, նայեց չուրջը: Ա-
քաղաղը սանդուխքի վրա թռավ և ցատկեց մարագը,
նրան հետևեցին հավերը:

Հանկարծ վախեցած հավերը դուրս թռան և աղ-
մուկով ցրվեցին բակի այս ու այն կողմը:

— Սա ինչ բան է, — դարձացավ Վիտյան: — Տեսնես՝ ինչից վախեցան. չլինի մեկը մտել է ներս: Նա բարձրացավ չարդախը: Մթուժյան մեջ նա հիշեց, վոր մոտը լուցկի կա. բայց չվառեց. վտանգավոր եր. չարդախում խոտ եր դիզված:

— Եյ, ո՞վ կա այդտեղ, — կանչեց նա:

Պատասխան չկար. «Սա ինչ բան է. վոչ վոք չկա. ապա ինչու հավերն անհանգիստ են»:

Վիտյան կանգ առավ. մթուժյան մեջ դժվար եր առաջ շարժվել: Վերջապես վորոշեց վառել լուցկին. վառել ու իսկույն հանդցնել: Լուցկու լույսի տակ տեսավ անկյունում կծկված մի մարդու:

— Ո՞վ է այդտեղ, — ձայն տվեց ու ցատկեց մի կողմ:

— Յես... ձերոնցից եմ... — պատասխանեց մարդն, աշխատելով հանգիստ յերևալ. — դյուղխորհրդի նախագահն ինձ թույլ տվեց... կգիշերեմ այստեղ և վաղ լուսաբացին կհեռանամ...

«Սուտ է ասում» — անցավ Վիտյայի մտքով, բայց ասաց վստահ ձայնով.

— Դե վոր նախագահը թույլ է տվել, պառկեցեք...

Մարդը յերեւի հասկացավ, վոր Վիտյան խորամանկություն է անում: Նա ցատկեց իր տեղից, ինքը վառեց լուցկի: Ժպիտը դեմքին, նայում եր տղային:

— Կուզես — կզնամ իսկույն... Կուզես կմնամ և փող կվճարեմ գիշերելու համար: Գրքեր կզնես, ֆուտբոլի գնդակ կառնես: Ահա, բայց տես՝ մարդու բան չասես. նա հանեց գրպանից փողի մի մեծ կապոց:

— Ինչիս են պետք քո փողերը, — պատասխանեց Վիտյան:

Անձանոթը քաշվեց: Աչքերը կկոցեց ու աշխատեց խղճալի թվալ:

— Առ, վորդիս, — ասաց նա լացակումած ձայ-

նով, — խղճա ինձ, — ասում եր ու փողը դեմ անում Վիտյային:

Յերբ Վիտյան նորից վառեց լուցկին, տեսավ, վոր անձանոթը բռնել է խոտի յեղանն ու իրեն է նայում: Վիտյան իսկույն հանդցրեց լուցկին ու ցատկեց մի կողմ: Յեղանը խրվեց պատի մեջ ալնտեղ, ուր մի քիչ տռաջ կանգնել եր Վիտյան:

Վիտյան աննկատելի կերպով դուրս վազեց ու ընկավ հարևանի, կոլտնտեսական Նիկիտի տունը:

— Քեռի Նիկիտ, մեզ մոտ չարդախում ինչ վոր մի անձանոթ մարդ է պահվել: Դու մի դնա՝ տես, իսկ յես վազեմ — նախագահին հայտնելու:

Հարևանը մի մեծ մահակ վերցրեց ու սկսեց հըսկել չարդախի մուտքը:

Մի քանի րոպե անց յեկան սահմանապահները. Վիտյան նրանց առաջնորդեց դեպի իրենց չարդախը: Լապտերի ուժեղ լույսի տակ սահմանապահները տեսան սև շորերով մի մարդու, վոր թագնվել եր խոտերի մեջ: Նրա աչքերը շարժվում էին անհանգիստ, ատելությամբ լի:

— Ձեռներդ վե՛ր, — հրամայեց սահմանապահ պահակախմբի պետը: — Դո՛ւրս արի:

Անձանոթը դուրս յեկավ: Նրան տարան պահակատուն: Պարզվեց, վոր նա հայտնի լրտես եր:

Անձնազոհության և համարձակության համար Վիտյային չնորհակալություն հայտնեցին և պարզեատրեցին արժեքավոր նվերներով:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զարգալս — տանիք:

2. Լացակումած — լաց լինելու պատրաստ:

3. Անձնազոհություն — իր անձը դնելը:

Այնքա՛ն ծաղիկ, այնքա՛ն բույր,
 Այնքա՛ն առվակ ու աղբյուր,
 Այնքա՛ն գետակ քչքչան՝

— Զա՛ն Ծաղկածո՛ր.

Զա՛ն, Զա՛ն, Զա՛ն...

Ծաղկածորում ծաղկախաղ,
 Թմբուկ, նվազ, յերգ ու տաղ,
 Զով իբրեկուն, թեթ խարույկ,
 Հոգով—մարմնով մենք առույգ,
 Ծաղկի նման հոտավետ,
 Թիթեռի պես հովի հետ,
 Գետակի պես կարկաչուն
 Յե՛վ յերգում ենք, և՛ աճում:

Այնքա՛ն ծաղիկ, այնքա՛ն բույր,
 Այնքա՛ն առվակ ու աղբյուր,
 Այնքա՛ն գետակ քչքչան՝
 — Զա՛ն Ծաղկածո՛ր.
 Զա՛ն, Զա՛ն, Զա՛ն...

ԲԱՌԵՐԻ ԲՍՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բույր — անուշահոտութուն:
2. Առույգ — զվարթ, ուրախ,

1

Մի ծերուկ ձկնորս և իր պառավ կին
 Բնակվում էին մեծ ծովի ափին.
 Ծերը գնում էր, ձուկ բռնում ծովից,
 Պառավն ևլ տանը թել մանում բրդից.
 Այսպես միասին՝ մի հին գետնատան

Յերեսուներեք տարի ապրեցան:

Ահա մեկ որ ել ծերը գնաց ծով,
 Վոր ձուկը վորսա իր մաշված ցանցով:
 Նա ուրախ—ուրախ ցանցը ծով ձգեց,
 Առաջին անգամ միայն տիղմ հանեց.
 Յերկրորդ անգամը ցանցը ձգեց ծով—
 Յանցը դուրս յեկավ ծովային խոտով.
 Իսկ յերրորդ անգամ, վոր ցանցը ձգեց,
 Ո՛վ կարի ասել, թե ի՛նչ դուրս հանեց.
 Նա բերավ իր հետ մի վոսկի ձկնիկ,
 Զկանց արքայի դուստրը գեղեցիկ.
 Ծերի ցանցն ընկավ իբրև խեղճ գերի
 Վոսկի աղջիկը ձուկ — թագավորի:
 Խե՛ղճ վոսկի ձկնիկ, ի՞նչպես ե խնդրում,
 Մարդկային լեզվով ծերին աղաչում.
 «Թո՛ղ ինձ, թո՛ղ, ծերո՛ւկ, թո՛ղ ինձ անվտանգ,
 Գեղ կվճարեմ թանկագին փրկանք.
 Ինչ սիրտդ ուզե, ինչ վոր կամենաս՝
 Ուղիղ եմ ասում, ինձնից կստանաս»:
 Վախեցավ ծերը, մնաց դարմացած.
 Նա այնքան տարի ձկնորս եր յեղած,
 Բայց ձկան մասին յերբեք չեր լսել,
 Թե նա մարդու պես կարող ե խոսել:
 «Գնա՛, ապրիր դու,— ասաց ծերունին,—
 Ինձ չի հաբկավոր փրկանք թանկագին.
 Գնա՛, քեզ համար դու ծիրանի ծով
 Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»:

2

Այս ղեպից հետո ծերը տուն դարձավ,
 Պատմեց պառավին, թե ինչ բան տեսավ.
 «Այսոր յես ծովից, գիտե՞ս ինչ, ա՛՛ կնիկ,
 Բռնեցի հանկարծ մի վոսկի ձկնիկ.
 Վոսկի յեմ ասում, և վոչ քո գիտցած.

Այսպիսի հրաշք վոչ վոք չի տեսած:
Նա խոսել գիտեր ուղիղ մեր լեզվով
Աղաչանք արավ, վոր յետ ձգեմ ծով».
«Թո՛ղ— ասաց, խնդրեմ, թո՛ղ ինձ անվտանգ,
Քեզ կվճարեմ թանկագին փրկանք»:
Բայց յես վոչ մի բան չպահանջեցի,
«Վոչինչ չեմ ուզում, գնա՛, — ասացի.
Գնա՛ քեզ համար դու ծիրանի ծով
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...

Պառավը յերբ վոր այս բանը լսեց՝
Խեղճ ալեորին շատ հանդիմանեց,
Թե ինչո՛ւ ձկնից փրկանք չի ուզել,
Ու այնպես ձրի յետ ծովն ե ձգել:
«Ա՛յ հիմար, անմիտ, — հայհոյեց ծերին, —
Գոնե կասեյիր դու վոսկի ձկնին.
«Մի նոր տաշտակ տուր, տանեմ իմ կնկան,
Մերը կոտրած ե, ել չե պետքական»...

Դարձավ ծերունին, ծովի ափ գնաց,
(Տեսավ նա ծովը մեղմիկ ծածանված).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», — հարցրեց:
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինիս, թագուհի ձկնիկ,
Ինձ նախատում ե իմ պառավ կնիկ,
Հանգիստ չի թողնում խեղճ ալեորիս,
Վրաս մրթմրթում, ուշուց ե տալիս.
Մի նոր տաշտակ ե հարկավոր իրան,
Մերը կոտրած ե, ել չե պետքական»...

Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա՛ համարձակ, մի տխրիր, — ասաց, —
Թող քո պառավը շատ չնեղանա.
Այսոր նա մի նոր տաշտակ կունենա»...

Յետ դարձավ ծերը դեպի իր տնակ,
Տեսավ կնկա մոտ մի սիրուն տաշտակ.
Բայց կինը դո՛հ չեր. նա այս անգամ ել
Սկսեց ծերին սաստիկ նախատել.
«Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
Ինչո՞ւ մի ուրիշ բան չխնդրեցիր,
Յետ գնա շուտով անմիտ, անասուն,
Գլուխ տուր նրան և ուզիր մի տուն»...
Ծերունին դարձավ, ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսավ ծովը պղտորված).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին.
Ձուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ», — հարցրեց:
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինիս, թագուհի ձկնիկ,
Ինձ շատ նախատեց իմ պառավ կնիկ.
Խեղճ ալեվորիս հանգիստ չի թողնում,
Հիմա ել կատղել, մեկ տուն ե ուզում»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա՛ համարձակ, մի տխրիր, — ասաց. —
Թող լինի այնպես՝ ինչպես կամենաք.
Դուք ձեր ցանկացած տունն ել կունենաք»...

Ծերը յետ դարձավ կրկին դեպի տուն.
Ել նա չգտավ իր հին գետնատուն.
Մի նոր տուն տեսավ լուսամուտներով,
Կտուրից հանած ծխահաններով,
Պատ ու վառարան մաքուր սվաղած,
Կրով ու կավճով սպիտակացրած,
Վարպետի տաշած կաղնի տախտակից՝
Մեծ դուռն եր կախած լայն բակի կողմից:
Պատուհանի տակ կինն ուռած նստել,
Իր չարությունից ուզում ե տրաքել.
Ի՛նչ անե՞ք ասես աշխարհքիս տակին՝



Բոլորն ել թափեց խեղճ մարդի գլխին.
Վերջը, յերբ փոքր ինչ բարկությունն իջավ՝
Մռութը կախած ծերունուն դարձավ.

«Անշնորհք ծերուկ, տնա՞կ ուզեցիր,
Յերևի քո մեջ մե՛ծ բան կա՞ծեցիր,
Յե՛տ դարձիր, անխելք, յե՛տ դարձիր, գնա՛,
Վոսկի ձկնիկին իմ կողմից ասա՛,
Վոր ել չեմ ուզում մնալ գեղջուկ կին,
Ուզում եմ լինել գերազնիվ տիկին»...

4

Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.

(Այս անգամ տեսավ ծովը վրդովված).

Սկսեց կանչել վոսկի ձկնիկին.

Ձուկը լողալով մոտեցավ ծերին.

«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ», — հարցրեց:

Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.

«Վողորմա՛ծ լինիս, թաղուհի ձկնիկ,

Հանգիստ չի տալիս ինձ իմ չաբ կնիկ,

Ել չի կամենում մնալ գեղջուկ կին,

Ուզում ե լինել գերազնիվ տիկին.

Ձգիտեմ, գլուխն ի՞նչ քամի մտավ,

Վոր գեղջկությունից հանկարծ ձանձրացավ»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց,
« Գնա՛, դու հանգիստ, մի՛ տխրիր, — ասաց. —
Թող քո պառավը հենց այսօրվանից
Ազատ համարվի իր գեղջկությունից»...
Յետ դարձավ ծերը, և ի՞նչ ե տեսնում.
(Կարծես ցնորք ե աչքին յերևում).
Մի տուն հոյակապ, վերնասրահում
Պառավն ե կանգնած ինչպես նոր խանում.
Հագին սամուրե բաճկոնակ սիրուն,
Դիլին դիպակե չարդաթ գույնգգույն,
Վիզը զարդարած մարգարիտներով,
Մատերին մատնիք անգին քարերով.
Մաշիկներն՝ ինչպես կառ-կարմիր վոլդան,
Մյուս հագուստներն ել մետաքս պատվական.
Ծառաներ ունի մի քանի տասնյակ,
Բոլորն ել իրեն հլու հպատակ:
Մարդուն վոր տեսավ, պառավը կատղեց,
Խեղճ ծառաներին ծեծել սկսեց.
(Յերևի ուզեց ցույց տալ ծերուկին,
Վոր հիմա ինքն ե գերազնիվ տիկին):
Հայհոյանք թափեց ամենքի վրա,
Տեղի-անտեղի քոթկեց անխնա,
Մեկի մազերից բռնեց, քաշքշեց,
Մյուսին՝ մի լավ ապտակներ զարկեց:
Ծերը մոտեցավ դողդող քայլերով,
Ասաց պառավին՝ խոր գլուխ տալով.
« Բարո՛ւ գերազնիվ խանում-խաթունիս,
Հիմա խոմ գո՞հ ես, հանգիստ կլինիս»...
Պառավ տիկինը այնպես բղավեց,
Վոր խեղճ ծերունու լեղին պատովեց.
Նրան հրամայեց, վոր իսկույն գնա,
Գոմն ավլե, քերե ու այնտեղ մնա:

Մեկ յերկու շաբաթ հազիվ անց կացավ՝
Պառավ խանումը նորից կատղեցավ.
«Շուտ կանես, կերթաս,— ասում է մարդին,—
Ու իմ կողմանե կասես ձկնիկին,
Վոր ել չեմ ուզում տիկնություն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...

Այս խոսքի վրա ծերունին սոսկաց
Յեվ աղաչելով պառավին ասաց.
«Գո՛վե՞լ ես, ա՛ կնիկ, յես չեմ հասկանում,
Արդ՞յոք դու գիտե՞ս, ինչ ես ցանկանում.
Մեկ նայի՛ր վրադ, չենք ու չնորքիդ,
Լբլբան լեզվիդ, ծուռ ու մուռ քայլքիդ.
Ախր ի՞նչ ունիս թագուհու վայել,
Վոր խելքիդ այդպես քամի յե փչել.
Արի, լսիր ինձ, մի՛ անիր այդպես,
Ամբողջ աշխարհին կծիծաղացնես»...

Ել չհամբերեց մեր պառավ տատը,
Վոր վերջացներ մարդն իբ խրատը.
Նա այնպես դռաց, այնպես վորոտաց,
Վոր ամբողջ տունը հիմնովին թնդաց.
«Ինչպե՞ս թե այդպե՞ս, հանդուգն ըստահակ»,—
Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ.—

«Համարձակվո՞ւմ ես, գռեհի՛կ անդետ,
Վիճել ինձ նման ազնիվ տիկնոջ հետ.
Քեզ հրամայում եմ պատվավոր խոսքով,
Վոր իսկույն գնաս քո հոժար կամքով,
Յեթե վո՛չ՝ ահա ժողովված կշտիդ՝
Սրանք կտանեն խփելով վզիդ»:

Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց,
(Այս անգամ տեսավ ծովը սևացած).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին.

Ձուկը լողալով մոտեցավ ծերին.

«Ի՞նչ ես կամենում, ծերո՞ւկ»,— հարցրեց:

Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.

«Վողորմած լինիս, թագուհի ձկնիկ,
Ելի յե կռվում իմ պառավ կնիկ.
Ների՛ր ինձ, խնդրեմ՝ յես ամաչում եմ,
Վոր չար պառավիս նոր ուզածն ասեմ,
Բայց վո՞ր ջուրն ընկնեմ, հանգիստ չի թողնում:
Կրակն է գցել, այրում. խորովում.
«Գնա՛, — ասում է, — ա՛խ, նզովյա՛լ կին—
Շո՛ւտ գնա, ասա՛, վոսկի ձկնիկին,
Վոր ել չեմ ուզում տիկնություն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.

«Գնա՛, դու հանգիստ, մի՛ տխրիր,— ասաց.—
Թող քո պառավի ուղածը լինի,
Թող գնա դառնա ազատ թագուհի»:

Ո՞վ կարե պատմել, թե ծերն ինչ տեսավ,
Յերբ ձկան մոտից տուն վերադարձավ.
Ել ի՞նչ տուն, ի՞նչ բան. դու արքայական
Ապարանք ասա, կամ հսկայական
Մեծ—մեծ պալատներ շարիշար կանգնած,
Բարձր բուրգերով չորս կողմը պատած.
Շքեղ դահլիճներ, անթիվ սենյակներ,
Մարդ կշշկվեր, յեթե մեջն ընկներ:
Ծերը բարձրացավ մարմար սանդուխքով,
Մի դահլիճ մտավ խիստ պատկառանքով.
Առջևը բացվեց մի նոր տեսարան,
Յերբ այդտեղ գտավ իր պառավ կնիկան.—
Նա հիմա ազատ թագուհի դառած՝
Առոք ու փառոք ճաշի յե նստած.
Մեծ—մեծ իշխաններ, խաներ ու բեգեր
Վտաքի յեն կանգնած վորպես ծառաներ,
Թագուհու համար գինի յեն ածում

Յեւ մ'ա՛հ ու գողով աչք-ունքին նայում:
Շեմքում կանգնել են ահեղ զինվորներ,
Ուսերին բռնած կացնաճև սրեր
Մենակ պառավին եր սեղանին բաղմել:
Ո՞վ կհանդգներ նրա հետ նստել:
Բայց կերակուրներն այնքան շատ եյին,
Վոր հարյուր հոգի կկշտացնեյին:

Յեւ քանի տեսակ անծանոթ բաներ,
Ի՛նչ անուշեղեն, ի՛նչ տապալաններ...
Պառավն ուտում եր մեծ ախորժակով
Ու գինին դարտկում լիքը բաժակով:
Վերջն ել մեղրահաց կերավ բավական,
Վոր քաղցրացնե չրթունք ու բերան:

Ծերն այս տեսնելով՝ մնաց չփոթված,
Ընկավ պառավի վոտքերն ու ասաց:
«Բարո՞ւ վ քեզ, բարո՞ւ վ, ահեղ թագուհի,
Քո մեծությունը հավիտյան լինի»:
Այս խոսքից հետո կամաց չչնջաց
Ու փափախով պառավին հարցրեց:
«Հիմա վոր բախտի վերին ծայրումն ես,
Խո՞ւ բավակա՞ն ես, ա՛յ կնիկ, ի՞նչ կասես»...

Թագուհի դառած պառավն այս անգամ
Մարդի յերեսին չնայեց անգամ:
Հրաման մրմռաց նա քթի տակին,
Վոր դուրս վռնդեն մեր անկոչ հյուրին:
Հենց վոր լավեցավ թագուհու հրաման՝
Հնազանդ յերևալ ամենքն ուղեցան:
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բեգեր,
Ինչպես վորսորդի արնախում չներ,
Խփելով ծերի շընքակոթին
Շքեղ դահլիճից դուրս վռնդեցին:
Շեմքումը կանգնած պահապաններն ել
Գիշատիչ ճանկերն եյին պատրաստել:
Վրա վաղեցին ամենքը մեկեն
Ու քիչ մնաց, վոր խեղճին պլոկեն:

Ինչպես վոր յեղավ՝ մի կերպ դուրս պրծավ,
Դուրսն ել ամբոխի ծաղրի տակն ընկավ,
Վոր կարծես նրան լինե՛ր սպասում,
Անձրևի տակին, ցեխոտ փողոցում:
«Ա՛յ թե լավ արին, ծերո՛ւկ դու անգետ,
Ո՞ւմ հետ ես մեկնում անճոռնի վոտներդ:
Թող այդ քեզ համար լինի լավ խրատ,
Վոր ել չցանես մանր կտավհատ»...

7

Այս դեպքից հետո շատ որեր չանցան,
Պառավի այծերն ելի մոտ յեկան:
Ուղարկում ե նա իր իշխաններին,
Վոր գտնեն, բերեն արտաքսված ծերին:
Յեկավ ծերունին: Պառավն սկսեց:
«Դու պետք ե գնաս ձկան մոտ, — ասեց. —
Կերթաս, խոր գլուխ կտաս դու նրան,
Ու իմ փափագս կհայտնես իրան:
Կասես՝ չեմ ուզում մնալ թագուհի,
Ուզում եմ լինել ծովի տիրուհի,
Ուզում եմ Ուկիան ծովումը կենալ,
Վոսկի ձկնիկին ծառա ունենալ,
Վոր իմ հրամանին միշտ պատրաստ լինի
Ու ինչ ուղենամ՝ իսկույն կատարի»...

Պառավին լսեց ծերը լուռ ու մունջ,
Առանց հայանելու վորևէ տրտունջ:
Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց,
(Այս անգամ ծովը խիստ եր փոթորկված,
Փրփրած ալիքներ սարեր դառնալով՝
Իրար են զարկվում ահեղ գոռալով):
Վողբաձայն կանչեց վոսկի ձկնիկին:
Ձուկը լողալով մոտեցավ ծերին:
«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ», — հարցրեց:
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց:

«Վողորմա՛ծ լինիս, թագուհի ձկնիկ,
 Իսպառ գծվել ե իմ պառավ կնիկ.
 Ի՞նչ անեմ արդյոք այդ նզովյալին,
 Մինչև յե՞րբ տանջվեմ պառավի ձեռքին.
 Ել չի կամենում թագուհի լինել,
 Այլ տե՛ս, անիծածն ի՛նչ միտք ե արել,—
 Իչխել ե ուզում բոլոր ջրերին
 Ու իշխանուհի դառնալ ծովերին.
 Ուզում ե Ովկիան ծովումը կենալ,
 Վոսկի ձկանդ ծառա ունենալ,
 Վոր իբ հրամանին միշտ պատրաստ կենաս,
 Ու ինչ ուզենա՝ շուտ կատարում տաս»...
 Վոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,
 Բայց ել ծերունուն չպատասխանեց.
 Ջրի յերեսին չրմփաց պոչով
 Ու անցավ—զնաց դեպի խորին ծով...
 Շատ մնաց ծերը և շատ նայեցավ,
 Բայց վոսկի ձկնիկն ել չերևեցավ.
 Դարձավ գլխակոր, վոր հայտնե կնկան,
 Թե ի՛նչ փորձանքի մեջ գցեց իրան...
 Յեվ զնաց, տեսավ... բայց ի՞նչ տեսնի լամ,
 Վոր արդար լինի և վոչ անիրավ.
 Հին խուզի շեմքում պառավը նստած,
 Կոտրած տաշտակն ել առջևն ընկած...

ՔԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ


1. Ցանց — ուռկան, ձուկ բռնելու գործիք:
2. Տիղմ — ցեխ:
3. Դաւառ — աղջիկ:
4. Փրկանք — գերուն ազատելու վճար:
5. Ծածանվել — շարժվել, մեղմ որորվել:
6. Ալվոք — ծերունի:
7. Մոռաքը կախել — նեղանալ:
8. Գերազնիվ — աղնվական:
9. Սամուր — թանկագին մորթի:

10. Բանկոնակ — վերնաշոր:
11. Դիպակ — թանկագին կտոր:
12. Մաշիկ — տնային թեթև կոշիկ (չուստ):
13. Կարմիր վորդան — կարճիկ (ներկատու միջատ):
14. Վայել — արժանի:
15. Ստահակ — անամոթ, համարձակ:
16. Անգետ — տղետ:
17. Արքայական — թագավորական:
18. Ապարանք — պալատ:
19. Բուրգ — աշտարակ:
20. Տապակա — տապակած ուտելիք:
21. Շլնֆակոք — վզակոթ, ծոծրակ:
22. Այծերն յեկան — բարկացավ, չարացավ:
23. Փափագ — ցանկություն:
24. Նզովյալ — անիծված:
25. Խուզ — գետնատուն:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ եր պահանջում պառավը ձկնիկից ամեն մի անգամ:
2. Ի՞նչպես եր վարվում պառավը, յերբ՝ ա) գեղջկուհի յեր, բ) գերազնիվ տիկին եր, գ) թագուհի յեր:
3. Ի՞նչպես եր վերաբերվում ծերուկը պառավի պահանջներին:
4. Վոսկի ձկնիկն ինչո՞ւ մերժեց պառավի վերջին խնդիրը:
5. Ինչո՞ւ այդ գրվածքը հեքիաթ ե կոչվում:

1. Հեքիաթը մասերի բաժանեցեք և ամեն մի մասին վերնագիր դրեք:
2. Այս հեքիաթը կարդացեք դերերով (հեղինակ, պառավ, ծերուկ, վոսկի ձկնիկ):
3. Նկարագրեցեք պառավի նիստ ու կացը, տունն ու տեղը, չրջապատողներին՝ տարբեր պայմաններում:
4. Համեմատեցեք ծովի դրությունը պառավի տարբեր պահանջներից հետո:



68. Զ Ո Ր Ս Յ Ե Ղ Ա Ն Ա Կ

Թե դարուն ե նաչ-նախշուն,
Նա ինչե՞ր ե մեզ բաշխում.
— Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,
Ալ ու արվան վարդ շաղոտ:

Թե ամառ ե, չոգ ամառ,
Ի՞նչ ե բերում մեզ համար.
— Յորեն, դարի ու հաճար՝
Շատ հոգսերի դեզ ու ճար:

Թե աշուն ե պտղաբեր,
Ի՞նչ ե բերում մեզ նվեր.
— Նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր,
Դեղձ ու խաղող մեղրածոր:

Թե ձմեռ ե ցրտաշունչ,
Ի՞նչ ե թափում լուռ ու մունջ:
— Փաթիլ, փաթիլ փափուկ ձյուն՝
Արծաթի պես պսպղուն:

ԲԱՌԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Շաղոտ — ցողոտ:

69. Յ Ր Տ Ա Շ Ո Ւ Ն Զ Ս Ա Ռ Ո Ւ Յ Յ

Յերբ հայրիկը ճանապարհ եր ընկնում, Իգայի
գլուխը հաղիվ եր հասնում քարտեզի վրա նկարված
Սառուցյալ ովկիանոսին, իսկ Լյուդայի՝ ձեռքն ել չեր
հասնի... Այդ քարտեզը ցած եր կախված, հենց դռան
մոտ: Գնալուց առաջ հայրիկը կանգնեց քարտեզի ա-
ռաջ: Հայրիկը Լյուդային գրկեց: Նա Լյուդային տա-
րավ քաբտեզի մոտ և մատով ցույց տվեց ծովերն ու
ովկիանոսները:

— Ահա այս ճանապարհով պետք ե լողանք, —
ասաց հայրիկը և համբուրեց Լյուդային:

Հետո նա ամուր գրկեց Իգային և ճամպրուկը
վերցրեց: Լյուդան չուզեց հայրիկին թողնել: Քիթը
կնճռոտեց և չրթունքներն ուռեցրեց:

— Նայեցե՛ք, յերեխանե՛ր, իմ բացակայության
ժամանակ մայրիկին չվշտացնեք: Յես այդ բոլորն իս-
կույն ռազիոյով կիմանամ: Իսկ յեթե լավ լինեք, յես
ձեզ համար ընծաներ կբերեմ:

Լյուդան ուզեց լաց լինել:

— Հայրի՛կ, — ասաց նա, — չե՞՞ վոր այնտեղ սա-
ռույցներ են ու սառույցներ... Հայրի՛կ, գիտե՞ս,
ինձ համար Հյուսիսային բևեռից մի փոքրիկ կտոր
բեր, այ, սառույցի այսքան կտոր:

— Մենք բևեռում չենք լինի... Մենք նրա մոտից
կանցնենք: Բայց բևեռային սառույց անպատճառ կբե-
րեմ:

— Վորի վրա սպիտակ արջի վոտքի հետքը լինի,— ավելացրեց Իգան:

— Արջի հետք լինի,— ասաց Լյուդան:

Հայրիկը գնաց: Նա ճանապարհորդ էր. շրջել էր հյուսիսային բոլոր ծովերն ու յերկրները, լողացել էր սառցահատներով, թռել էր սավառնակով, շատ ձմեռներ ապրել էր սառած կղզիների վրա, բայց այնտեղ յերբեք չէր ձանձրացել: Նա ծանոթ էր վողջ աշխարհին, վորովհետև հռչակավոր ռադիո-հեռագրիչ էր և ռադիոյով բոլոր յերկրների հետ խոսում էր:

Այս անգամ հայրիկը արշավանքի գնաց «Չեկյուսկին» մեծ շոգենավով: Շոգենավը դեկավարում էր հյուսիսային լավագույն նավապետ Վորոնինը: Իսկ ամբողջ արշավախմբի ղեկավարն էր հյուսիսային ծովային մեծ ճանապարհի պետ՝ պրոֆեսոր Շմիդտը:

Յեվ ահա «Չեկյուսկին» շոգենավը լողում էր հեռու, հեռու, ծովից ծով: Յեվ լրագրերում, ամեն ուր տպում էին Իգայի և Լյուդայի հայրիկի հեռագրերը: Ամեն ուր առավոտյան, դպրոց գնալիս, Իգան հարցնում էր մայրիկին. «Վորտե՞ղ ե հայրիկը»:— «Սպիտակ ծովում»,— պատասխանում էր մայրիկը և լրագիրը բարձրաձայն կարդում: Յերբեմն էլ հայրիկը ռադիոյով Իգային և Լյուդային բարև էր ուղարկում:

Մի անգամ առավոտյան մայրիկը լրագիրը վերցրեց. հանկարծ դեմքը լրջացավ ու գունատվեց:

— Հայրիկն ո՞ւր է,— հարցրեց Իգան: Յեվ Իգան լսեց, թե ինչպես մի բան տը՛կ ընկավ լրագրի վրա: Դա մայրիկի արտասուքի կաթիլն էր...

— Շոգենավը խորտակվել է,— ասաց մայրիկը,— սառույցները սեղմել են շոգենավը, «Չեկյուսկինը» խորտակվել է:

— Իսկ հայրի՞կը,— հարցրեց Լյուդան:

— Մարդիկ բոլորն էլ բարձրացել են սառցի վրա: Միայն մեկն է խեղդվել:

— Բա ի՞նչ կանեն նրանք այնտեղ:

Իգան էլ նայեց քարտեզին, մայրիկն էլ, Լյուդան էլ: Բոլորն էլ նայեցին քարտեզին: Այնտեղ կապույտ գուլյնով նկարված էր բևեռային սառը ծովը:

Բայց ռադիո-հեռագրիչը, հայրիկը չէր վհատում: Նա նստած էր ճամբարային փոքրիկ վրանում. կարծես թե վոչինչ չէր պատահել: Նա մատներով հուպ էր տալիս իր գործիքի բանալին և ամբողջ աշխարհում տարածվում էր նրա տի-տի-տին:

Յեվ ամենքը ԽՍՀՄ-ում և փոքրիկ Լյուդան, և՛ ինքը՝ ընկեր Ստալինը լսում էին, կարդում, ու սպասում, թե ինչ կհաղորդի ռադիո-հեռագրիչը սառցադաշտից:

«Յերկրորդ օրն է, վոր չեկյուսկինցիներն ապրում են սառցի վրա: Գիշերը յերկինքը մաքրվեց ամպերից և մենք աստղերի միջոցով վորոշեցինք մեր տեղը քարտեզի վրա: Յերբ «Չեկյուսկինն» սկսեց ընկղմվել, մենք կտրտեցինք պարանները: Պարաններով կապված էին տակառները, տախտակները, բեռները: Այդ բոլորը ջրի յերեսը դուրս յեկան: Մենք ջրից հանեցինք գերանները և հիսուն մարդու համար տուն ենք կառուցում, վորը յերկու փոքրիկ վառարան է ունենալու: Խոհանոց ենք կառուցում: Մինչև ամիս հեռու յե: Չորս կողմը սառցի սարեր են: Բայց բոլորս էլ անողջ ենք ու քաջ»...

Յեվ շուտով ինքը հայրիկը ռադիոյով լսեց և պրոֆեսոր Շմիդտին ու իր մյուս ընկերներին հաղորդեց, վոր վողջ խորհրդային յերկիրը յելել է նրանց ոգնություն ցույց տալու: Ոգնության էին գնում շոգենավեր և սառցահատեր: Թռչում էին սավառնակներ ու դիրիժաբլներ: Սլանում էին շնասահակներ և անրոսահակներ:

Այժմ ամեն առավոտ Իգան եր վերցնում լրագիրը: Առաջ նա վազում էր պատուհանի մոտ և նայում ջերմաչափին:

— Տասնվեց աստիճան սառնամանիք է, — գոչում էր նա: — Յես այսօր սահելու կգնամ: Լավ սառույց է:

Իսկ այժմ նա նայում է լրագրին և տխուր ասում.

— Քառասո՛ւն աստիճան սառնամանիք է... Սառույցն ելի ճաքել է...

Մայրիկը նիհարեց, նա գիշերը չէր քնում, շարունակ անհանգստանում էր: Նա նայում էր քարտեզին և ա՛խ քաշում: Իգան ել էր տխուր: Մինչև անգամ Լյուդան ել սկսեց կամակորուժյուն անել: Միայն հայրիկը, ուրախ ռադիո-հեռագրիչը չէր վհատվում սառցի վրա: Նա ռադիոյով 'ուղարկում էր հանգստացնող ու զվարճալի հեռագրեր:

«Խնչպե՞ս է Իգայի դպրոցական հառաջադիմությունը: Լյուդան ամեն օր մաքրո՞ւմ է աբդյոք ատամները: Յես այստեղ ամեն օր մաքրում եմ: Յերեկ մի սպիտակ արջ սպանեցինք: Նրանից բարև ձեզ»:

Մայրիկը պատասխանեց.

«Արջի միսը ձեզ անուշ լինի: Իգան պարզեցատըրված հարվածային է: Սովորում է «չատ լավ»:

Հետո վրա հասավ առաջին ուրախալի օրը: Յերիտասարդ ողաչու Լյապիդեակին սավառնակով թռավ, յեկավ Շմիդտի սառցե ճամբարը: Չելյուսկինցիները վաղուց 'օր ու գիշեր աշխատում էին: Նրանք սառցի վրա տեղ էյին մաքրում և հրապարակ պատրաստում: Նրանք անհամբերությամբ սավառնակի էյին սպասում:

Ողաչուն իր սավառնակի մեջ նստեցրեց լագերում գտնվող կանանց և յերկու յերեխաների՝ Ալոչկային և փոքրիկ Կարինային: Վերջինս ծնվել էր նավում և

դեռ գետնի վրա չէր յեղել: Ասենք գետինը նրան շատ էլ հարկավոր չէր: Միևնույն է, նա դեռ ման գալ չգիտեր: Սակայն խիզախ ողաչու Լյապիդեակին ուրիշներին հետ նրան ել ցամաք բերեց, վո՛ր Կարինոչկան խորհրդային ամուր յերկրի վրա ման գալ սովորի:

Այդ օրը յերեխաները բակում հորինեցին ու յերգեցին այս վոտանավորը:

Ե՛յ, դո՛ւ, սառույց ցրտաչունչ,

Ովկիանոսը մի գնա,

Ովկիանոսը մի գնա.

Սավառնակը այնտեղ ել

կաբող է թռչել, հասնել:

Յեւ հենց այդ օրը բակում սկսվեց մի մեծ, նշանավոր խաղ — չելյուսկինցիներին ազատելը: Այդ խաղը հորինեցին Իգան և նրա ընկեր Պետիկը: Նա ողաչույի տղա յեր: Նա բակի աչքի ընկնող տղան էր: Սառցի ու ձյունի մի մեծ կույտի վրա, բակի մեջ, տաշեղներից ու փայտիկներից նրանք կառուցեցին Շմիդտի ճամբարը:

Սակայն բարկացկոտ դռնապահ Խարիտոնր յեկավ, ցախավելը թափահարեց և մրրիկի նման վորոտաց.

— Յես ձեզ... գոչեց նա: Իսկույն ձյունակույտից ցած իջեք: Սա ի՞նչ խաղ է:

Յերեխաները վիրավորված իջան ձյունակույտից: Բայց այդ ժամանակ աշխատանքից վերադարձավ հարեան Ֆյոդոր Յեգորիչը: Ֆյոդոր Յեգորիչին յերեխաները շատ էյին սիրում: Նրան բևեռային գործերի մեծ վարպետ էյին համարում, վորովհետև ամուր սիրում էր սովերի հովը, ցուրտ կվաս էր խմում և յերեխաներին պաղպղակով հյուրասիրում: Ֆյոդոր Յեգորիչը յերեխաներին պաշտպանեց:

— Ինչո՞ւ յես սրանց խաղը խանգարում: Ձյո՞ւնն էս ափսոսում:

— Անկարգութիւնն է, — գոչեց Խարիտոնը:

Յոդոր Յեզորիչը մոտեցավ յերեսաներին և հանդարտ ձայնով ասաց.

— Վոչի՛նչ, յերեսաներ, Խարիտոնը փոթորիկի նման է. արագ վրա կտա, կաղմկի, իսկ հետո կապուկի... քնելու: Իսկ յես ձեզ կհայտնեմ, թե յերբ կաբելի յե խաղալ և յերբ՝ վո՛չ: Իմ պատուհանից յերևում է, թե Խարիտոնը յերբ է գալիս:

Յեվ այդ որից սկսած՝ այսպես եյին անում. Յոդոր Յեզորիչը դուրս եր գալիս սանդուխքի վրա կանգնում և ասում.

— Տեսանելիութիւնը վատ է, բուք է գալիս և ամեն ինչ ավլում, թռչել չի՛ կարելի:

Յեվ յերեսաներն արդեն իմանում եյին, վոր բարկացկոտ Խարիտոնը գալիս է, պետք է ծլկել:

Բայց հաճախ Յոդոր Յեզորիչն՝ աչքով անելով ասում եր.

— Հորիզոնը մաքուր է. կարելի յե թռչել:

Յեվ այն ժամանակ յերեսաները խաղում եյին:

Ահա, վերջապես, խորհրդային ողաչունները ճեղքեցին սառնամանիքն ու բուքը և ուրախ ուղիւ-հեռազրիչն աշխարհով մեկ հաղորդեց, վոր Շմիդտի ճամբարի և ցամաքի միջև հաղորդակցութիւնն է սկսվել: Քաջ ողաչունները թողնում եյին ամուր յերկիրը և իջնում թափառող սառցի վրա: Սառույցն ամեն բոպե պատրաստ եր ջարդվելու, ճաքելու: Սառնակի դահուկների տակից սառույցը փախչում եր: Սառցակույտերի վրայով պետք է ծանր գործիքը քաշեյին: Յեվ ողաչունները քաշում եյին ու կրկին ողբարձրացնում՝ չեւոսկինցիններին ամուր, չոր յերկիր փոխադրելով:

Վերջը սառցի վրա վեց հոգի մնացին: Յեվ, ի՛հարկե, ուրախ ուղիւ հեռազրիչն ել մինչև վերջը մնաց:

Ուշ եր և մութ: Ողաչունները խոստացան հետևյալ առավոտ դալ և նրանց ել տանել: Ողաչունները թռան, գնացին: Ամայացած ճամբարում մնացին վեց մարդ և ութ շուն: Գիշերը վրա հասավ և հյուսիսային ծովի վրա ծագեց բևեռային աստղը: Նա Մոսկվայի վրա ել ծագեց և Մոսկվայի մարդիկ բևեռային աստղին նայելով, մտածում եյին սառցի վրա նստած վեց քաջերի մասին:

Իգան յերկար ժամանակ քնել չեր կարողանում. նա մտածում եր, թե ինչ սարսափելի յե գիշերը սառցի վրա...

Իգան աչքերը բաց պառկել եր: Նրան սկսեց թրվալ, վոր սենյակում ել են սառույցներ շարժվում:

Մյուսն որն առավոտյան մայրիկը գնաց հայրիկի մասին տեղեկութիւն իմանալու: Իգան դպրոցից վերադարձավ և Լյուդայի հետ գնաց բակը՝ սառցաբլրի վրա խաղալու: Յեկավ Պետիկը, յեկան մյուս յերեսաները: Բայց խաղալ չկարողացան: Փորձեցին սպիտակ արջեր վորսալ, բայց Պետիկի մայրը դուրս յեկավ ու ասաց, թե չի թողնի, վոր թավչե արջը դնեն կեղտոտ սառցի վրա:

Բայց հանկարծ պատուհանը բացվեց: Մայրիկը գլուխը դուրս հանեց և ուրախ ու գիլ ձայնով գոչեց.

— Յերեսանե՛ր, կարող եք խաղը շարունակել: Սառույցը դատարկ է: Վերջին մարդիկ թռել են այն տեղից: Յեվ ամենից վերջինները գի՞տեք ուլքեր են յեղել: Նավապետ Վորոնինը և մեր հայրիկը: Ահա թե ինչպիսի մարդիկ են ապրում մեր աշխարհում: Ահա թե ինչպիսի մարդ պետք է լինել, յերեսաներ: Լսեցե՛ք հայրիկի վերջին հեռազրիւրը:

«Բոլորից հետո հեռանում ենք սառցի վրայից: Շմիդտի ճամբարն այլևս գոյութիւն չունի: Վերջին խաբուկը հանգավ դատարկ սառցի վրա, աշտարակի գլխին մնաց միայն կարմիր դրոշակը»:

Հուլիսին, ինչպէս խոստացել էր, ուրախ ռադիո-հեռագրիչը վերադարձավ Մոսկվա: Նա վերադարձավ չեկոսակիւնցիներին և ողաչուներին՝ Խորհրդային Միութեան հերոսների հետ: Վողջ Մոսկվան գլխավորեց հերոսներին: Ռադիո-հեռագրիչն ապակե ամանով բեկեռային սառույց եր բերել: Դա մի կտորն էր այն սառույցի, վորի վրա չեկոսակիւնցիները յերկու և կես ամիս ապրել էին: Սառցի կտորի վրա յերևում էր մի մեծ ճանկ—սպանված սպիտակ արջի թաթի հետք: Այդ սառույցը նա բերել էր սավառնակով, չների սահնակով, շոգենամով, գնացքով: Ամեն տեղ նա ամանը սառցի մեջ էր դրել, վոր ընծան չհալվի: Յեվ նա ամանն անվնաս հասցրեց Մոսկվա՝ հատուկ վազոն-սառցարանով:

Հայրիկը յերկաթուղու կայարանից ուրախ և քախտավոր յեկավ տուն: Իգան և Լյուդան ծվծվում և թռչկոտում էին նրա շուրջը: Յերկուսն էլ շատ ե-յին ուզում իմանալ՝ բերե՞լ է արդյոք հայրիկը խոստացած սառցի կտորը: Նրանք քաղաքավարութունից լռում էին, բայց անհամբեր սպասում էին:

— Կացե՛ք, ընկերներ,—ասաց նա,—ամանն ո՞ւր է:

Ամանը հատակի վրա յեր, ճամպրուկի կողքին: Ռադիո-հեռագրիչն ամանը մոռացել էր: Հուլիսի ջերմ արեգակը տաքացրել էր ամանը և նրա հատակին, կեղտոտ ջրի մեջ, լողում էր մի մեծ սև ճանկ:

— Ահա քեզ հյուսիսային բեռնի մի կտոր: Հալ-վել է...— փնթփնթաց հայրիկը: Ինչպե՞ս է յեղել, վոր յես...

— Վոչինչ,—քաղաքավարի ասաց Իգան,—այնու-ամենայնիվ ճանկը չի հալվել:

Լյուդան փքվեց և քիչ մնաց լաց լինի:

— Մի րոպե,—լսվեց հարևան Ֆյոդոր Յեգորիչի ձայնը:— Տվե՛ք ամանը... Յես իսկույն...

Նա վերցրեց ամանը և իր սենյակը վազեց: Ֆյո-

դոր Յեգորիչն իսկույն վերադարձավ և սեղանի վրա դրեց քրտնած ամանը: Բոլորը զարմացան: Ամանում բեկեռային սառցի մի կտոր կար, վորի վրա յերևում էր արջի ճանկ:

— Լսեցե՛ք— ասաց ռադիո-հեռագրիչը,— աշխարհում հրաշքներ չեն լինում, այդ ի՞նչ արիք:

— Հասարակ բան,—պատասխանեց Ֆյոդոր Յեգորիչը:— Յես ցուրտ գործերի վարպետ եմ: Յես աշխատում եմ սառցարանում: Այնտեղ պատրաստում են արհեստական չոր սառույց: Այդպիսի սառույցը կարելի յե գրպանում պահել: Նա հալվում է, բայց չի հոսում, այլ ուղղակի ող է դառնում: Յեթե մի կտոր սառույց գցենք ջրի մեջ, ջուրն իսկույն կսառչի:

Բոլորն ուրախացած ծափ տվին:

Հետո հայրիկը հանկարծ նայեց Իգային:

— Դե՛, Իգա, մի քարտեզի մոտ կանգնի՛ր, տեսնեմ,— ասաց նա:

Իգայի գլուխն այժմ հասնում էր Հյուսիսային բեռնին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ճամպրուկ — ճանապարհորդական պայուսակ:
2. Կամակորուքյուն — իրեն ասածի լինելը, համառություն:
3. Վիտոել — հուսահատվել:
4. Կվա — հացից պատրաստած դովաջնոդ խմիչք:

ՀԱՐՑԵՐ

1. «Չեկոսակիւն» ինչո՞ւ մեկնեց Հյուսիսային ծովերը:
2. Ի՞նչ պատահեց «Չեկոսակիւն» և յերբ:
3. Ի՞նչ էր անում սառույցների վրա ռադիո-հեռագրիչը:
4. Հայրն ի՞նչպէս կատարեց յերեխաներին տված իր խոստումը:

5. Մեր կառավարութիւնն ու կուսակցութիւնն ի՞նչ արին չեկոսակինցիներին փրկելու համար:

6. Չեկոսակինյան արշավի հերոսներից ո՞ւմ անունը գիտե՞ք ի՞նչ կոչում ստացան նրանք:

—

1. Վերնադրեր դրե՞ք այս պատմվածքի առանձին մասերին:

2. Պատմեցե՞ք թե ինչ նոր խաղեր եյի՞ք խաղում դուք և ձեր ընկերները «Չեկոսակինի» արշավի ժամանակ:

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

1. Յերեխաներ— Ստալսկիյ Ս.	5
★ 2. Աղբյուրը— Թումանյան Հ.	6
3. Խաղողի այգում— Զորյան Ստ.	7
★ 4. Ջան, այ լուսին— Աղաբաբ Հ.	10
5. Գասպարյանի շարադրութիւնը— Ըստ Գսբնաճի	11
6. Տեր-Ավանեսի դպրոցը— Շիրվանզադե	13
★ 7. Անիծած հարսը— Թումանյան Հ.	15
8. Ջրանցքի բացումը— Ըստ Մ. Մանվելյանի	17
9. Առյուծն ու մարդը— Այդեկցի Վ.	20
10. Ճնճղուկը— Տուրգենև	21
★ 11. Մոծակի մահը— Խնկոյան Աթ.	22
12. Արաը— Ըստ Ստ. Զորյանի	24
13. Վանկա— Ըստ Ա. Զեխովի	26
★ 14. Յերկու ընկեր— Աղայան Ղ.	31
15. Փոքրիկ Գրետան— ***	32
★ 16. Հոկտեմբերիկների յերդը— Տ.-Ավագյան Հ.	37
17. Գելը— Թումանյան Հ.	38
★ 18. Խազն ու աղուավը— Խնկոյան Աթ.	42
19. Ճանապարհորդ Ջեկոն— Զորյան Ստ.	43
★ 20. Տղան և ողաչուն— Կուսալա Յա.	47
21. Հերոսների վարդը— Ստուդենեցկիյ	48
★ 22. Չարի վերջը— Թումանյան Հ.	51
23. Սուտլիկ վորսկանը— Թումանյան Հ.	57
24. Մաղայ պապն ու նապաստակները— Ըստ Նեկրասովի	59
25. Հերոս տղան— «Հասկեր»-ից	61
26. Գյուղի հեքիմը— Սիմակ	65
★ 27. Կապիկն ու ակնոցները— Կոելով Ի.	68

28. Տերն ու ծառան— Թումանյան Հ.	69
29. Առաջին ավտոն— ըստ Գ. Աբովի	75
★ 30. Ազնալն ու աղվեսը— Խնկոյան Աթ.	81
31. Յերկաթուղին— ըստ Զորյանի	83
32. Վերադարձ— Լորդկիպանիձե	86
★ 33. Լուսաբացին— Հակոբյան Հ.	90
34. Վլ. Իլյիչի պատանեկությունը— Ուլյանովա Ա.	92
35. Ինչու յեմ սիրում Ստալինին— «Մուրղիկա»-ից	95
36. Հիշողություն Ստալինի մասին— Թխովինիձե	100
37. Ընկեր Սերգոյի նվերը— «Պիոն. Պրավդա»-ից	102
38. Մեզ մոտ բոլորը հավասար են— «Մուրղիկա»-ից	103
39. Փետրավոր կապը «Պիոն. Պրավդա»-ից	105
40. Յերկու Արև— Ել. Պոլու Մորգլինով	107
★ 41. Գարնան հրավեր— Թումանյան Հ.	113
42. Լինա Ողենա— ըստ «Պիոներ Կանչ»-ի	114
43. «Հանցագործը»— Դարբինյան Մ.	116
★ 44. Վաղ դարնանը— Տ. Ավագյան Հ.	120
45. Տրակտոր— Սիմակ	121
★ 46. Ծաղիկն ու մեղուն— Կորյուն Մ.	124
47. Անձնագոհ նավաստին— Ստանյուկովիչ	127
★ 48. Լուսաբեմին— Խնկոյան Աթ.	132
★ 49. Լուսնակն անուշ— Ժողովրդական	132
50. Քաջ նապաստակը— Մամին-Սիբիրյակ	133
★ 51. Ծիծեռնակին— Խնկոյան Աթ.	136
★ 52. Վարդը— Գյոթե Վ.	137
53. Արտասովոր յեղջերուն— Ռասպե	138
★ 54. Գարնանը— Հայրապետյան Հ. ✓ 9	139
★ 55. Առավոտը— Խնկոյան Աթ.	139
56. Մայիսի մեկն աքսորում— «Պիոն. Պրավդա»-ից	140
57. Կարմիր արագիլ— ըստ Զորյանի	141
58. Բուդյոնին յերեխաների հետ— ըստ Լ. Կասսիլի	147
★ 59. Սաք զնալը— Միրաբյան Վ.	152
★ 60. Ամառվա արևը— Տ. Ավագյան Հ.	157
61. Զալանկը— Զորյան Ստ.	157

★ 62. Ծաղիկների յերեկույթը— «Լուսաբեր»-ից	162
63. Արևի խավարումը— «Հոկտեմբերիկ»-ից	166
★ 64. Սասունցի Դավիթը դառնարած— Թումանյան Հ.	169
65. Սահմանադժի վրա— Շմուկեիչ	173
★ 66. Ծաղկաձորում— Կորյուն Մ.	176
★ 67. Վոսկի ձկնիկ— Պուշկին Ա. (Թարգմ. Աղայան Ղ.)	176
★ 68. Զորս յեղանակ— Աղայան Ղ.	188
69. Յրտաշունչ սառույց— Կասսիլ Լ.	189

Աստղանիշ (★) նյութերը չափաժողոված են:



4092

Handwritten text, possibly a title or description, located at the top center of the page.

Handwritten marks, possibly initials or a signature, located on the left side of the page.

Handwritten marks, possibly initials or a signature, located in the center of the page.

Handwritten text, possibly a title or description, located at the bottom of the page.

ՀՀ Ազգային գրադարան



NL0243267

ԳԻՆԸ 1—35 Կ.
ԿԱԶՄԸ 45 Կ.

892

9401

Учебник Армянского языка
для 3 класса
Гиз Арм. ССР. Ереван 1937 г.